


2759



ՀՐԱԶԵԱ ՔՈԶԱՄ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴՅԱՆ

ՊԵՏՐԱՅԻ
1934



4828

ՀՐԱՄԱՆ ԲՈՉԱՐ

ՎԱՀԱՆ ՎՈՐԴՅԱՆ

(Վիպակ)

A ~~19424~~
835X



1984

ԳԱԼՈՎԱՅՐ

ՏԱՐՏԱՐ

Պատ. իմբ. Սուր. Հաբությունյան
Ալբագրեցին՝ Ս. Փարսագոնիան և Ս. Քեչյան
Դւավիթ 8:30, պատվեր 276, հրատ. 2962, տիքոս 3000

Պատճեռութիւն տպարան, Յեղեղան

ՎԱՀԱՆ ՎԱՐԴՅԱՆ

ՀԱՎԵՏ ՍԻՐԵԼԻ ՎԱՐՄԻԿԻՆ

Յերբորդ որն եր, ինչ պառկում եր նա այդ
խշխան ներքնակի վրա: Վաս չեր իհարկե:
Ամեն անգամ շարժվելիս, յերբ ներքնակը խըշ-
խըշում եր, նրան թվում եր, թե մի հաճելի բան
և կատարվում: Խոտովլ լցված ներքնակը ծած-
կըված եր մաքուր, սալիտակ սավանով: Փա-
փուկ, նույնիսկ աղայական անկողինը թողնե-
լով, նա այժմ պառկում եր խոտի ներքնակին,
բայց ամեննեին տհաճ բան չեր զգում դրանից:
Ամոթ ել կլիներ, յեթե զգար: Դա ի՞նչ զժվա-
րություն եր, վորին նա դիմանալ չկարողա-
նար:

Յեվ յերբորդ որն եր, ինչ պառկում եր նա
այդ ներքնակի վրա ու չեր թաղվում մեջը:
Իրենն այդպես չեր: Թաղվում եր նա իր ներք-
նակում ու վայրկենապես դադարում առորյա-
յի վորեե բանի մասին մտածելուց: Ընկղմում
եր իր փափուկ ներքնակում և թվում եր թե
ողի մեջ ե պառկած: Վոչ թե անկողնակալի ա-
ռաճդականության ու փափուկ անկողու, այլ
ողում ճոճվող ճլորթի մեջ եր զգում իրեն:

Այդպես եր յերեք որ առաջ, իսկ հիմա

այդպես չեւ։ Պառկում եւ նա խշխացող ներքնա-
կի վրա ու դեռ պետք եւ պառկի 10 ամիս 27 որ
ել։ Ընդամենը 11 ամիս եւ, բայց 3 որն արդեն
անցել եւ։

Նա միամյակ եւ . . . Մի տարի յեւ մնալու բա-
նակում։

Պառկած եւ նա հիմա խոտեն ներքնակի վրա։
Վաղուց արդեն բոլորը քնել են։ Շրջվում եւ ան-
կողնում, սախզում եւ ինքն իրեն քնել, խփում եւ
կոպերն ուժով, բայց վորքան ճիգ եւ դործ դը-
նում, քնի թմիրն այնքան հեռու յեւ փախչում
նրանից։ Աղյալը քաշում եւ դիմին։ Այդպես նա
աչքերը կծածկի լույսից ու հեշտ կքնի։ Բայց
մի քանի բոզե հետո ելի յետ եւ դցում նա աղ-
յալն ու նայում ժամացույցին։

— Ֆո՞ւ, սատանան տանի, յես չսովորեցի
ժամի 9-ին քնել։ Մեկ, յերկու, յերեք. — արդեն
յերեք ժամ եւ անցել ժամի 9-ից, — բարիսնում
եւ նա ինքն իր վրա եւ այս անդամ ակնառիշ նա-
յում առաստաղին, կարծես մի աննկատելի
կետ եւ փնտում այնտեղ ու չի դտնում։

Լուսամուտը բացվում եւ քաղաքի դյումա-
վոր մողոցներից մեկի վրա։ Այդ լուսամուտից
ուշ յերեկոյան նայում եւ նա փողոց։ Նա մոռա-
ցել եւ, թե յերեք ժամում քանի անդամ եւ ձգյել
դեպի լուսամուտը՝ փողոց նայելու։ Ամեն ան-
դամ դուրս եւ նայում հետաքրքրական մի բան
տեսնելու ակնկալությամբ, բայց դատարկ
փողոցի լուսամուտը ընկճում նրան։ Վորքան
կուզեր ազատ լինել նա, թեկուզ այդ դատարկ

փողոցում աննպատակ թափառելու։ Բայց վաղ
եր դա, յերբ նրան թվում եր, վոր յերկրի բո-
լոր մարմինները կարող եյին իր քմահաճույք-
ների շուրջը պատվել. ինչպես քամու մեջ ըն-
կած փոշու ու թղթի մանր կտրոնները։ Իսկ այ-
ժը նա չգիտեր թե ինչո՞ւ, թվում եր, վոր
ինքն ել, վորպես փոշու մի հատիկ, կամ թղթի
մի կտոր՝ պատվում ե ահա այն մարդու քմա-
հաճույքի շուրջը, վորը յերեք մահճակալ այն
կողմն և պառկած իրենից։

Չորանոցի ավագի քմահաճույքի շուրջը։
Նրան չեր թույլատրվում քաղաք գնալ։
Յերեխի այդ եր պատճառը, վոր նրա ուղեղում
շարունակաբար մի միտք եր պատվում։ Ինչպես
ամբողջ ուժով աշխատում եր նա քնել, այդպես
ել աշխատում եր ազատվել այդ մտքից։ Բայց
մի քանի բոպե միայն կարողանալով ուրիշ բա-
նի մասին մտածել, ելի վերադառնում եր նա
նույն մտքին։ Այդ միտքը մղում եր նրան դեպի
քաղաք, դեպի փողոցները։ Յեվ այդ, ամենից
առաջ այդ միտքն եր նրան արթուն պահում
ժամերով։ Քիչ եր մնում, վոր նա կոշմարի
յինթարկվեր։

Ինքն ել արդեն չղիտեր, թե ինչու սկսեց
դրա մասին մտածել, թե ինչպես և ինչից այդ
միտքն հղացավ իր ուղեղում ու ներծծվեց սւ-
ղեղի բոլոր ծալքերի մեջ։

Չկարողանալով քնել ու ազատվել այդ
ճնշող մտքից, նա ջղաձգորեն ելի յետ նետեց
աղյալը։ Յետ նետեց և այս անդամ նստեց ան-

քի, նրա շրթունքները պինդ կկծեմ և նա յել չի
ասի.

— Թու, անամո՛թ, հիմա՛ր, եղակես բա՞ն
կանեն...

Սրա մասին, յերեք ժամից ավել ե, ինչ
որա մասին եմ մտածում: Հիմար բան ե, իհար-
կե: Կարծես մանիայով եմ բռնված: Բարկա-
նում եմ ինձ վրա, վոր այսպիսի ստոր մտքե-
րով ե լցվում գլուխս մեկի մասին, վորը վար-
դադույն հույսի պես քաղցր ե ինձ համար ու
վարդի չափ ել սիրելի:

Ժամանակն անցնում ե:

— Երօս՝ ասում եմ ինքս ինձ,— брось
ամոթ ե, ինչպես ես թույլ տալիս քեզ: Բայց
մի քանի վայրկյան հետո՝ ելի նույն միտքը: Մի
քանի վայրկյան հետո՝ ելի դուքս եմ նայում
լուսամուտից՝ արդյոք հենց այս փողոցում
չեմ տեսնի նրան»...

Ուշ գիշեր եր: Շատ ուշ: Առաստաղի սպի-
տակ ֆոնի վրա նրա աչքին յերեացող սիուլետ-
ներն ու ֆիգուրները դառնում եյին խաժա-
մուժ, ճուլմում իրար, սև, դեղին ու կանաչ
դույնի գծերով փովում առաստաղին, ապա՝
առաստաղը սվաղվում եր խառնիճաղանձ դույ-
ներով:

Ուշ գիշեր եր: Լսում եր նա կողքին քնած
ընկերների շնչառությունը: Ահա մեկը: Փըս-
փըսում ե: Կարծես գաղտնիքներ ե հաղորդում
իր կողքի մահճակալի վրա պառկածին, վոր

կողնում։ Վոչ վոք շարթնացավ։ Լուսամուտից նա տեսալ դունաստ լուսինը, սառն ժայխտը դեմքին։ Լուսամուտից վերցրեց տետրակը և անկողնու վրա զնելով, դրեց այդ որվա ոբադրի շարունակությունը։

«Գիտեմ, վոր անհարմար եւ սա դըն թղթերիս մեջ, բայց վորովհետև գիտեմ, վոր միայն յես պետք եւ կարդամ գրածներս և վոչ մեկ ուրիշը, ուրեմն՝ կարող եմ դրել։

Յես, իհարկե, հարյուր տոկոսով հավատում եմ Լյուբայի, իմ Լյուբինկայի հավատարմությանը։ Ինչպե՞ս կարող եւ պատահել, վոր նա բացի ինձանից ապրի ու շնչի ուրիշով ել….

Բայց վո՞րանդից այդ միտքը զղուխս մըտավ։ Կարծես արդեն հավատում եմ այդ սին մտապատրանքին։ Հավատում եմ, վոր յեթե քաղաք դուրս դամ, առաջին պատահած վողոցում Լյուբային կտեսնեմ մի ուրիշի հետ թե՛վանցուկ։ Լյուբան կկարմը, ցնցումով թեր կպոկի նրանից ու աչքերի պղտոր արտահայտությամբ ինձ կնայի։ Ինձ ծանոթ, կամ անծանոթ տղան ել կվախենա ինձանից ու Լյուբայից հեռու կքաշի։ Խոկ յես վոտք դետին կղարկեմ, կրաքանամ Լյուբայի վրա, յերրնա, այդ տղան արդեն զնացած լինի, ու յետ կը ամ։ Լյուբան կդա յետեիցս, կինդը ի ինձ, վոր կանզնեմ։ Յես կկանզնեմ։ Լյուբան հայցքով ներողամտություն կը հայցի ինձնից։ Յես, վորակես պատիժ նրա այդ գողունի արար-

ուրիշները չլսեն։ Ինչպես յերեռւմ է, քնի մեջ
խոսելը նրա սովորությունն եւ։

Կիսաբաց լուսամուտից սառ ողն ալիքնե-
րով ներս եր հորդում դուրեկան թարմու-
թյամբ։ Սրտերն ու ժամացույցն իրենց զարկե-
րով հաշվում եյին հալվող ժամանակը։ Արդեն
ծանրանում եյին նրա կոպերը։ Մի քանի բովե
հետո նա արդեն քնած կլիներ։ Բայց մի վաս
դղացմունք ծանրությամբ նօտել եր նրա սըր-
տին։

Քնեց նա, այդ վատ զգացմունքը սրտում,
այնտեղից նա դուրս վանել չկարողացավ՝
նրան։

Քաղաքի ուշ աշունն եր։ Զմեռնամուտը։
Նրան թվում եր, վոր յեթե արևի սրտի ջերմն և
տաքացնում յերկիրը, ուրեմն անսահմանու-
թյան չափ մեծ մի մաղով ձյուն եր մաղիվում ա-
րևի սրտին։ Դրա համար ել թուլանում եր ա-
րևի սրտի ջերմության ուժը և արևը չեր այ-
բում։

Նա արյեստի յերկրուադու չեց լինի, յեթե
այդպես պատկերներով չմտածեր։ Յեմ, յեթե
կուղեք, հանուն այդ պատկերների յել նա չու-
զեց ոգտվել իր արտոնությունից։ Կարող եր մի
վկայական ներկայացնել, վոր հիրավի լյու-
րան հղի յե և կաղատվեր բանակի ծառայու-
թյունից։ Բայց չուղեց։ Չուղեց, վորովհետեւ

այդ տասնումեկ ամսվա կյանքը ստեղծագործական վոգևորության հորդահռո մի աղբյուր էլիներ նրա համար: Այդպես եր մտածում նա և այդ հույսերն եղ նրան մինչև իսկ թույլ չտվեցին մտածել իր՝ բանակից աղատվելու արտոնությունից ոգտվելու մասին: Հրաժարվել այն մտահղացումներից ու վորոշակերպեն ուրվապերփող հեռանկարներից, վորոնք բանակ դալու հետ եյին կապված, կնշանակեր արվեստից հրաժարվել: Իսկ դա տղիտության պես անտանելի բան կղառնար: Տղիտությունն ամենաանհանդուրժելի բանն ե նրա համար, նա տանել չի կարողանում տղիտությունն ու տղետարդիանց:

Այդ որն արեի ճառագայթներն հաղիվ եյին տաքության թեթև մի ալիք ստեղծում նրա մաշկի տակ: Այդպես եր լինում, յերբ Լյուրան թեթևորեն շոյում եր նրա ճակատը, յերբ ձեռքը նա չեր հպուժ ճակատին: Յերբ հպում եր Լյուրան իր ձեռքը նրա ճակատին, արեի ամրող կրակը նրա կրծքի մեջ եր լցվում:

Այդ որն արեի ճառագայթները հաղիվ եյին ջերմի թեթև մի ալիք ստեղծում: Արել սառցի կլորակ մի զանդմածի պես զողում եր բաց դորշագույն ամպերի ծալքերի միջով՝ դեպի ներքեվ: Քաղաքի շենքերն ու լուսամուտների փեղկերը ներկվել եյին դեղինով: Լսում եր նա քաղաքի հիմնական պողոտայի՝ ծառերի չոր ճարճատյունը: Տերեաթափիր վերջացել եր ե քամուց իրար կալչող ճյուղերը չոր ճարճատ-

յուն և յին արձակում։ Նա ուշ յերեկոներին, յերբ մարում ելին դեղին շողերն հեռու հորիդոնի վրա, ունկընդրում եր այդ ձայնը և կտոր ներ արտասանում Սերդեյ Յեսենինից։

Այդ որն ել այդպես եր։ Նա մտածում եր, կարծես ախրում։ Հայացքը հառելով վերջալույսի արնազույն ամպերին, բարձր, ինչպես արտիստը, արտասանում եր «ցնծա արվեստապետ—նկարիչ, ի՞նչ սքանչելի պատկերներ են»...

Արտասանում եր, ապա թիկնած լուսամուտին սուզվում եր մտքերի մեջ ու այս անդամ կրկնում նույնը, բայց մեղմ ձայնով։ «Ի՞նչ վառահեղ պատկերներ են»...

Ելի յերեկո յեր։ Արդեն յերկու ժամ եր անցել այն բոտելից, յերբ նա շոել եր։ «Քնել, պարտադիր քուն և հայտարարվում»։

Քնել ելին բոլորը, բացի նրանից։ Նա ելի արձակել եր իր խոհերի կծիկը։

Սենյակը կիսախավար եր։ Հբոմանով ելեկարական լույսը պետք է վտա միար մինչև առավոտ։

Բայց վորովհետեւ նրա ներվոլոգիական սիստեմը լույսին չղիմանալու առանձնահատկություններ ուներ, վորից զուրկ ելին մյուսների ներվերը, յերբ քնեցին, նա ելեկարական լամպը թղթով վաթաթեց։

— Ռւբեմն հրամանի խախոտում կատարեցի, ծիծաղս դալիս ե... — ծիծաղեց նա քթիտակ և քաշեց տեսրն անկողնու տակից։

«Անենյակը կիսախավար է, իսկ խավարում միտքն ավելի արագ և թռիչքներ գործում։ Այդպես ե ասել չդիտնմ վոր գրողը։ Իսկապես, վոր այդպես ե։ Իմ միտքն հիմա յերեակայությունիցո ել արագ թռիչքներ ե գործում մասնավանդ, յերբ աչքերս հառում եմ առաստաղին ու սենաակի ակս գամում մի կետի։

Ընթերզող, ասում եմ ինքս ինձ (վորովհետեւ գրածիս ընթերցողը միայն յես կլինեմ), ընթերցող, դու պատկերացրու կիսախավար մի սենյակ, շարքով ու կանոնավոր գրված քսան մահճակալ ու յուրաքանչյուրի վրա՝ քնած յերիտասարդ մի մարդ։ Մի քանիսի դեմքին հողնույթ ե նստել։ Այսոր մենք չորս ժամ շարքային վարժություններ ենք արել։ Իսկ մյուսները ժողովում են, կարծես ինչ վոր յերանության հույսով են քնել։ Մեկն ահա, լավ ե անունն ասեմ Հքայը Քարամյանը, քնած ժամանակն ել ցույց ե տալիս, մոր մտքի մարդ ե։ Խելոք ու իմաստալից արտահայտությամբ լեցուն ե նրա կիսաժաղիտը։

Մտքներն ալիքներով են լցվում ուղեղիս մեջ. բոլորը քնած են։ Արթուն և մնացել միայն մեկը, խոհերով, խորախորհուրդ մտքներով ու գեղնցիկություններով ապրելու համար, կամ ավելի ճիշտ ե ասել, նրանով տանջվելու ելի մի քանի ժամ։ Դա յես եմ։ Յերնկո, կիսախավարի մեջ այդ պատկերը։ Յեկ յես ասում եմ ինքս ինձ. «ցնծա, նկարիչ ինչ փառահեղ պատկեր ե»։

Աղյալի տակից դուրս մնացած գլուխս
պետք ե այնպես նկարեմ, վորակեսղի զդացվի,
վոր նա խորհող ու դժացող արվեստադետի
գլուխ ե, վորակեսղի նկարը դիտելիս իմանան,
վոր կարմիր բանակում, վորակես հասարակ,
այո՛, հասարակ բանակային, անգամ արվես-
տադետն ե մտնում և վոր արվեստը վոչ միայն
հասկանալ, այլև կատարելապես յուրացնել կա-
րող ե նաև հասարակ, այո՛, հասարակ բանա-
կայինն ել, ինչպես որինակ յես ե ինչպես
Հրայր Քարամյանը:

Ինչ լավ, վոր յես նրա հետ միասին ընկա:
Ինձ չհաշված՝ նա միակն ե մեզ մոտ, վոր հաս-
կանում ե արվեստից: Կարծեմ նույնիսկ գրում
ե: Ու, բացի դրանից, ինչքան ել համակրելի
ընկեր ե: Իմ առաջին տպավորությունն ե այդ
ե համոզված եմ, վոր չեմ հուսախարսի: Ան-
կարելի յե, վոր յես նրա մեջ վատ բան տես-
նեմ:

Հրայրի Ժպիտը...

Եես պետք ե նկարեմ նրա դեմքը, անպայ-
ման պետք ե նկարեմ նրա մշտածիծաղ դեմքը:
Այդ առիթ կի ինի, վոր մենք ամելի մտելում-
նանք: Եեվ ինչքան ել հեշտ ծանոթացանք»...

Ու նա հիշում ե, թե ինչպես ծանոթացավ
Հրայր Քարամյանի հետ, աշխատում ե չմոռա-
նալ դեպքի մանրամասնությունները:

Եերկուսով մի հին բանակայինի հետ բաղ-
նիք ելին գնում: Դեռ քաղաքացիական հա-

դուստներով։ Նա Քարամյանին եր նայում ու չեր կարողանում հիշել, թե վորտեղ ե տեսել նրան։ Դեմքը՝ ծանոթ ե, այդ գեմքի դիմադժերը նա տեսել ե շատ անդամ, նույնիսկ կարծես հարազատ են այդ դիմադժերը։ Մի քանի անդամ նա փորձեց հարցնել Քարամյանին, թե արդյոք իրեն չի՞ ճանաչում, բայց վորպեսզե ինքը մտածի ու դանի, չհարցրեց։ Վերադարձին, յերբ դինմորական համազգեստ եյին հաղել, նա արդեն մոռացել եր, վոր վորոշել ե Քարամյանից հարցնել նրա ով լինելը։ Համազգեստից նա և' տհաճ բան եր զգում և' ամաչում։ Հանկարծ վորեւ ընկերուհի այդպես չտեսնի՞ իրեն, այդպես կոսկիտ սապողներով, կաշվե հաստ ու լայն գոտիով, կոմունարկան մինչև ականջները։ Մինչ նա մտածում եր, վոր մի քանի քայլ հետո նրբախողոցով կանցնեն ու ել վոչ վոքի չի հանդիպի, Քարամյանը հարցրեց։

— Դուք վո՞րտեղ եյիք աշխատում։

— Յե՞ս, — հարցրեց նա, — ինչո՞ւ յեք հարցնում։

— Զե վոր մենք միասին ենք լինելու, պետք չե՞, վոր ծանոթանանք։

— Ինչո՞ւ չե, ինչո՞ւ չե, վրա բերեց նա միոթված, — Վահան Վարդյան, յես նկարիչ եմ, նոր եմ ավարտել։

— Հա՞,— ժպտաց Քարամյանը։

Վարդյանը թեթևացել եր։ Արդեն նրբախողոցով եյին գնում, և բացի դրանից, վերջապես առիթ յեղավ, վոր նա Քարամյանի հետ

խոսի, ճանաչի նրան: Վարդյանը մտածում եր, վոր հերթն իրենն ե, վոր հիմա յել ինքը պետք ե հետաքրքրովի Քարամյանով: Հենց այնեւ, նա ուղում եր խոսել, յերբ տեսավ, վոր դիմացից դալիս ե իր նկարիչ ընկերը: Դեռ մի քանի քայլ հեռվից ժպտում եր նա: Վարդյանը ժպիտով պատասխանեց նրա ժպտալուն: Յեվ ի՞նչ: Յերր մոտ յեկավ, ընկերը, փոխանակ Վարդյանի ձեռքը սեղմելու, առաջին անգամ սեղմեց Քարամյանի ձեռքը, իսկ Վարդյանին բարեկց սովորականի նման:

— Բանակայի՞ն դարձաք, Հրայր, — հարցնում եր նա Քարամյանին, Վարդյանին անուշադրության թողնելով, — լա՞վ ե...

Վարդյանի աչքերում սառել եր զարմանքը: Ինչպես ե, վոր իր ընկերն այդքան մտերիմ ե Քարամյանի հետ, իսկ ինքը նրան չի ճանաչում: Ո՞վ ե Քարամյանը: Ինչո՞յն և դրազվել նա նախքան բանակ դալը:

Վորպեսզի գոհացում առ իր մեջ ծաղող այդ հարցերին, նա յետ ընկավ մի քանի քայլով, ընկերոջից Քարամյանի մասին հարցնելու:

— Ո՞վ ե դա, — հարցըց նա աչքերը կկոցած, Քարամյանի յետեկոց նայելով:

— Ինչպե՞ս, չե՞ս ճանաչում, Հրայր Քարամյանն ե:

— Այսինքն ո՞վ ե Հրայր Քարամյանը:

Ընկերը մի քանի խոսքով պատմեց, թե ով ե Հրայր Քարամյանը: Այդ ծանոթացումն ավելի ուժեղացրեց Վարդյանի ցանկությունը՝

Քարամյանի հետ խոսելու։ Վարդյանը վաղեց
Հասնելու Քարամյանին, մոջում կրկնելով։

— Աւքեմն արժի, արժի Հրայր Քարամ-
յանի հետ մտերմանալ։

Նա յերկար չարչարվում եր վորեև հետա-
քրքրական նյութի շուրջ խոսք բանալ, բայց
չեր զանում այդ նյութը։ Ի մերջո հարցըք։

— Ի՞նչ եք կարծում, ինձ թվում ե, վոր
տիսուր չե լինի, չե՞։ — Քարամյանը քմծիծա-
ղով ժպառաց։

— Ի՞նչ եք ասում տո՞ւ, — պատասխանեց
Քարամյանը. — իհարկե՞ չե։

... «Ձե, յես անպայման պետք ե նկարեմ
նրա աշխապես լավ առնական դեմքն ու նրա ժայի-
տը» — մտածում եր Վարդյանն այդ ըողեցին։
Բայց ինչ տղեղություն կլինի նկարի մեջ։ Վար-
յանը հանկարծ զգաց դա։ Յեթե նկարի զո-
րանոցը, պետք ե նկարի նաև Հովոյին։ Նա Քա-
րամյանի իոդքի մահճակալի վրա յե պառկում։
Ի՞նչպես Վարդյանը կարող ե նկարել նրա հի-
մարական արտահայտություն ունեցող դեմքը։
Վարդյանը չի սիրում տղեղությունն ու տղե-
տությունը։

— Տղիտությո՞ւն... չե վոր ագիտու-
թյունը թշնամի յե գեղեցկությանը։ Յեթե
ընդունակ ես պաշտելու գեղեցկությունը, ըն-
դունակ յեղիր նաև ագիտությունը չհանդուր-
ժելու, — առել ե նա բազմիցս իր բաժականառե-
րում շիկահեր և մատնոցների չափ քթեր ունե-

ցող աղջիկներով շրջառատված քեֆառելանի
առաջ.— կորչի տղիտությունն ու տղեղու-
թյունն հանդուրժող միտքն ել,— յեղբափակել
ենա իր խոսքը աղմկալի ծափերից հետո, և
աղահությամբ մինչև մրուրն ըմպել ե հեղու-
կը: Այդպես ե ասել նա: Իսկ հետո, ամիսներ,
տարի հետո, սովորել ե դրանց ավելացնել:

— Ո՞վ ե ասել, վոր մեր իդեոլոգիան ել
դա չի պահանջում...

Արդեն ժամի մեկն ե և դեռ Վարդյանը
քնած չե: Անքնությունից դմբում ե նրա գլու-
խը: Գիվուն ե լսվում զորանոցի լոռության մեջ: Ասում են, վոր դա անցնող ժամանակի ձայնն ե:

Վարդյանն աչքերն անթարթ հառել ե ա-
ռաստաղին: Այն ի՞նչ զուսանկար ե առաստա-
ղին փակցված, վոր նայում ե վար, ուղիղ նրա
աչքերի մեջ... Լուսանկարը մեծանում է: Վար-
դյանն արդեն փակել ե իր աչքերը: Բայց խը-
փած աչքերով ավելի պարզ ե յերեսում լուսա-
նկարը: Ապա այդ լուսանկարը դառնում ե կեն-
դանի դեմք, ինդանի դեմք՝ աղջկական դայ-
թակղող ժողիտը շրթունքներին: Սևաչյա աղ-
ջիկ, թուխ խոպոպներով գեղեցկուհի, դո՞ւ յես
այդ: Այո՛, դա Լյուբան ե... ժպտում ե նա,
վոր այտի վրա ելի յերեա փոսիկը: Խորամաննե
Լյուբա: Զե՞ վոր այդպես Վահան Վարդյանն
ավելի շատ ե համբուրում քեզ: Ժպտում ե Լյու-
բան ե աչքերը փակած, Վարդյանը տեսնում ե
նրա այտերի նուրբ մկանների այն խրճիկների
կծկվելը, վոր այնքան փորձել ե ու նկարել չի

կարողացել : Հիմա ինչքան լավ դտել է : Կեարո-
դանա նկարել նրան, նկարել այնպես, վոր
նկարը լինի ինքը, կենդանի ու չարաճճի Լյու-
րան, չար աչքներով, այտի փոսիկով, ժպտացող
ըմթունքներով ու թուխ խոզոպներով . . .


Բայց Վարդյանը բացում է աչքերն ու ճեր-
մակ տասատադին և միայն յերեռում կիսով չափ
ծածկված այն օտավերով, վոր զամալին փա-
թաթված թուղթն ե գցել նրա վրա :

Լյուրան չկա . . .

Վարդյանն սթափիվում է : Նա հիշում է ինչ-
որ մի այդպիսի պատրանք ուրիշ անդամ ել :
Այդ յե՞րբ եր : Յե՞րբ :

Ո՞, տարիներ են անցել, ջրեր են հոսել :
Վահան Վարդյանը տասնեւհինգ տարեկան եր,
յերբ առաջին անգամ համբուրեց աղջկա, մեկն
այն աղջիկներից, վորոնք մատնոցի նման փոքր
քիթ ունեն, բայց ունեն շեկ վարսերի դեղ, կլոր
դեղ, ինչպես սոճու փնջաճև սաղարթը :

Վահան Վարդյանը չի հիշում, թե ինչպես
նա տասնեւինգ տարեկան դարձավ : Հիշում է
միայն, վոր մինչև տասնեւինգ տարեկան դառ-
նալը մի անգամ փոքրիկ մի աղջկա մերկացրեց
ու թքեց նրա վրա, վոր դրա համար պապան
նրան ծեծեց : Հիշում է, վոր իրենց սենյակում,
յերբ այնտեղ վոչ վոք չկար, նա սեղանի տիմ
մտցրեց հարեանի աղջկան, տասը տարեկան
աղջկան ու ինքն ել այնտեղ մտավ . . . վոր դրա
համար ել մամայից ծեծ կերավ : Բայց իսկա-



կան, առաջին համբույրը նա համարում ե այն
համբույրը, վոր քաղեց փնջաձև սաղարթի նման
մազեր ունեցող խարտյաշ աղջկա քաղցր շըր-
թունքներից: Այդ ժամանակ նա տասնեւհինգ
տարեկան եր: Այդ ժամանակ նա առաջին ան-
դամ զգաց, վոր ինքն արու մարդ ե և զործ ունի
կնոջ հետ: Այդ որը նա սուլելով զբոսնեց քա-
ղաքի փողոցներում մինչև ուշ գիշեր, իսկ յերր
անկողին մտավ, չկարողացավ քնել: Յեղավ
բոպե, վոր նա վոչ քնած եր, վոչ արթուն: Ահա
թագնված ե նա, այն աղջիկը, բուլվարի փըս-
փըսող սոսնիների տակ, թագնվել ե մեղրածոր
ժպիտը շրթունքներին: Վահան Վարդյանը
նրան այդ ժպիտի պես քաղցր խոսքեր ասաց
աղջկա մայրենի լեզվով և ամուր գրկեց: Ամուր
գրկեց, շրթունքները հպեց նրա աչքերին և արթ
նացավ: Վոչ վոք չկար իր սենյակում: Պապա-
յի ու մամայի սենյակում լույսը վառվում եր:
Վահան Վարդյանն այդ որը չքնեց մինչև լու-
սադեմ և այդ որն ել սկիզբն ե նրա իսկական
կյանքի: Նրանից առաջ Վահան Վարդյանը
կյանք չի ունեցել, նա ինքն այդպես ե համա-
րում:

Հինգ տարիներ հոսեցին այդ որվանից: Այդ
հինգ տարում այնքան փորձություններ ունե-
ցավ նա, վոր բոլորը վերհիշել չի կարող, մա-
նավանդ, վոր նրանցից շատերը դատապարտե-
լի յեն: Այո, ինքը Վարդյանը դատապարտում
ե իրեն իր պատանեկության այնպիսի սխալ-
ների համար, ինչպես որինակ այն սխալի, վոր

ինքը թղթախաղում տարվել և իր գեղեցկուհի սիրուհուն: Թղթախաղում տարվել և վորովհետեւ նա խաղի մեջ կեղծ չի յեղել, խուսափել և սիրուհուց, վոր ընկերը մտերմանա նրան: Այդպես ել վարվել և ընկերը: Բայց ինչի են Հարկավոր դրանք, ինչու Վարդյանը դրանք վերհիշի:

Նայում ե Վարդյանն առաստաղին, Լյուրան այնտեղ չկա... և հիշում ե նա առաջին համբույրը...

— Որե՞ր... տիսրությամբ արտասանում ե Վարդյանը:

Յերբ հինգ տարի անցավ առաջին համբույրից, Վահան Վարդյանը թողեց իր մանկության քաղաքը, բոլոր մտերմուհիներին և յեկայի Յերեան: Յեկայլ Յերեան, բերելով իր հետ իր անձնական ալբոմը, վորի մեջ կային հեռու քաղաքում մնացած իր բոլոր մտերմուհիները, վորոնց մայրենի լեզուն Վարդյանին ավելի հարազատ եր, քան իր՝ Վարդյանի մայրենի լեզուն: Հին քաղաքումն եր թողել նա և այնտեղից նրան իր հետ բերել նաև քառասուն տարիներ ունեցող, բայց փթթող մի տիկնոջ: Փթթող՝ այդպես ե տեսել Վարդյանն այդ տիկնոջը:

Առաջին համբույր... առաջին պարբանք... ուշ յերեկո...

Վարդյանն հիշում ե բոլորը: Նա յեկայլ մանկության քաղաքից այնտեղ թողնելով բոլոր շիկահեր մտերմուհիներին: Նոր քաղաքում

նա տեսնում եր թխահեր աղջիկների ու վառ-
վում եր իր մանկության քաղաքի կարուտը։ Ա-
միսներ ելին տնցել։ Վահան Վարդյանն արդեն
նոր մտերմուհիներ ուներ, բայց դեռ լուսմ եր
նա շիկահերների քրքիջը հին քաղաքի բուլվա-
րում...

Մի որ, նա ծանոթացավ թուխ խոսլուղիկ-
ներով մի աղջկա հետ։ Հին քաղաքից բերած
ճարովկությունները չոգնեցին։ Բայց չկոտրվեց
Վահան Վարդյանի համառությունը։ Շարաթ-
ների անցան անոգուտ։ Վահան Վարդյանը հա-
շիվ պահանջեց ինքն իրենից։

— Սիրահարված եմ, թե ամեն անգամ վա-
նման եւ, — հարցրեց նա ու անմիջապես պա-
տասխանեց իր հարցին։

— Ինչպես յերեսում ե, սիրահարված եմ։ —
Եերը արդեն վորոշել եր, հանդիպեց ու ասաց,
վոր ինքը խաղ չի անում, վոր ինքը սիրում ե և
վորոշել ե ամուսնանալ նրա հետ։ Դրանից հե-
տո ինչքան Վահան Վարդյանն զգում եր, վոր
շահում ե նրա վստահությունը, այնքան յեր-
ջանիկ եր յերեսում ինքն իր աչքին։

Վարդանն ելի ուղում եր քնել, բայց շտա-
եր ցանկանում, վոր ելի կրկնվի պատրանքը։
Աչքերը նա ամուր խփում եր, վոր ելի տեսնի
Լյուբային առաստաղի վրա։ Զեր լինում։

— Քաղցր պատրանք, առաջին համբույր . . .
սեր . . . — մրմնջաց Վարդյանն ու աղյալը քաշեց
գլխին։ Մեկ ել նա բացեց դլուխը, նայեց ա-
ռաստաղին։

Լյուբան չկար...

Մանրացն և յին Վարդյանի կոպերը։ Նա
ովհանք, վոր մի քանի ըստե հետո քնած կլինի։
Շոյն նա դլուխը։ Ամեն անդամ նա կարծում
եր թե մաղերի յերկար փնջերը պետք ե հետ
տանի, բայց մերկ դլուխն եր շոյում։

Այդ որը Վարդյանը քնեց տաղտուկ զգաց-
մունքով։ Մի քանի ժամ հետո, հեղուկ մետա-
ղի պես ծանր նրա ականջը պետք ե լցվեր զո-
րանոցի ավաղի ձայնը։

Արթնանա'լ...

Յերկու—յերեք որում Վահան Վարդյանն
այնքան մտերմացավ Հրայր Քարամյանի հետ,
վոր արդեն պատմում եր նրան իր անձնական
կյանքի բոլոր դեպքերը։ Քարամյանը սիրով
զսում եր նրան։ Լսում եր նրան ու քաջալերող
ժաղիտով ժպտում։ Վահան Վարդյանը վողեր-
վում եր դրա համար և պատմում եր առանձին
մի շուքով։ Սակայն վորքան Վահան Վարդյա-
նը շռայլ եր իր պատմությունների մեջ, Հրայր
Քարամյանն այնքան ժշատ եր։ Նրա ժլատու-
թյունը հաճախ նյարդայնությունն եր ստեղ-
ծում Վարդյանի մեջ։ —Ի՞նչ մարդ ե տո՞՝, բա-
դա չի՞ ապրել, վոր վոչինչ չի պատմում, —
հարցնում եր Վարդյանն իրեն ու բացասարար
դլուխը տարութերում, սատանա'ն տանի...

Մի անդամ Վարդյանը Քարամյանից կար-
դալու դիրք խնդրեց։ Քարամյանը շտապում եր
ինչ վոր տեղ։ Ասաց, վոր իր պայուսակում
դրքեր կան, Վարդյանը կարող ե ինքը նայել

ու վերցնել։ Յերբ Քարամյանը դուրս եր պնում, Վարդյանը անհամբեր մարդու շտապողականությամբ բացեց նրա պայուսակիը։ Գրքերի վրա բացված եր խառն ձեռադրերի մի տետրակ։ Նայեց նա ձեռադրին, կարդաց առաջին առղերը և կոտհելով թե ինչ կարող ե լինել, վայրկենասլես ձեռադիրը թագուցրեց։ Զլինի՞ թե Քարամյանը միերադառնա և ձեռադիրը չտա կարդալու։ Գրքերի մեջ դնելով ձեռադիրը, իր թե ինքը, Քարամյանն և այստեղ թողել, Վարդյանը դորանոցից դուրս յեկավ լենանկյուն դնակու։ Ճանապարհին նա կրանար ու կկարդար յեթե չվախենար, վոր կարող և մատնվել իր անքաղաքավարության մեջ, վոր առանց թույլտվության ձեռադիրը վերցրել և կարդալու։

Լենանկյունում քաղաքարապմունք կար։ Հաղիվ և նա հիշում։ Խորհրդային իշխանությանը հանձնական հակամանն զորքերի մասին եյին խոսում։ Պարապմունքից Վարդյանն այնքան բան և հիշում, ինչքան մանուկ որերին տեսած իր յերազների բնվանդակությունից։ Յերկուսն ել հիշում և նա աղոտ ու կցկտուր, աղոտ, ինչպես մեզը։

Մի քանի անգամ պարապողը հանդիսավոր կերպով լոեց ու նայեց բոլորին։ Դա լուսություն ստեղծելու նշան եր։ Վերջին անգամ յերբ նա այդպես արեց, վոչ մի փափուկ չկար։ Պետը միայն Վահան Վարդյանին եր նայում։ Վարդյանը դլուխը բարձրացրեց ու հանցան-

բում բռնվածի մեղավորությամբ նայեց պետին:

— Բնկեր Վահան Վարդյան, սլարապ-
մունքի ժամանակ կարդալ չի կարելի, —ուզ-
դակի նկատեց պետը: Վարդյանը դիրքը ծալեց
ու դրեց սեղանի տակը, իր ծնկների վրա: Ա-
շակերտական տարիների նրա խաղն եր դա:

Մինչև պարապմունքի առաջին ընդմի-
ջումը գլուխը կախած ծնկներին, իրը թե այդ-
պես զսում ե, Վարդյանը կարդաց Քարամյանի
ամբողջ ձեռադիրը: Իսկ պարապմունքի յերկ-
բորդ մասից մինչև վերջն այդ ձեռադը մասին
եր մտածում: Դրա համար ել նա պարապմուն-
քի նյութից այնքան բան ե հիշում, վորքան
մանուկի որերին տեսած իր յերազների բովան-
դակությունից: Յեվ ընդհակառակը, Քարա-
մյանի ձեռադը բովանդակությունն այնքան
թարմ ե նրա մտքում, վորքան Բըօղսկու՝ Ռադ-
մահեղափոխական Խորհրդի նիստի նկարը,
նկար, վորին Վահան Վարդյանն այնքան հա-
վանել ե ու սիրում ե:

Յերբ պարապմունքը վերջացավ պետն
սպասեցրեց Վարդյանին:

— Գիտե՞ք, ընկեր բանակային, —սկսեց
նու լուրջ ու մի առանձին նշանակություն տա-
լով իր խոսքերին, —պարապմունքի ժամանակ
դուք անուշադիր եյիք: Այդպես չի կարելի:
Կարմիր բանակայինը պարտավոր ե իմանալ
քաղաքական բոլոր հարցերը: Զեղ ավելի պետք
ե հայտնի լինի դա, քան մյուսներին: Զեմ ա-

սում թե ռոմաններ կարդալը վատ բան ե, բայց
պարագմունքի ժամանակ պետք ե միայն լսել,
կարմիր բանակայինը...

Վահան Վարդյանն այս անդամ ել այնպես
չեր լսում պետին, ինչպես պետը պահանջում
եր:

Այնպես ե խոսում հետս, կարծես յես նրա
աշակերտը լինեմ, համոզողի տոնուի, ասացեք
խնդրեմ—վրդովվում եր նա ինքն իր մեջ:

— Ներողություն, յես լսում եյի,—պա-
տասխանեց Վարդյանը, բայց, զգաց, վոր պե-
տը տեսնում ե իր կեղծելն ու հաստատուն տո-
նով, յերկրորդ անդամ կրկնեց.

— Աղնիվ խոսք, յես լսում եյի, ընկե՛ր
պետ:

— Բաղար չանենք, ընկե՛ր Վարդյան,—
պատասխանեց պետը կտրուկ,—դուք կարդում
եյիք,—ապա նա սիրալիր ժպտաց, վորով ու-
ղում եր ասել, վոր ինքը խորամանկ ե և ներո-
դամտությամբ ե վերաբերվում:

Վարդյանը գլխիկոր դուրս յեկավ լենան-
կյունից ու զորանոցը մտնելով, մտածեց մի
անդամ ել կարդալ ձեռադիրը:

Յեվ հիմա թարմ ե Վարդյանի մտքում
ձեռադրի բովանդակությունը, ինչպես Բրոդ-
ոկու նկարը: Իսկ այսոր Վարդյանն ելի անդ-
րադարձավ այդ ձեռադրի բովանդակությա-
նը, վորովհետեւ այսորվա քաղպարապմունքին:
Հովոն յերեւաց իր բութ ուղեղով: Իսկապես,
վոր բոի: Հովոն Վարդյանի մեջ մտքերի կա-

ովակցություն սահմանի Քարամյանի ձեռագրի
մասին մտածելու։ Ձեռագիրը . . . չե՞ վոր այդ
ձեռագիրն ահաղին լույս սփոքց Քարամյանի
կյանքի վրա, նա ցույց տվեց թե ինչո՞վ ե ապ-
րում ու հուղվում Քարամյանը։ Ձե՞ վոր հենց
դա յեր Վահան Վարդյանին հետաքրքրողը։

Վարդյանը նստել եր այդորվա որագիրը
դրելու, բայց չուռ եր տայիս Քարամյանի ձե-
ռագրի արտագրության թերթիկները։ Փոր-
ձեց նա ցած դնել դրանք և մատիտը վերցնել
դրելու, բայց չարեց։ Ապա, վերցնելով մատի-
տը, սկսեց որագրի առաջին տողերը։

«Լավ ե, վոր այսոր որագրի փոխարեն
Քարամյանի ձեռագրի արտագրությունը կլե-
յով կլցնեմ այս թղթին։ Հետո, տարիներ
հետո, յերեկի կկարդամ և շատ բաներ կհիշեմ,
շատ բաներով կապրկմ, ինչպես առհասարակ
զգայուն մարդը կարող ե ապրել անցյալի ան-
վերադարձ, բայց հենց դրա համար ե'լ ավելի
հուղող քաղցրություններով ու դառնություն-
ներով։

Ահա Քարամյանի ձեռագիրը։ Ինչպես յե-
րեսում ե, դա մի կտոր ե մի մեծ գործի, վորը
պետք ե դրի նա».—



«Մայրս, լեռների ու կերճերի կայտառ մի
յեղջերու, բարակիրան մի հովալուհի, տռաջին
անդամ յերկունքի մեջ ե յեղել հազար իննը
հարյուր տասը թվին։ Ու նրա այդ առաջին
յերկունքից ծնվել եմ յեռ, հազար իննը հա-
րյուր տասը թվին։ Մորս կաթով մեծանալուց
հետո, յեռ կյանքի թույնն եմ ըմտել ու կաթի
պես քաղցր ե թվացել ինձ այդ թույնը, յերբ
գեռ մանուկի եմ յեղել, ապա՝ լեղու պես դառն,
յերբ պատանի յեմ դարձել։

Անցել են ժամանակի միավորները։ Կտըր-
տել եմ յեռ աղայի տված տասներկու դույդ
տրեխները վեցը տարում, և վերջին դույդ
տրեխի թելերից բռնած, ցեխոտ արեխը աղա-
յի դեմքին եմ խփել։ Ու յերբ կոմյերիստական
ստաժս անցել ե յերեք տարուց, քաղաք եմ հա-
սել սովորելու։

Ելի անցել են ժամանակի միավորները և
ահա յեռ քսաներկու տարեկան եմ։

Մի ամիս հետո բանակ եմ դնալու...

Ուզում եմ, վոր ամիսը դառնա վայրկյան,
վոր ժամանակն իրենից արագ հոսի, արագ,
ինչպես իմ բնախոսական ու գիտակցական ա-
ճումը, ինչպես իմ յերկրի աճումն ու թափը։

Մի ամիս հետո յես բանակ եմ գնալու...

Դարուն եր: Ծաղիկները փթթում եյին: Ծաղիկները փթթում եյին, վոր ծանրությամբ որորին նրանց վարանդները: Ամառ ե, հասել ե կյանքն իմ մեջ ել, հասուն մրգերի պես, հասուն հասկերի պես իմ մեջ ել հասել ե կյանքը: Դարուն եր, փթթեցին ծաղիկները—այդ իմ կյանքի պատանեկության տարիներն եյին: Ամառ ե, ծանրությամբ որորվում են վարանդները, այդ իմ կյանքի այսորն ե:

Ու մեկ ամիս հետո յես բանակ եմ գնալու:

Ամելիի հուղիչ ու աղնիվ բան կարո՞ղ ե լինել, քան այն, յերբ սրախողողում ես, արյուն թափում, վոր վերջ տրվեն բոլոր, բոլոր սրախողումներին, վոր աշխարհում արյան ել վոչ մի վտակ չֆշտ...

Յես կարմիր բանակ եմ գնալու սրի, հրացանի ու գաղի գործածման արվեստը սովորելու, հրաման կատարելու ու հրամայելու: Այդ իմ պարտքն ե: Զե վոր հովմուհի յե ինձ ծնել ե յես սնմիլ եմ այն դառնությամբ, վոր կյանք և կոչվում, ու սնմում եմ այն քաղցրությամբ, վոր կյանք և կոչում:

Յես չեմ տեսե: յերեկը: Յերեկամասին մարդիկ ու զրքերն են պատմել ինձ: Յես նոր կյանքի հետ եմ բուսել ու նրա հետ եմ արադ աճում: Բայց թե ի՞նչ բույս եր սնվում յերեկամասիմ, թե հողը վո՞ր արեւի ջերմն եր իր մեջ քամում, այդ գիտեմ յես: Յես գիտեմ, թե ինչ եր զգում ու ինչ եր մտածում յե-

բեկվա մարդը։ Յես դիտեմ, թե ինչ զդացում-
ներով եր բանակ գնում յերեկվա մարդն ել։

Յես մտածում եմ այդ մասին և հանկարծ
հիշում եմ ընկեր Ակոբին։ Ընկեր Ակոբին եմ
հիշում ու մի անմոռաց յերեկո։

Անմոռաց յերեկո...

Նեց ամիս առաջ եր դա, բայց վեց տարի
հետո յել այսորովա նման կհուղի ինձ այդ յերե-
կոն։

Խորը ճորերով խշում եր ջուրը։ Արեւ
ժաղուց կնճռոտ սարերի սապատավոր մեջքե-
րից գեղի վար եր գլորվում։ Ստվերը սե ու
թափանցիկ սավանի պես փոյիել եր կիրճերի
վրա։ Թփուտների սոսափյունն ել ջրի խշոցի
հետ հոսում եր ճորով։ զարունը շնչում եր լիա-
թոք, բուրում եր գարունը։

Կնճռոտ, ինչպես սարերը, և մթաղնած,
ինչպես ամպող յերկինքը, դետի ափին, քա-
րի վրա մեղ մոտ նստել եր Ակոբը։ Ուղիղ յեր-
կու ու կես անդամ ինձանից շատ դարուններ
եր տեսնել նա ու վորպես տարիների վաստակ,
կրծքին ուներ կարմիր ժապավենով փաթաթ-
ված մի շքանշան։ Պղնձի դեղին ու փայլիլուն
մի կտոր մի ափից մյուսի մեջ նետելով, նա-
յում եր նա հեռուն ու խոսում մեղ հետ։

— Ա՛, ճուտեր, ասում եք |թե խի՞ չեք
պլանները կատարում, բա իմ ասած եղ անփու-
թությունը վոր չի, չենք կատարի՞։ Բա նի-
կոլի վախտը եղ ջահելներն աշխատել են խա-
զեյինի հմա՞ր, վոր եսոր ել մեր արտադրու-

թյունի դադըն իմանա՞ն...Ե՛, ճուտեց ջան,
լավ ա, վոր հենց չեք տեհել...

— Բայց, ախար, ընկեր Ակոր, հասակա-
վոր բանվարներից ել կան, վոր գործալքում-
ներ են ունենում:

— Հո յես չժխտեցի՞, ա' բալամ, իհար-
իե, հասակավոր բանվարներից ել կան: Հին
բանվորներից ել մեկ—մեկ պյանիցներ են մնա-
ցել, վոր մեր արտադրութունի դադը չեն ի-
մանում: Իմ կարծիքով, դուք դռւք ասեք,
վոր յես սխալ եմ, համա դա իմ կարծիքն ա,
դրանք փշատի ծառի պես են, ել չեն դդվի: Հակառակ
Խոհ յերկու յերեք ջահել վոր կան ողբողութ
նողներիցը, կողդվեն: Ճի՞շտ ա...

Ասենք մի քիչ ել յես եմ փշատի ծառի
նման...

Քթի տակ ծիծաղեց Ակորը, ապա թեքվեց
զետի մեզ:

— Ճիշտ ա, մեկ—մեկ յես ել եմ խմում,
համա պրոդուլ չեմ անում:

— Հա, մոռացա, գլխավոր պատճառը ա-
րեղլիչկեն ա: Ղեկավարությունը խամ ավտո-
մոբիլ քշողի նման գործը դայդին առաջ չի
տանում... Հրեն, տեսնո՞ւմ եք, մեկ պեչկն ա
վառում եսորվա տեմպի դյուռ որը: Ասում են՝
թե ելեքտրական եներգիա չկա: Բա եղ եներգեն
չե՞ վոր երեկ կար, եսօր մտավ... ելի ասել
եյի հա'...

Աւ ընկեր Ակորը զայրույթով նայեց հե-
ռուն, ձուլարանի ծխնեղույզից գուրս յեկող

ծիսի քուլաներին, վորոնք ծանոթեն յերկինք եյին բարձրանում:

— Շան վորդկերանց բանը մարդ չի հասկանում, ինչքան ել ժողովներումը բատ եյության ես խռովում—ելի են ու ու ելի են: Ասես զնասարարություն ա, դիրեկտորը կոմունիստ ա, ասես սխալ ա, բա ըտենաց ել սխալ կլի՞...

Ընկեր Ակոբը գլուխն որորեց ու շարունակեց.

— Ազնիվ խռոք եմ ասում, հենց դազեթի մեջ ել գցելու բան ա, դրեք...

Մութը խտանում եր ու խշխշում եյին ձորի ջուրը, թփերը, հողը: Կարծես ամբողջ ձորը լցված եր վճիտ ջրով ու հանդարտիկ ներքեւ եր հոսում:

Լսվեցին աններդաշնակ յերդի ձայներ, ապա արձագանքի հազարամայն թրթիռները:

Սիրած տղես մի կաղնի ծառ,

Եսոր կարմիր բանա'կ գնաց,

Ենքան սիրուն, ենքան պայծառ,

Վոնց վոր՝ սրած դանակ զնաց:

Յերգում եյին ամեն մեկն իր համար: Յերգում եյին տղաներ ու աղջիկներ: Ամբողջ ձորը յերաժշտությամբ եր լցված:

Ընկեր Ակոբը խորը շնչեց, այնքան խորքեց, վոր կարծես հառաչեց:

— Տեսնո՞ւմ եք, ինչ են անում մեր լոկտները:

— Ովքե՞ր են դրանք:

— Տասը թվականի ծնվածները։ Պարապ-
մունքից են դաշիւ։ Հմիկլանից սովորում են,
վոր բանակ գնան քիչ ու միչ հասկացած։ դա'
մ' . . . աշխարհ ա, ԱՌԻ . . . :

— Բայց ինչո՞ւ դու հառաջեցիր, ընկեր
Ակոր։

— Յանի թե ի՞նչ արի։

— ԱՌԻ քաշեցիր։

— Ա՞լի, ախ չե՛, ամա մի բա՛ն ընկալ
միտու։

— Ի՞նչ։

— Չե՛չ։

— Իսկապես, ինչ հիշեցիր, ընկեր Ակոր։

— Հին մի բան, հե՛չ։

— Հետաքրքիր ե։

— Ի՞նչ հետաքրքիր, ա՛շի, սալդաթ գնա-
լըս եր . . .

— Պատմիր լսենք, ընկեր Ակոր։

— Ի՞նչ պատմեմ, ա տղա, են ընկալ մի-
տըս, վոր մենք լացով ու շիվանով ինք սալ-
դաթ գնում, իսկ մեր ես լակոտներն ու իրենց
սիրած աղջկերքը յոթ ամիս առաջ են ուրա-
խանում ու յերգով ասում թե՝ յարս կարմիր
բանակ գնաց։

— Լավ չե՞ր, վոր այդպես ե։

Ընկեր Ակորը հանդիմանությամբ նայեց
մեզ։

— Բա լավը չե՞ր. ել հեղափոխությունն
ինչի՞ հմար արինք, վոր լավը չի, հլա դրա-

նից ել սավայի, նրանք դիր ու դաշտմ ել կոռ-
փորնն:

— Իսկ դուք հին բանակում չեցի՞ք սովո-
րում:

— Բա չեցինք սովորում, իհա՛րկե սովո-
րում եյինք:

— Ի՞նչ եյիք սովորում:

— Ինչ եյինք սովորո՞ւմ, սովորում եյինք
...թաղավորի կնդա անունը, մենծ ու պուճուր
աղջիկների անունը, ու ով դիտի, հազար ու
մի դհենց մատրարադ բաներ...

Ընկեր Ակորի շրթունքների վրա խաղաց
բաղմախորհուրդ մի ժպիտ: Մի առանձին
փառ ստացած աչքերով նա մեղ նայեց ու
հարցցեց.

— Թե վոր ուղում եք, մի բան կադասմեմ,
տեսնում եմ, վոր հետաքրքրվում եք:

— Պատմիր, ընկեր Ակոր, պատմիր:

— Լա՛վ, պատմեմ: Եղ վոր ասում եմ,
ուստի ու յապոնացու կովից առաջ եք: Սալ-
դաթ գնացի: Համա ոուսերենից մենակ յերկու
խոսք եյի իմանում՝ մեկը վադեն եք, մեկն ել
խլերը: Մին աչքը պուճուր, մինը մեծ մի ո-
ֆիցեր ունեյինք, կդար ու կասեր.

— Նու կա, Ակոր Սարկիսով, կա՞կ իմ յա
յեվո վիսոչիստվո իմակերատորա վսերասիսկո-
վո, — յանի թե, ի՞նչ ա թաղավորի անունը:
Ցես նրանց եղ քաղպարապմունքիցը բավարար
չեյի, համ ել ոուսվարը լավ չեյի իմանում,
ասում եյի.

— Իմ յու յեվո վիտկոստվո վսեսնոսկի Նի-
կալոյ Ալեքսանդրովիչ Ռոմանով .— յանի թե
թաղավորի անունը՝ Նիկալա Ալեքսանդրովիչ
Ռոմանով առ համա խոսքերո լավ դուքս չեցին
դալի ու մի քանի պլետ եյի ուտում :

— Մի որ ել եղ մատրաբաղ շան վորդին
եկավ թե՝

— Սարգիսով, կա՞կ յեյո, յեվո չի, հա՞,
յեյո, վելիչեստվա իմ պերիատրիցա վսեսասիս-
կովո, — լանի թե՝ ի՞նչ ա թաղավորի կնզտ ա-
նունը :

— Կարացիմ տսեմ : Ասեցի ու թողեց գնաց :
Հմի միտո չի, Մարիա յե՞ր, թե՝ զահրումար :
Մի որ ել, եղի եղ ոֆիցերն եկավ ու եղ բոլորը
Հարցնելոց հետո, հարցնում ա .—

— Կա՞կ իմ յա պերվոյ նասլեզնիցի յեվո
վելիչեկ, ու հետեւին ել մյուս խոսքերը .— յա-
նի թե՝ ի՞նչ ա թաղմավորի մենծ աղջկա անու-
նը : Եղ մեկը մտիցս գնացել եր : Չորս պլետ
կերա, սիրոս դաղվեց : Սիրոս դաղվեց, իսկ
շան վորդի քոռը չորս պլետը բավարար հետար-
չարեց ու չորս պլետից հետո յել հարցնում ա ,
թե ի՞նչ ա թաղավորի մոր ու կնզա անունը :
Վախր վտա բան ա , են ել թաղավորի շան վոր-
դի ոֆիցերներիցը, համա վոր համը շատ են
տանում, մատին ել ես մոռանում, սարսափն ել :
Եսաեղ հերոս երավ ու հայերեն ուշունց տիֆի :

— Տո քո թաղավորի մորն եղ բանց ա-
նեմ . . . կնզանն ել . . . մենծ ու պուճուր աղջիկ-
ներինն ել . . . հլա տատինն ել վրեն . . .

Եստեղ նրա հերօն ել ելավու յես հետաքը
կորցրի, թէ քանի պլետ իջավ գլխիս: Խփեց,
դինջացավ ու ելի հարցնում ա:

— Ի՞նչ ասեցիր, ասում ա:

— Ասում եմ թէ ոռովար զոր եր, հայե-
րեն ասեցիր.

— Սվոլոչ, — ասում ա, — զա շան լեզու
յա, ըոռուսվար պետք ա ասես, — ու մի հատ
ևնպես տվեց աչքիս տակը, վոր հազար պեծեր
տեսա: Աչքիս տակը արնոտվեց, կտշին պլոկ-
վեց ու մինչև եսոր ել տեղը յերեսում ա, նշան
ա մնացել, ափսոս լիս չի, վոր շանց տամ...

Բնկեր Ակորը լոեց: Մեկ ել նա խոր շունչ
քաշեց:

— Ես ել նրանց քաղաքապմունքն եր: Դե
ա՛րի ու թաղավորի կնդան ու աղջկերանց ու-
շունց մի տուր...

Նա կատակով խփեց ուսիս ու ժպտաց
մթության մեջ:

— Եղակես բաներ են ըլում, ճուտեր ջան...

— Դեռ են չեմ պատմում, թէ իմ սիրած
աղջկեր վոնց եր յաց ըլում, վոր ինձ սալդաթ
ին տանում, թէ վոնց իմ սալդաթ դնալուցը
մի որ տռաջ ձորի մեջը վզովս եր ընկել ու տ-
սում եր թէ, ինչ ել անեն՝ ինքը չի թողա, վոր
ինձ սալդաթ տանեն:

— Թող Նաղո ջան. — ասում եմ. — խալխար
կտեսնի, ամոթ ա, իսկ նա վզովս ա ընկել ու
չե՛ վոր չե՛, թաղավորը զզուխը քարովն ա
տվել, վոր քեղ սալդաթ ա տանում, յես քեզ

չեմ թողա...դե խեղճը ի՞նչ կարար աներ:
Յես մեկ ել նրան են ջահել վախտվա զուվա-
թովու պինդ դրկեցի, պոռշտի արի ու գնացի:
Մեկ ել յետ դառնամ, տեսնեմ՝ Նազոն գլուխը
մի քարի վրա դրել ա ու լաց ա ըլում: Սիրտս
չկարաց համբերի: Յետ դարձա, մեկ ել դրկե-
ցի ու պինդ պինդ պոռշտի արի: Ուրախացավ
Նազոն, հենց իմացավ թե ել չեմ գնում: Ար-
ցունքը չորացավ Նազոյի կարմիր թշերի վրա:
Ես անգամ յես թողեցի նրան ու առանց յետ
նորյելու, վոր չի թե սիրտս չկարա համբերի,
պնացի:

Ել չեմ պատմում, թե վոնց յես սակդա-
տութունիցը եկա ու անսա, վոր հերն ու մերը
Նազոյին զուսով մարդու եյին տվել ու հալա
Նազոն մի տղա յել ուներ: Թե վոնց նրա թա-
ղա մարդն ել իմ ջերու եղ տղի անունը դրել
եր Ակոր: Թե վոնց՝ յես ուզում եյի, վոր եղ
մարթուն սպանեմ, բայց Նազոն չթողեց թե՝
Ակոր ջան, հո չես գժոյել, ի՞նչ անենք, վոր
առտոծը եղակա խարար արեց մեր բախտը,
րնենց հաշվենք, թե ինձ դշերն են կերել ու դու
չես կարացել աղատես:

Համ ել ի՞նչ...Եղ բոլորն եղակես եր ըլում,
վոր թուգավորի ու նամեստնիկների կնանիքը
հետեները լուվ հառտացնեն, շատ վոսկու ու
րույնանաների մեջ թակվեն: Համա կերան....

Ամպերը ծածկեցին հորիղոնը: Գոռացին:
Անձըների առաջին կաթիլներն ընկան մեր
ունմ քերի ու թփերի վրա: Գոռացին ձորերն ել:

Գոռացին ավելի խուլ ու խորքից : Տարեբքն սկսվում եր :

— Գնա՞նք, — ասաց ընկեր Ակոբն ու ծանրությամբ վեր յելավ : Հեռվում յերեսում եր ձուլաբանի ծխնելույզի կարմիրի, կապույտի ու կանաչի խառը բոցը :

— Ասում են թե իսի՞ չեք պլանները կատարում : Բա զեկավարութան արեգիչչին թողնում ա՞ , վոր կատարենք, հարկավոր ա , վոր հենց կենակոմն ել իմանա եղ մասին . . .

Ապա, կարծես շարունակելով նույն միտքը, ընկեր Ակոբն ելի սկսեց խոսել ինքն իր հետ :

— Եղան եր իմ սալդտառութունը : Հիմունալրաթ վոր ուրախութունով կերթան կարմիր բանակ ու հլա աղջիկներն ել յերդ կասեն թե՝ յարս կարմիր քանակ գնաց, թե յարս սիրուն եր, դանակի դայդա սուր եր ու բդենց քաներ . . . Տեսնում եք, ինչ յավ, սիրուն ա ողեչկի բոցը, կա՞րաք համբարիք քանի դույն ա : Են մեկը կարմիր, մեկելը — կանաչ, մեկն ել, են մեկն ել . . . դուք ասեք, ձեր աչքերը յավ են ջակում : Շատ սիրուն ա . . . ձիշտ ա, հիմա մեկ պեչկն ա վառվում, բայց եգուց մեկն ել խոտի կդցենք, մյուս որն ել նորը կշինենք : Դրա համար ա, վոր մեր զակուներին կարմիր բանակ են ուղարկում : Ուղարկում ենք, վոր մեր արդյունաբերութունի պեչկերն արխային, տպահով ու գյուտ վառվեն : Շուտ քելեք, վոր չթոջվենք, ամպերը նոթերը կիտեցին . . .

Դղբդում եյին ամպերը։ Զորերն արձա-
դանքում եյին։

Անձրես մտղվեց, մեղմ, ապա՝ հորդ կա-
թիլներով ու մեկեն։

Մեկեն ել դաղարեցին յերդն ու նրա ար-
ձագանքը՝ իրենց հաղարածայն թրթիռնե-
րով։—



Վեց ամիս առաջ եր այդ յերեկոն, բայց
վեց տարի հետո յել յես չեմ մոռանա դա:
Յեվ հիմա, յերը մի ամիս հետո բանակ եմ
զնալու, հիշում եմ այդ յերեկոն ու Ակորին։
Հուշ, վոր լցնում ե ինձ մարտական հույզե-
րով, ուազմի զգացմունքներով, շողշողուն
սվինի ու փայլփլող սրի կարոտով։ Զե՞ վոր
նրանցով մենք արյուն ենք թափելու, վորն
աշխարհում վերջին արյունը կլինի, նրան-
ցով մենք արյուն յենք թափելու, վոր
աշխարհում ել արյան վոչ մի վտակ չհոսի։
Իսկ մենք թափում ենք արյունն այն մարդ-
կանց, վորոնց արյան մեջ վորպես շտքարային
նյութեր, ծծվել են միջիոնների մկանները,
արյունը, կյանքը . . .

Աշուն ե։ Մեկ ամիս հետո, հաղարների
հետ, վորոնց հովվուհիները, զեղջկուհիներն
ու բանվորուհիներն են ծնել՝ փաթաթել ցնցո-
տիների խանձարուրի մեջ, յես բանակ պետք ե-
ղնամ, կարմիր բանակը . . .»։

Քարամյանի ձեռագիրը սոսինձով իր ո-
բագրի տետրակին կպցնելով Վարդյանը մեկ եւ
թերթեց այն : Թերթեց ապա ձախ աչքն ու ձա-
կատը ձախ ձեռքի մեջ առնելով, մատիտով
խղմզնց Քարամյանի ձեռագրի արտագրու-
թյան տակ :

«Նշանակված ॥II», մասը չդտա Քարա-
մյանի չեմողանում : Հետաքրքրական ե, թե
ի՞նչ կդրեր նա : Բայց բավական ե այսոր : Յե-
թե այսորվա որագիրս Քարամյանի ձեռագիրն
ե, նա արդեն բլոկ-նոտի քսան եջի չափ բան ե :
Վե՞ր որն եմ այդքան որագիր գրել : Քիչ ե
մնում նկարչությունը թողնեմ ու գրող դառ-
նամ : Լավ ե քննեմ : Միևնույն ե, առավոտը
ժամը 6-ին կարթնացնեն : Հո որագիրը գրեյու
համար ուշ քննելս հարդելի չե՞ն համարի : Ո՞ւժ,
եղ զինվորական «վերկա՞ց»-ը, վոնց վոր սըն-
դիկ լցնեն տկանջիռ մեջը : Ասում են պետք ե
սովորել դիսցիլինացին : Քարամյանն ել ե ա-
սում : Յես եղ իհարկե բանակ գալուց առաջ
նրա նման կարող եյի խանդավառվել ու այ-
պիսի բաներ գրել : Բայց . . . բանն այն ե, վոր
նա ճիշտ այդպիսի տրամադրությամբ ե լցված
հիմա յել, իսկ յես՝ հակառակը, յես դպում եմ
այդ :

Ինչո՞ւ :—Դա ինձ գաղտնիք ե, այդ «ին-
չու»-ին պատասխանել չեմ կարողանում յես . . .

— Չե, յես պետք ե նկարեմ Քարամյանի
այնպես լավ առնական գեմքն ու նրա կիսա-
ժամիտը : Պետք ե նկարեմ ու իրեն նվիրեմ . . .

Գրեթե ամեն որ Վարդյանը Հրայր Քարամյանի ձեռագրի մասին և մտածում։ Նա յերբեք չի կարողանում մոռանալ այդ ձեռագրի բովանդակությունը։ Ինչքան շատ բան ասեց այդ ձեռագիրը նաև իրեն՝ Քարամյանի մասին։ Իսկ թե ինչու Վարդյանը մեկ ել կարդաց ձեռագիրը և այն սոսինձուլ իր որագրի տետրակին փակցրեց, դա յել իր պատճառներն ունեք։

Այդ որ առավոտյան սովորականի նման լսվեց ավագի ձայնը։

«Արթնանա՞լ»...

Հինգ րոպեյում հաղած, պատրաստ եյին բոլորը։ Սկսվեց Փիղկուլտուրայի պարագանունքը։ Ամենորիշա պես, Վարդյանը վստահ էր, վոր ամենից հաջող ինքն և քայլում, գլուխը հպարտ, կուրծքը՝ դուրս։ Վահան Վարդյանը չեր յերկմտում, վոր ավագը դոհ և իրենից։ Ավագն և կամանդայում զեկավարում նաև շարային պարապմունքները։ Վարդյանը կարծում եր թե Ավագի քեֆը դաշիս և իր Վարդյանի իսկական զինվորական կեցվածքի համար։ Այդպես եր համատացած նա, բայց պարապմունքից հետո նա ավագից լսեց այն, ինչը չեր սպասում և լսեց սպասածի միանդամայն հակառակը։

— Բնկեր Վահան, — ասաց ավագը մոտենալով Վահան Վարդյանին, — դու կծկվում ես քայլելիս, թեվերդ լաթի պես թույլ կախում

ևս ուսերիցդ, կարծես թե բլուզիդ թեվերը դատարկ լինեն. գոտիդ եւ շատ թույլ ես կապում:

—Ներողություն, քնդհակառակը, —պատասխանեց Վարդյանն այնպես հեվ ի հեվ շընչելով, վոր քթի տակի նոր բուսած չեկ մազիկները չնչից տատանվեցին. —ընդհակառակը, յես վատ չեմ քայլում:

—Վատ ես քայլում Վարդյան, իզուր պաշտպանվում ես, քայլեցիս վոր լուսանկարն քիզ, լուսանկարդ իսկական կարիկատուրա կլինի, —լարեկամական տոնով ասաց Քարամյանը, այնպես, վոր Վահան Վարդյանը վո՛չ միայն չվիրավորվեց, այլև շոյվեց: Միայն մի բան չի մոռացել Վարդյանը: Դա Սարգսի խայթելն եր: Այդ ժամանակ Սարգիսն ել մեջն ընկալ թե՝

— Բան չկա, աղջիկների հետ շատ ապատրուշկա արել ու կծկվել, գիտի թե նրանց հետն ա քայլում. —

Ճիշտ ե, վոր Սարգիսն ել չարամառությամբ շասաց այդ, դա Վարդյանն ել հասկավ, բայց ելի վիրավորական բան զգաց իր նկատմամբ:

Սարգիսը, վոր կամանդայի բանակայիններից մեկն եր, շատ եր սիրում Վարդյանին նյարդացնել: Իսկ Վարդյանը նրան պատասխանում եր արհամարհանքի կարճ խոսքերով:

Այդպես: Կոտրված եր Վահան Վարդյանի տրամադրությունը, յերբ լինանկյուն մտան:

Սակայն դա չեր կարեւորք։ Կարեւորն այն դեպքըն և, վոր Վարդյանին հիշեցրեց Հրայր Քառմյանի ձեռագիրը։

Ֆիղիուզտուրայի պարապմունքից հետո մտան լինանկյունը։ Կամանդայի լինանկյունը այնքան ել կահավորված չեր, բայց ելի այնտեղ կային Սաալինի, Վորոշիլովի, Սմոլինի, Բուզյաննու և դիվիզիայի քաղբաժնի պետի յասանկաբները։

Վորոշիլովի լուսանկարը։ Հենց ինքը, Հովո՞ն, շատ անզամ և կանգնում այդ լուսանկարի տուած ու խոսում նրա հետ։

— Սիրելի ընկեր Վորոշիլյով ջան, իմալ ո քո քեֆ, լա՞վ ես... Ապա հիմարական հրոհը սոցով թեքվում ե դեպի տղաներն ու ասում։

— Նա տեսեք, տղերք, յես ըսկցի հնկեր Վորոշիլյով իմա՞լ ես, լա՞վ ես, կսա՞ լավ եմ, Հովո՞ն ջան, ըբա դո՞ւ իմալ ես...

Պարապմունքն սկսվում է։ Պետն ելի Հովոյի հետ և զրույցի բանվում։ Այդ զրույցներն արդեն տաղտկալի են Վահան Վարդյանի համար։ Միշտ միենույն բանը և միշտ՝ տարրական։

— Քսան յերեք տարեկան ու այբուբեն, և, դրանք ել չի հասկանում, դժվար թե դրա դլուխն այսուհետեւ բան մտնի. — մտածում եք Վարդյանը։

Պետն հարցնում եք.

— Ինչո՞ւ ցարի բանակում բացի կրոնից ու թագավորի տոհմի պատմությունից ուրիշ բան չեյին սովորեցնում. —

«Հասարակ հարց . տեսնես այդ հարցի՞ն ել
չի պատասխանի»—մտածեց Վարդյանը : Բայց
Հովոն ուղեղացավ ունեցող վոչխարի նման
շարժում եր գլուխն ու վոչխարի հայացքով
նայում սեղանի կարմիր ծածկոցին : Յերբ ուն-
տը յերկրորդ անդամ կրկնում եր հարցը . նա-
չարչարվելով պատասխանում եր .

— Զեմ իմանում, անգրագետ եմ :

Ու համարյա բոլոր հարցերին :

— Եհ, եդ անտերն իմ մտից ելեր ա, մոռ-
ցեր եմ .

— Ի՞ . . . անգրագետ եմ, չեմ իմանում :

— Յես ի՞նչ դինամ . . .

— Զեմ իմանում, ընկեր պետ, թող Հրայ-
րըն ըստ, յես ել սովորեմ . . .

Յեվ այսպես շարունակ :

Բայց Վարդյանը դարձանում եր, վոր
յերբեմն վոչ միայն ճիշտ եր ոլատասխանում
Հովոն, այլև՝ հաստատակամ ու վճռական,
նույնիսկ բարկացած :

Մի անդամ պետը հարցրեց նրան :

— Ընկեր Հովո, ի՞նչ ես կարծում, ի՞նչո՞ւ
կուլակին ել բանակ չենք բերում . . .

Նկարիչ պետք եր լինել լավ տեսնելու հա-
մար, թե ինչպես փոխվեց Հովոյի դեմքի ար-
տահայտությունը : Տեսավ դա Վարդյանը և
Վարդյանը չի մոռանում, թե ինչպես Հովոն
խեղղվում եր բոի մեծացած տղաներին հատուել
անդուրեկան հռհռոցից : Հովոն հռհռում եր,
իսկ Վարդյանը քիչ եր մնում, վոր տրաքվի :

Նա յերբեք չի տանում այդպիսի անդուրեկան, վայրենի ծիծաղներ:

— Ընկեր բանակային, ինչո՞ւ յեք ծիծաղում, յես ձեզ բան եմ հարցնում.—զայրանում և պետք Հովոյի վրա:

— Ախր հնկեր պետ, —պատասխանում են Հովոն ելի հռհռալով.—խո մեր խելք հացի խետ չկերանք, վոր կուրակին բերենք բանակ:

— Նու, ասա՛, ուրեմն ինչո՞ւ չենք բերում:

— Ինչո՞ւ, կուլակը մեր թշնամին ա, ինչո՞ւ:

— Տեսնում ես, գիտես ել ինչո՞ւ ես ասում թե չդիտեմ:

— Յեսիմ, չեմ իմանում ելի...

Պետն հարցրեց:

— Ձեր դյուդում քաղիսմբակ կա՞ր:

— Քաղիսմբա՞կ, ինչի՞ չե.

— Հապա ինչո՞ւ չես սովորել.

— Յեսիմ...

— Բատրակ մարդ ես, պետք ես սովորեյիր:

— Հառաջուց չսովորենքնմ, մերա նո՞ր...

Պետը նայեց Հրայր Քորամյանին, տպամյուս բանակայիններին ու յեզրափակեց այդ դժուգուր:

— Ռւբեմն զորակոչիկների հետ պարապելու ասպարիդում նրանց դյուդի աշխատանքը ինքնահոսի յե մատնված յեղեղ:

Բայց հետաքրքրականն այդ հարցերն ու պատասխանները չեյին:

Հովոն ամեն որ ել տեսնում եր Վորոշիլով
Նկարն ու խոսում նրա հետ։ Իսկ յերբ պետ
հարցը եց, թե ո՞վ ե Կարմիր Բանակի ղեկա-
վարն ու Ռազմահեղափոխական Խորհրդի նա-
խադահը, Հովոն ելի հիմարական ձեռվ ժըպ-
տաց։

- Զգիտե՞ս ով ե, —կրկնեց պետը։
- Չե, չեմ իմանում։
- Ինչո՞ւ չես իմանում։
- Չե՛, չե՛ իմանում եմ։
- Եեթե գիտես, ուրեմն ասա, ո՞վ ե.
- Ով ա՞, հնդեր կլայտնն ա, ո՞վ ա. —

Մի քանիսն վոթկացին, ամենից բարձր
վահան Վարդյանը։ Բայց վոր ամենից տարո-
քինակն եր, Հովոն ինքն ել նրանց ծիծաղին
խառնեց իր հոհոցը։

Բոլորից հետո Վահան Վարդյանը կարո-
ղացավ զսպել իր ծիծաղը։ Բոլորից հետո ել
նա իր վրա նկատեց պետի հանդիմանական
հայացքը։

— Ընկերներ, ընկեր Վահան Վարդյան, —
ծանր ու հատ հատ արտասանելով բառերը,
պետը միայն Վարդյանի վրա եր ինայում, —
ճիշտ ե, վոր դեռ նոր եք բանակ յեկել, բայց
պետք և սովորեք բանակի որենքները։ Դա ձեզ
պարտադիր ե։ Իսկ բանակի որենքներից մեկն
ել այն ե, վոր պետք և հարգել ընկերոջը։ Ին-
չո՞ւ յեք ծիծաղում։ Պետք և տիրեք ծիծաղե-
լու վոխարհն, մտահողվեք։ Ինչո՞ւ յեք ծի-

ծաղում . . . ի՞նչ կա ծիծաղելու, ընկեր Վահան
Վարդյան:

Վարդյանը դլուխը կախեց, իսկ պետք
թեքվելով դեպի Հովոն՝ շարունակեց.

— Զե, ընկեր Հովոն, Կլայանը դեռ մեր
դիմիդիայի Քաղբաժնի հրահանդիշն է: Կաը-
միր Բանակի դեկավարն ու Ռազմահեղափո-
խական Խորհրդի Նախադահն ընկեր Վորոշի-
լովն է, այ, են նկարը.—

— Ըստ, ճիշտ ա . . . ելի անխմաստ մի ժպի-
տով ժպտաց Հովոն ու մեկ, ապա մյուս թեով
սրբեց քիթը: Նրա քիթը նման է ոձի տափակ
գլխի: Խոսելիս, յերբ տարուքերում և նա
զլուխը, թվում է թե քթով ողն է հոտոտում:

— Ճիշտ ա, իհարկեն ճիշտ ա,—շարունա-
կեց պետք,—այ, նա ել բանվոր և յեղել, հա-
մա քեզ պես չի ասել «անդրադես մարդ» եմ,
չեմ իմանում»: Նա սովորել է ինքնիրեն ու իր
ընկերներից, կովկեյ և բուրժուաների դեմ, ու
հիմա յել կարմիր Բանակի դեկավարն է: Տես-
նո՞ւմ ես, բանվոր մարդն ուր է հասել:

— Ըստ, տեսնում եմ . . .

Արդեն ուրիշ նյութի յեր հասել ուարտո-
ժունքը, բայց դեռ Հովոն ինքն իրեն կտկնում
եր.

— Ընկեր Վորոշիլյով . . . ընկեր Վորոշի-
լյով . . .

Ու միայն այդքանը:

Պարապմունքներից հետո Վարդյանը մո-
տեցավ Քարամյանին ու մտերմաբար տաց.

— Հրայր, քետու սլու — յես կյանքում
դեռ այդպիսի անասուն մարդ չեցի տեսել,
մի՞թե նա այդքան տարրական բաներ չի հաս-
կանում:

Վահան Վարդյանին թվում եր, վոր նույ-
նը կհաստատի նաև Քարտմյանը, վոր Քարտ-
մյանը կհամաձայնի իր հետ ու միասին կծի-
ծաղեն: Բայց տարրորինակ բան: Քարտմյանը
վոչինչ չպատասխանեց, նա մի չափող հայոցք
նետեց Վարդյանի վրա ու հեռացավ: Վար-
դյանը մինչև հիմա յել չըխուեր, թե Քարտ-
մյանն ինչու այդպես վարպէց: Ո՞վ դիտե,
վորքան մարդ, այնքան բնավորություն: Բայց
ելի Սարդիսը մեջ ընկավ:

— Գիտենք, վոր դու ինդլիկենդ ես, ել
ինչո՞ւ յես ուրիշի վրա ծիծաղում:

— Հարդելի ընկեր, — պատասխանեց Վար-
դյանը, — ամենից առաջ դու դեռ ինտելիգենտ
բառն արտասանել չդիտես, յերկրորդ՝ դու դեռ
կարծում ես թե ինտելիգենտ լինելը վատ բան
է, ուրեմն յես ինչպե՞ս թույլ տամ ինձ քեզ
հետ վիճելու: Ինչ ուզում ես, ասա՛, յես քեզ
չեմ պատասխանի:

— Իհարկե թույլ չես տա, դու ինդլիկենդ
ես, իսկ մենք բանվոր, բատրակ մարդ ենք, —
կըկնեց Սարդիսը:

— Ծնկեր, յեթե դուք կոմյերիտական եք,
յես ել տոմս ունեմ, ել ինչո՞ւ յեք ինձ հետ
այդպես խոսում:

— Նրա համար եմ այդպես խոսում, —

բարձրացրեց ձայնը Սարդիսը, — վոր զու իրա-
յունք չունես ուրիշի վրա ծիծաղելու, հասկա-
ցա՞ր...

— Լավ, վերջ տվեք, — շան վորդի ոպոր-
տունիսաներ, դահլի տարաք եղ ձեր ինդելի-
կենդամինալիդենդ խոռքերով, այ բայց շեի-
կան խոդիրներով զբաղվեք. — միջամտեց
Սուալինի ճառի գրքույիը թերթող մի բանտ-
էային, վորի անունն Աստուր եք:

❖❖❖

Վարդյանը թղթով փաթաթել եր լամպը,
տղյալը քաշել մինչև. թեերի տակը, թեքվալ
կողքին ու տետրակը դրել եր ներքնակի վրա,
որի դեպքերը դբելու: Ինչպես ամեն որ, դո-
րանոցը լուռ եր ու կիսախավար: Վառարանի
դռան ճեղքից շիկացնած քարածխի փայն ըն-
կել եր հատակին ու վետվետում եր նրա վրա,
կարծես բոցե մի ձող լիներ ընկած հատակին:
Վարդյանը նայում եր բոցե այդ ձողին ու մտա-
ծում «ինչպի՞սի անասնական բթություն...
ինչու Ակոբը կարող եր ցարի, նրա կնոջ ու
տղջիկների անունները հայրանունով ու ազ-
դանունով իմանալ, իսկ Հովոն չի կարող իմա-
նալ, վոր Կլիմ Վորոշիլովն և Կարմիր Բանակի
ղեկավարը: Արժանի՝ յե Հովոն մեր Կարմիր
Բանակի շարքերին»...

Վահան Վարդյանը, նայում և հատակին
ընկած բոցե ձողին ու մտածում «Մեծամիտ

մարդու աղես չնայե՞ց ինձ վրա այդ Նըայր Քար-
բամյանը, վորին յես շտապել եյի համակրելիք
մարդ համարել, վորին համակրանք եյի շոայ-
լում յես»...

Ապա Վարդյանը մտքում մեքենարեն
կրկնեց.

«Եես պետք ենկարեմ, պետք են նկարեմ
նրա այնպես լավ տոնական դեմքը, խեկահան
արույի դեմքն ու նվիրեմ իրեն, դա շատ լավ
կլինի, մենք կմտերմանանք»...

Փակվում են Վահան Վարդյանի աչքերն և
նու աեսնում և դաշնամուրի վրա տառանվող
աղջկա մատներ ու դեմքի վրա թափված թուխ
խոպոպները։ Փակվում են Վարդյանի աչքերը
և Լյուրան և իր տպակյա շրթունքներով ժըս-
տում նրան։

Փակվում են Վարդյանի աչքերը և նու վեր
և թոչում անկողնուց, ինչպես ոճից կծվածը։
Զորանոցի մեջ ուժեղ ոեզոնանսով լոյփում և
ավագի ձայնը։

— Արթնանա՛ւ...



Վահան Վարդյանն ամբողջ որն յեղել է
պարապմունքներում։ Հոգնել և նու այդ պա-
րապմունքից։ Բայց նու առանձին մի ցանկու-
թյամբ և ուզում հոգնեցնել իր ուղեղը մի ժամ
ել։ Վարդյանն ուղում և մի ժամ ել նվիրել
որվա պարապմունքների մասին որադիր գրե-
լուն։ Ամբողջ որվա մի քանի պարապմունքնե-
րը Վարդյանին խեղղում են որադրի նյութերը

առատության մեջ։ Վարդյանը փորձում է դրբել, և դրում է. «մի ժամվա պարապմունքներից հետո յես պետք է քանդեյի հրացանը»...

Վահան Վարդյանը ջնջում է գրածը, այնքան և ջնջում, վոր վոչ մի տառ չկարդացվի։ Նա յերկար մտածում է, ասլա ելի դրում. «առաջին ժամից հետո հրացանը տրվեց ինձ քանդելու»...

Վերջակետ դնելով գրած մեկ տողին, նա ելի ջնջում է դրածը՝ ամրողջ ուժով նրա վրա քսելով մատիտի գրաֆիտը։ Ապա ճախ ձեռքից աջի մեջ դնելով իր ձեռագրով բացիկը, նու ջղածգորեն տրորում է բացիկը, կրկին բաց և անում ու նրա վրա նայելով, բարկացած խոսում է այդ բացիկի ու նրա մեջ դրած յերկտողի հետ։

«Հիմա՞ր, ով գիտի, ինքն որական քանի ժամ է փողոցներում զբունում է դեռ ինձ և մեղադրում։ Ինչ խրատողն է դարձել գլխիս հիմարիկս։ Մեկ եղ վոր այդպես գրի, Վահան Վարդյան, խռովիր, — ասում է նա ինքն իրեն ու ելի տրորում բացիկը։

Ութերորդ որն եր, ինչ նա յեկել եր և դեռ քաղաք չեր դնացել։ Կարոտել եր նա Լյուբային և այդ կարոտն ավելի յեր սաստկանում, յերբ նա մտածում եր, վոր Լյուբայի մոտ չի կարող գնալ մի ամրողջ ամիս։ Ութ որ առաջ եր նա դրկել Լյուբայի իրանը։ Ութ որ առաջ, բայց թվում եր, թե տարիներ են անցել և Լյուբան միայն լուսե մի յերազ և յեղել։

— Մի՞թե ութ որ առաջ եր, վոր յես
վերջին անդամ «մոռացա աշխարհը», հարց-
նում եր Վարդյանը, լցվում կարուառվ ու պա-
տասխանում եր իր հարցին:

— Զեմ հավասում, վազուց կլինի. —

«Աշխարհը, մոռանալը» — դա Լյուրային
գրկելն եր: — Դնանք այդի, Լյուրինկա ջան,
«աշխարհը մոռանալու», — այսպես եր Վահան
Վարդյանը զողում յերջանկության ծովի մէջ:
Իսկ հիմա, նա մի ամբո՞ղջ ամիս չափաք և
տեսնի նրան, հիմա նա յերջանկության ծովից
դուրս բնկած ձուկ և ու առչորդում և, այր-
վում ե անհուն մի կարստից:

Կարուել եր Վարդյանը Լյուրային: Յեվ
մի յերեկո որագիր գրելու վոխարեն նա միայն
մի բացիկ գրեց: Բնդամենը մի քանի տող,
բայց հողեակես հանգստացավ, և ել որագիր
գրելու չղիմեց: Զե վոր որագիրը հողեկան
Հանգստության միջոց և նրա համար: Յեվ ա-
հա իր գրած այդ բացիկը ինքը՝ Վահան
Վարդյանը ջղաձղորեն արորում է: Լյուրան
այդ բացիկը նամակի հետ ե ուղարկել, թե՝
«Վահան, մեկ ել կարդա այդ բացիկը ու ամա-
չիր»...

— Ինչո՞ւ ախար, ինչո՞ւ, — ջղայնացած
հարցնում է Վարդյանը:

Մէքենորեն նա կարդում է իր գրած բա-
ցիկն ելի մի անդամ.

«Լյուրինկա ջան,

«Մեզ մի ամիս քաղաք դադ չեն թողնելու:

Մի ամբողջ ամիս։ Նորեքը մի ամիս պետք է
մնան դաստիարակվելու, յես ել պետք է
«դաստիարակվեմ»։ Այդքան ժամանակ սարե-
րի ու ծովերի չափ կիարոտեմ քեզ, իմ սիրելի
Լյուրա, իմ արսինստ։ Այսոր ելի հարցը
ստույգ իմանուլու համար։ Առացին, վոր մի
ամբողջ ամիս չեն թողնելու։ Յես տխրեցի։
Ճիրությամբ ու կարոտով գրում եմ քեզ այս
բացիկը, իմ կյանքի իմաստ դու, Լյուրա։
Թույլատրվում ե գալ մեզ տեսնելու։ Կուղեյի
վոր հենց ամեն որ այցի դայիր ինձ։ Բացիկ-
ներ կարող ես գրել ինչքան ուղենաս։ Առհա-
սարակ շատ-շատ և շուտ-շուտ գրիր։ Նամակ-
ներդ սդ կլինեն ինձ համար։ Կիսատ մնացած
նկարդ լավ պահիր։ Մի ամիս հետո, յերբ
հանդիսատ որերին թողնեն քաղաք գալու,
իդամ ու աչքեցի հմմրուրելուց հետո, կսկսեն
նկարել համրուրածս աչքերը, վոր նկարել եմ
ու չեմ վերջացրել։ Լա՞վ։

Շուտ, շուտ արի ինձ տեսնելու։ Գրիր։
Ամիսոս, վոր բացիկի վրա տեղ չմնաց, շատ
բան եյի ուղում գրել, ուղում եյի անընդհատ
գրել……

Ա՛խ, ենքան տխուր եմ, Լյուրա ջան,
շա՞տ եմ տխուր։

Համրույրներով՝ Վ. Վ.։

Վարդյանը բացիկը կարդալուց հետո, մե-
կեն նույն ջղաճգությամբ, ինչ ջղաճգու-
թյամբ, վոր տրորում եր բացիկը, մատնոը
վերցրեց և սկսեց գրել։

«Ճիմարիկս, ի՞նչ վատ բան կա սրա մեջ,
վոր գրել ես թե «մեկ ել կարդա բացիկդ ու
ամաչիր, թե՝ «բանտում հո չե՞ս, վոր եղակես
տխուր նամակ ես զըռում, թե՝ «վոր սիրադ ու
հոգիդ նկարես՝ կնայես ու կամաչես ինքդ քեղ-
նից»—

Ի՞նչ խրատողն ե դարձել դլխիս...

Բայց, այնուամենայնիվ, կարծես թե
Լյուբան վորոշ չափով իրավացի յե:

Զե՞ւ, չե, ճիշտ չե, յես նրան սիրո խոսքեբ
եմ գրել, իսկ նա քաղաքական խրատներ և
կարդում դլխիս:

Քաղաքակա՞րճն Լյուբինկա ջան... բայց և
այնպես յես քեզ կարուտել եմ և կուզենայի ա-
ղատ լինել, թեկուզ շրջեյի քաղաքի դատարկ
փողոցներում ու չղտնեյի քեղ...

Աշուն, սիրելի աշուն, արդեն ցրտաշունչ
և դառնում...

Ցես վակում եմ լուսամուտը»:—

Վահան Վարդյանը կծկվեց աղյալի տակ:
Նա մըսում եր: Նրան թվում եր, վոր սառց
քամին հասնում ե մինչեւ իր սիրաը...
—

Շտարի № սենյակի լուսամուտները նա-
յում եյին գեղի արևելքը: Արևելքը վորչ եր
ու անհրապույր: Միայն մի քանի կտոր ամ-
պեր եյին բաց բրոնզի գույնով ներկված: Ցն-
քեկոյանում եր: Արևելքը ճիշտ այն դույնն
ուներ, ինչ վոր Արևեմուտքը՝ առավոտյան:
Վահան Վարդյանը կանգնել եր № սեն-

բակի մեջտեղն ու դուքս եր նայում արևելքի
անհրապույշ դորշությանը։ Նա չեր կարող ա-
սել պատճառը, բայց զգում եր, վոր ինչ վոր
տարտամ մի դրացում համակել ե իրեն։ Վարդ-
յանը դույդ լուսամուտներից դուքս եր նայում
անորոշ, վոչինչ չարտահայտող հայացքով,
տյնպես անփայլ հայացքով, ինչպես արևել-
քը՝ յերեկոյան։ Նա դիտեր, վոր իր տրամա-
դրությունը տեղը չի և չեր ցանկանում ան-
տրամադիր մնալ։ — Նայել բնության գունեղ
պատկերներին, ուշագրավ յերեռությներով
հետաքրքրվել, — այս եր մշտական միջոցը
վահան Վարդյանի համար՝ հաղթահարելու
այն տարտամությունը, վոր հաճախ կամույտ
յերակիների արյան հետ լցվում եր նրա սիրտը։

Արևելքի դորշ միապաղաղությունից
չաղըեղով վոչ մի՞ն դեղադիտական հաճույք,
վահան Վարդյանը ծծելով իր վերին շրթուն-
քը, սեղանին մոտեցավ։ Սեղանին մոտենա-
լուց մի քանի բույե հետո, նա հարցրեց ինքն
իրեն։

— Լավ չե՞ր լինի, վոր յես գնդում շա-
րային լինեյի, քան շտարչ աշխատող, — յեր-
կար ժամանակ նա չեր պատասխանում իր
հարցին։ Վո՞ր դեպքում լավ կլիներ, նա դըժ-
վարանում եր պատասխանել։ Տարիներ շարու-
նակ սովորել, նկարել, դժել ու գծագրել, այ-
նուհետեւ յերկու տարի աշխատել, կատարե-
լով նույնը և այդ ամենից հետո բանակ գնաէ
ելի նո՞ւյնն անելու։ Պարզ ե, վոր այս դեպ-

քում աշխատանքը կարող եր դադարել հոգեկան բավականություն պատճառելուց : Իսկ ոչ խատանքի մեջ վոչ ուրիշ բան, քան այդ եր միայն պահանջում վարդյանը :

Վահան Վարդյանը վորոշեց, վոր հենց դայել եր այսորվա վատ տրամադրության պատճառը : Բայց այս անդամ տառամների տուի տոնելով ներքին շրթունքը, նա մտածում եր այն մասին, թե վորը կլիներ դնդում շարային լինելու վատ կողմը : Մտածելով այդ մասին, նա մխիթարեց ինքն իրեն, վոր շտարում է : Չե վոր յեթե դնդում լիներ, ամրող որը Փիզիկական տանջանք պետք ե կրեր : Առավոտ կանուխ Փիզիկուլտուրայի պարապմունք, հետո՝ շարային վարժություններ, փորձնական պարապմունքներ դաշտում : Քարչ պետք ե տառ դնդացիրը յետեիցդ, նետես քեզ փոսը, թշնամու յենթադրյալ համազարկից կամ արկերից պաշտպանվելու համար, ուսիդ վրա պետք ե տանես թեթև դնդացիրը, վորն այնքան ել թեթև չի, վրադ պետք ե կրես պարտադիբ զգեստավորման ու զինավորման բոլոր պարզների ծանրությունը : Ահա դնդում շարային զինվոր լինելու հետ կապված բոլորը :

Բայց վո՞րն եր հիմնականը, վոր Վարդյանը մոռացակ : Մոռացածը Վարդյանին այնքան լավ բան եր թվում, վոր նա ակտոսում եր և ամրող միաքը լարում մոռացածը գտնելու համար : Վարդյանն ինքնարերարար չեր, վոր ոկտեց մտածել այդ մասին : Յերկու որ առաջ

այդ մասին նա ու Հրայր Քարամյանն ելին
խոռել: Քարամյանի կարծիքն այն եր, վոր
բավ կլիներ, յեթե դնդում լինելին, այնտեղ
նրանք կոռվորելին ուազմական տեխնիկան ա-
մելի լայն ծավալով ու խորությամբ, քան
շտարումն են սովորում: Հիշելով Քարամյանի
կարծիքը, Վարդյանն ավելի յեր մոռանում
դնդում շարային լինելու դլխավոր վատ կող-
մը:

Նեղորտելով իր մոռացկոտության վրա,
Վարդյանն զգում եր, վոր կամաց-կամաց մո-
տենում և մոռացած մտքին, վորովհեան տո-
տիճանառար հանդստանում եր ու թեթեա-
նում: Նա այնքան հանդստացավ, վոր այլևս
չեր մտածում այդ մասին, յերբ հանկարծ
չիշեց: Հիշեց և ուժախացած, ժպտաց դա-
դարկ սենյակի քարտեղներով պատած պատե-
րին: Գնդում շարային լինելու դլխավոր վատ
կողմն այն եր, վոր նա ամիսներով քաղաք չեր
դուրս գա: Չե վոր կարող եր չընկնել այն
դունդը, վորը քաղաքումն ե: Ռւրեմն՝ ամիս-
ներով նա չեր տեսնի Լյուրային, ամբողջ ա-
միսներով...

Վահան Վարդյանը մխիթարում եր ինքն
իրեն, վոր շտարումն ե, իսկ շտարը գտնվում
է քաղաքի դլխավոր փողոցներից մեկի վրա:

Վաղուց արենելքի ամպի կտորները կորց-
ըել ելին իրենց բաց բրոնզի գույնը: Դանդաղ,
ինչպես վիրավոր, կարավանից կտրտված ուղ-
տեր, ամպի այդ կտորները բարձրանում ելին

կասլույտ զենիթը։ Գունատ շողով փալիլում
եր մի աստղ ու կորչում Վարդյանի աչքից,
ասլա՝ մեկ ուրիշը, յերբորդը։

Դարակից հանելով մի «Դործ», Վարդ-
յանը դրեց այն լուսամուտում ու իր տակը մի
աթոռ քաշեց։ Նայեց նա «զործ»-ին, նայեց
արդեն յերեացող աստղերին ու աջ ձեռքի ցու-
ցամատն ականջը կոխելով, եղի սուզմեց մըս-
քերի մեջ։ Զախ ձեռքի ցուցամատով ել խոռ-
նելով ձախ ականջը, Վարդյանը կոմունարկան
ներքեւ քաշեց։ Վարդյանի ականջները ճնշվելով
կոմունարկայից, վոր սեղմում եր նրանց ար-
մատները, ցած եյին ծալվել։

Վահան Վարդյանը «գործ»-ից հանեց կա-
պույտ մի թուղթ, դասավ մի քանի մանր թեր-
թիկներ ու յերցըրեց կարկինը։ Նա պետք է
նկարեր տակտիկական պարապմունքների հա-
մար մի քանի խնդիրներ։

Մի քանի անգամ կարդալով մանր թեր-
թիկներից յերկուսը, նա մի քանի անգամ ել
մտքում կրկնեց կարդացածն ու սկսեց կետեց
նշանակել թղթի վրա։

Դա առաջին խնդիրն եր։

Ամսի քսանյերեքին, յերեկոյան ժամը
17-ին Հայկական Դիվիդիան պետք է իր կենտ-
րոնացումը վերջացնի Յերևանում։ Նույն ամ-
սի քսանչորսի առավոտյան յերկրորդ դիվի-
զիան պետք է կենտրոնանա Աշտարակում։

Այս ե «Կարմիրների»-ուժերի դասավո-

բության մասին : ամբողջ տեղեկությունը:
թշնամու սազմական ուժերի դասավորության
ու տեղաշարժերի մասին, ողային հետախու-
ղության միջոցով հայտնի յև դարձել հինգ
բան :

Առաջին: X ամսի քսանյերկուսին յերե-
կոյան ժամի 17-ին ողային հետախույզները
նկատել են, վոր թշնամու վոքքը զորամասերն
Արաքս կայարանից շարժվում են դեպի Սար-
դարաբատ :

Երեկորդ: Պարզված ե, վոր X ամսի
քսանչորսի յերեկոյան, Լենինականից դեպի
Մաստարա տեղ ե շարժվի թշնամու հինգ կի-
լոմետր խորություն ունեցող մի զորասյուն,
կազմված հետեւակներից ու հրետանիներից :

Յերրորդ: X ամսի քսանյերկուսի յերեկո-
յան ժամը 17,30-ին՝ «Կարմիրների» ողային
հետախույզների կողմից նկատվել են թշնամու
Լենինականից Մաստարա շարժվող զորասյան
գյուղամասերը. և, պարզվել ե, վոր դրանք Լե-
նինականից շարժվում են դեպի Մոլագյոքչա և
կանգ են առնելու այնտեղ :

Զորրորդ: X ամսի քսանյերկուսին, յերե-
կոյան ժամը 18-ին ողային հետախույզները
նկատել են, վոր Լենինական կայարանում են
կենտրոնացել թշնամու տասնեւհինգ տանկերը:
Տանկերի դասավորությունից յենթադրել են,
մոր թշնամու տանկային ուժերը հանգստանում
են :

Հինգերորդ: Պարզված և, վոր թշնամուու
ողային ավիացիան ավելի ուժեղ և և հնարա-
վորություն չի տալիս «Կարմիրների» ողային
հետախուզությանն աշխատելու:

Գծաղրելով ամբողջ խնդիրը, ջրանցքնե-
րը, բարձրությունները ու ստրատեգիական
մյուս պայմանները, ինչպես դրանք նշված
ելին մանր թերթիկների վրա, Վարդյանը յետ
դնաց աթոռի վրա ու հորանջեց: Ապա կոմու-
նարկան հանելով զլիսից, նա տրորեց աչքերը,
կըկին վերցրեց սե մատիտն ու գծաղրի տակ
գրեց. «ՅԵԶԻԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ», և, հարցա-
կաններ՝ մի քանիուր: Այդ հարցականներին
պատասխաննելը Վահան Վարդյանին չեր վերա-
րեռում, բայց նա փորձեց, չի՞ կտրող արդյուք
շուծել:

Մի քանի անդամ ցուցամատերն ականջը
կոխելուց հետո, Վարդյանն զգաց, վոր դյուխն
սկսեց ցավել: Տրված պայմաններից յելինե-
լով պետք եր ապացուցել, «Կարմիրների» կողմն
և Հաղթությունը, թե «Սպիտակների»—որը—
վար հարց:

Վարդյանը հիշեց տեխնիկումը, յերկրա-
չափության դասերը, յերբ տրված պայմանն
ու պատկերը գեղեցիկ գրելով ու գծելով, նա
կանգ եր առնում հարցականների վրա ու չեր
զտնում այդ անիծյալ «ՅԵԶԻԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ»
ապացուցելու ձեւը: Բայց այնուամենայնիվ ա-
վելի հեշտ եր ապացուցել յերկու յեռանկյուն-

ների հավասարության յերեք պայմաններից
վորեև մեկը, քան այս խնդիրը :

— Կօրտ եղ զնայ — բարձրածայն ասաց
Վարդյանը, ծալեց «Գործ»-ն ու կոմունարկան
վերցնելով, մոտեցավ լուսամուտին :

Փայլիլում եյին ասաղերը : Ահա մեկն ըն-
կավ իր յետելից թողնելով լույսի այնպիսի մի
դիմ, վոր նման եր գծադրի վրա Վարդյանի
դժուճ Սարդարարատի ջրանցքին :

— Ահա քեզ յերկինք . սա՛ յե ի՞ւ կարդա-
ցած ուստի պսեաների՝ կոմիկասի յերկինքը, —
Վարդյանն հեղնարար ժպտաց ու փակելով
շտարի : № սենյակի դուռը, դպրոց հանող
քայլերով ներքեւ իջավ փայտե աստիճաննե-
րով :

Լենինյան անկյունումն եյին բոլոր բանա-
կայինները : Յուրաքանչյուրը մի հրացան վեր-
ցրած, մաքրում եր : Վարդյանը մոտադրադ
ու գանգտաղ քայլերով մոտեցավ նրանց :

— Բ'հը, ընկեր ինդիկիենտը յեկավ, —
բղամից Սարդիսը, — յերեք աշխատանքի
լծեք ինդիկիենտին . . .

— Բավական ե, ընկերներ, վերջ տվեք, —
պատասխանեց Վարդյանը վիճակորոված :

— Յես արդեն վերջ եմ տալիս պրծա,
գնա դու յել քո հրացանը վերցրու մաքրա,
ա՛յ, ենա՛, — պատասխանեց Սարդիսն իրոնիկ
տոնով, բայց սառնարյուն ու հանգիստ :

Վարդյանը վերցրեց հրացանը, շամփուրի
ծայրի մաքրիչի վրա փաթաթեց սպիտակ շորն-

ու փորձեց փողի մեջ մտցնել. հակառակ դոր-
ծաղրած ուժին, շամփուրը ներս չեր գնում,
մաքրիչի վրա շորը հաստ եր փաթաթված:

Տեսնում ես, չես կարում մտցնես... յես
իմանում ի, թե եղ տեսակետից դու լավ կլի-
նես.— կատակեց Առատուրը:

— Չե, Առատուր, դու ոխարվում ես, եղ
ասպարիղում Վահանը շատ ակտիվ ա, ինչ-
քան չինի ինդիկենտ ա, բա՛զամ,— հարեց
Սարդիսը:

— Չի լինի, վոր վերջ տաք եղ ձեր ինտե-
լիդենտ ածականին, ծաղրելու լինի, յես ո-
վելի վարպետ եմ,— զայրույթի հասնող վի-
րավորանքով պատասխանեց Վահան Վարդ-
յանը...

— Վո՞ր Փարզործումն ես այլաբանել ու
վարպետ դարձել:

— Առում եմ բավական ե:

Բոլորն ել լոեցին: Մոտենալով Սարդիսին,
Առատուրը փսփսաց.

— Վոր խոռվում ա, ել ձեռ մի առեք,
բոլ ա...

— Հակոռակը, վոր խոռվում ա, պտի ձեռ
առնենք, — բարձր ձայնով պատասխանեց Սար-
դիսը, ապա դիմելով Վարդյանին, շարունա-
կեց:

— Վոր առում ենք ինդիկենտ, դու ել ու-
ռում ես մեջո, ի՞նչ կարիք կա խռովելու, ըն-
կերներ ենք, խոռում ենք ընկերական տեսա-
կետով, շուլուխ ա.

— Ռւրիշ բան չունե՞ք խոսելու:

— Վոր ունենայինք են առ ուրիշ բան կխոսեցինք, ելի՛: Բայց խոռվելը լավ բան չի, վահան: Ասում ենք, ելի՛, հո ինդիկենտ չեղա՞ր: Այլանջներդ կախվում են կասես թե լույնեն, մի դաշնեդ ենալես կախ ես դցում ու հետդ քաշում, վոնց վոր փետով խօհած լինեն, վոտներդ ել ենալես ես իրարից հեռու քցում, կարծես թե թազա կարգված աղջիկ լինես: Պարզ առ, վոր ես բոլորն ինդիկենտություն չի: Մենակ դու սրառվ ես ինդիկենտ, յերկրորդը՝ յերեսիդ սիվտակ կաշով, ու, մեկ ել՝ եղ կարմիր պոռշներովդ... աղջկա պես կարմիր պոռշներ ունես, մարդ վոր պաչի լազաթ կտա... .

Զայրույթը յեռաց, վահան վարդյանի մեջ, վորքան ել աշխատեց նա ոառնարյուն մնալ, չկարողացավ Ատամներն ամուր սեղմելավ իրար, նրանց արանքից դսպված դայրութով, ոճի ֆշոցի պես նետեց նա:

— Ցինի՛կ...

Վարդյանի բորբոքված դեմքից ու պըղտորվող աչքերից յերեաց, վոր նա բարկուցած է:

— Վերջ տուր ելի՛,— բղավեց Սարդսի վրա Ասատուրը:

Զգալով, վոր չափն անցել է, Սարդիսը բարձրաձայն պաշտամանվում եր, այնպես, վոր վարդյանն ել լոի:

— Ի՞նչ կա վոր, բնկերական շուլուխությունն ենք անում, ի՞նչ ասի վոր...

Փակաղակին կիր տեղը մտցնեցով, Վարդյանը յուղից քամած շորով մաքրեց հրացանի ազուստն ել ու դուրս յեկավ լենանկյունից: Նրա սիրան այնքան եր լցվել, վոր քիչ եր մնում լաց լինի: Թէ ինչո՞ւ եյին այդպես վարվում իր հետ, նա չեր հասկանում: Ինչո՞ւ հապա նույն կերպ չեն վարվում նրանք Քարամյանի հետ, նույն կերպ չեն վարվում իրար հետ: Արդյոք այդ բոլորի մեջ մի տեսակ տեսնդենց, չարաժառություն չկա՞: Վարդյանը մտածում եր հիշելու, գտնելու, մի այնպիսի պատճառ վարն հիմք կամ առիթ լիներ նրանց այդպես վարվելու: Յեկ չեր գտնում այդ հիմքը: Ինչո՞յի կարող եր Վարդյանը, թեկուղ թույլ հակակրանք սաեղծել նրանց մեջ դեպի ինքը: Այդ նա չեր հասկանում:

Շտաբի բակում գնում գոյիս եր Վարդյանն ու հուզված փնթինթում ինքն իրեն: Նրա կողքից քայլողը կարող եր զսել իրար յետելից կրկնվող միենույն բառերը:

— Ամբարտավաններ, ամբարտավաններ...

Յերկինքը պարզ եր ու փայլվիուն: Բակում թափթփված ջուրը սառչում եր: Բակի ջրի բաց ծորակից ջուրն այնքան զույգ աղմուկով եր թափվում իր դեմքի գոտն մեջ, վոր Վարդյանին թվում եր թե սիրելի յերգի նվազըն ե լառմ:

Բակում զնում—դալիս եր Վարդյանը և նրա
մեջ յեռացող վիրավորանքն ու զայրույթը տե-
ղի Ելին տալիս մի ուրիշ բանի: Նա մտածում
էր, թե ինչն եր այդ, վոր մի քոան ըոպեցում
այդպես փոխում եր իրեն:

Քայլերը դանդաղեցրեց Վարդյանը, ապա
կանգնեց: Գոան մեջ թափվող ջրի զույալ աղ-
մուկն ամենի տշխույժ եր: Վարդյանը մի քանի
քայլ մոռեցավ թափվող ջրին և այդ ըոպեցին
զդաց, վոր կարուտն ե իր մեջ խոսում: Վարդ-
յանը նայեց յերկնքին ու փափսաց.

— Ինչ սքանչելի տշնանային յերկինք
ե...

Կարուտն եր խոսում Վարդյանի մեջ զու-
յալ ձայնով, ինչպես ծորակից զոան մեջ թափ-
վող վճիռ ջուրը:

Դուրս գալով բակից, Վարդյանը արագու-
թյամբ զեսպի շտարի շենքի մուտքը գնաց: Ո-
րապեհի սենյակը: Մտավ ու առանց վայրկյան
սպասելու, զդաստ կանգնեց ու պատիվ վերցընց
ամառին.

— Թույլ տվեք, ընկեր Ավագ, ժամ ու կե-
սով քաղաք գնալու:

— Ի՞նչո՞ւ, ի՞նչ ե պատահել:

— Վոչինչ, հենց ենպես...ուզում եմ...
տնից մի յերկու զիրք բերել կարդալու:

— Գի՞րք: Զե՛, քաղաք գնալ չի կարելի:

Վարդյանը դլխիկոր դուրս յեկավ որապա-
հի սենյակից, այս անգամ զեսպի զորանոցը:
Մեջքի վրա յերկար պառկելով իր մտհճակալի

վրա, նա շնչում եր հեղինեվ, կարծես մի քանի
կիլոմետր տարածություն վազել եր միանդա-
մից:

— Այդպես ուրեմն թույլ չտվեցին, Լյու-
բային չտեսա, վոչինչ...

Այդ որը Վահան Վարդյանը վոչինչ չգրեց
իր որադրի տետրակում:

— Նրացանն ունի յոթ զյխավոր մաս՝ փող,
փակաղակ, պահեստատուի, ագուստ, փողա-
պատ, սվին և շամփուր.—

— Դու յել կրկնիր Ասատուր:

Ասատուրը, վորին բանակայինները Բատ-
րակ, կամ Բայլշեիկ Ասատուր եյին ասում և
նա դրանից բնավ չեր վիրափորփում, կրկնում
եր պետի տատձները: Վահան Վարդյանը չեր
լսում վոչ պետին, վոչ ել բանակայիններից
վորեն մեկին: Նա դեռևս նախորդ որվա արտ-
մադրության մեջն եր: Վահան Վարդյանը
տիսուր եր: Այդ ուստածառով ել նա պարտավուն-
քում նստել եր դժոհությամբ: Նստել եր,
բայց մտքով այնտեղ չեր:

— Ազա դու վերցրու հրացանը, ընկեր
Հովո, — լսվեց պետի բարձր ձայնը:

Վարդյանը սթափվեց մտքերից, յերբ լսեց
Հովոյի անունը: Ամեն անդամ, յերբ Հովոն եր
խոսում, վարդյանը լարում եր իր ամբողջ լսո-
ղությունը: Նրան հետաքրքրում եր, թէ ի՞նչ
դուրս կտա Հովոն: Հովոն հաճույք եր պատ-
ճառում Վահան Վարդյանին: Վարդյանն ինչ-

քան չեր սիրում նրան, բարկանում եր ինքն իբ
մեջ նրա կողության վրա, այնքան զվարճա-
նում եր նրանով:

Հովոն վերցրեց հրացանը:

— Ի՞նչ հրացան եղա:

— Մոսենի յա՛, ի՞նչ ա:

— Քա՞նի մաս ունի:

— Ութ, չե՛, չե՛, յոթ, յոթ մաս ունի:

— Յույց տուր մասերը, վորո՞նք են:

— Վորո՞նք են:

— Հա, ցույց տուր եղ յոթ մասերը:

— Եւ անտեր մտես դնաց...

— Մտածիր, ասա.

— Թո՞ւ, անտեր, իմա՞լ մտես դնաց...

— Աս որինակ վո՞ր մասն ե:

— Շիշն ա, վոր մասն ա.

— Շիշ չի, այլ շամփուր:

— Ճիշտ ա, ճիշտ ա՛, շամփուր ա:

— Աա՞:

— Լուկեն ա,

— Լուղա չե, ընկեր Հովո, այլ փող:

— Փող, փող, ճիշտ ա, փող ա:

— Յերբ Հովոն վերջացրել եր, Վարդյանն
եղի և՝ պարապմունքումն եր և այնտեղ չեր:
Ակամա նրա միտքն ուրիշ տեղ եր սլանում և նա
չեր կարող կանգնեցնել մաքի այդ սլացումը,
պարապմունքը լսելու համար:

Իսկ յերբ Հովոն նստել եր արդեն, Վարդ-
յանն զգաց, վոր նախորդ որվա պես քաղցր մի
կարոտ և հուզում իրեն: Նա մտքում վորոշեց

անելիքը ու անհամբեր սպասում եր պարապ-
մունքի վերջանալուն:

Պարապմունքը վերջացած համարիեց:

Վահան Վարդյանը մոտեցավ ոլետին:

— Ընկեր պետ, քույրս հեռու տեղից ե յե-
կել— ուզում ե ինձ տեսնել, յերկու տարի յե-
ինչ չի տեսել, խնդրեմ թույլ տաք,— Վարդյա-
նը խնդրում եր աղաջական տոնով:

— Վո՞րտեղից ե յեկել ձեր քույրը:

— Մոսկվայից, այնտեղ նա կինո դերա-
սանուհի յե:

Գետը ժպտաց: Ապա թեքմելով դեպի տ-
վագը, կարդադրեց:

Թույլ տալ մինչեւ յերեկոյան ժամի 9-ը:

Վահան Վարդյանը դուրս ընկալի: Նրա
սիրտն իշենից առաջ եր թուչում: Քիչ եր մնում,
վոր Վարդյանը վերմիեր թուչի և մանկապար-
տեղ գնալու որերի պես ճշա.

— Խարեցի, խարեցի...

Վահան Վարդյանը լյուբայի մոտից վերա-
դարձավ ժամի 11-ին, դեռ չհաղեցած նրանով:
Որապահին նա պատասխանեց, վոր իրեն տեղ
ելին ուղարկել: Շտարի դռնից ներս մտնելով,
եր համար միայն լսելի ճայնով ասաց նա.

— Բախտս բերում ե, բոլորն ել դյուբահա-
վատ մարդիկ են...

Վարդյանը մտավ զորանոցը: Քնած ելին:
Մոտեցավ նա մահճակալին: Հանկարծ նա իր
յետեկոց փոփոխոց լսեց, թվաց թե մեկը հետեւում
ե իրեն: Ծետ դարձավ:

Հովհանն եր:

Ոճի դլուխն ողի մեջ ցցած, ինքն իրեն
կըրկնում եր նա.

— Ընկեր Վորոշիլյով... ընկեր Վորոշիլ-
յով...

Հեղնական մի ժամկետ խաղաց Վարդյանի
դեմքի վրա:

—Մարդը քնի մեջ ել շարունակում ե մտա-
ծել, ինչ անխոնջ ուղեղ, — ու քիչ մնաց, վոր
Վարդյանը փոթիաբ:

Վարդյանը բարձրացավ լամպը թղթով
փաթաթելու: Յերբ նրա աչքերը փակվեն, նա
թուղթը, ինչոքս ամեն որ, ձողով ցած կնետի:
Բարձրացավ Վարդյանը և ողի մեջ բռնեց լամ-
պը:

— Ի՞նչ ես անում, — լսեց նա կողքից:
Նրա մարմինը փշտքաղվեց:

Ավագն եր:

— Ի՞նչ եք անում:

— Ընկեր ավագ, ուղում եմ լամպը թղթով
փաթաթել, ջղերիս վրա աղղում ե...

— Իջեք, իջեք, ջղերի վրա աղղում ե...
իջեք: Գիտեք, վոր հրամանով լամպը պետք ե
վառ մնա, բացի դրանից ել, ժամի 11-ից անցել
ե 10 րոպե, յերկու ժամ 10 րոպե ուշացել եք:
Վաղը կներկայանաք:

— Լսում եմ, ընկեր ավագ...

— Խսկ հիմա քնեք առանց լամպը փաթա-
թելու:

— Լսում եմ...

Վահան Վարդյանն անկողին մտավ, իբ
հետ նրա տակը մտցնելով իր զայրույթը:

— Դեռ իրեն հարկավոր ե դրել ու կարդալ
սովորել և ինձ ստիպում ե լոել, վինթինթում
եր Վարդյանն անկողնու տակ:

Վահան Վարդյանն անկողին մտավ ու չկա-
րողացավ դապել զայրույթը՝ քնելու:

Իսկ Հովոն ընկեր Վորոշիլյով... ընկեր
Վորոշիլյով...—ով կարծես սղոցում եր Վարդ-
յանի նյարդերը: Մի անդամ, յերբ մի անգի-
տան թութակ այդպես խանդարում եր Վարդ-
յանի քունը, նա սպանեց թութակին:

Առավոտյան, յերբ Վարդյանը տուն գնաց,
նման եր նա պարզած, ժամացող արևոտ որվա:
Թխալու որվա պես տիսուր դարձավ նա, յերբ
անկողին մտավ: Բնությունն ու մարդու ընա-
վորությունը նման են իրար:

Վահան Վարդյանը քնեց խռովահույլ հո-
դով:



Վահան Վարդյանը խարեց Լյուբայի մոտ
գնալու համար: Բայց ճնշպե՞ս: Նրան, վորին
նա սիրում եր վորապես նկարիչ Վահան Վարդ-
յան, նրան ներկայանար վորապես զինով՞յ Վարդյան:

— Վոչ, Լյուբային միայն նկարիչ Վարդ-
յանի կիրթ հագուստով իրավունք ունեմ հան-
պելու, և վոչ ուրիշ կերպ,— վորոշեց Վարդյա-

նը ճանապարհին։ Մինչեւ տուն հասնելն այնպես
եր նեղվում նա, վոր թվում եր թե թաղիքով և
փաթաթված։ Տանը Վարդյանը շորերը փո-
խեց, շինելն ու սալողները հանելով, հաղավ
դարձնագույն կոստյումը, դալուստիկը կապեց
ու ներկայացավ Լյուբային, կատարյալ ջենտ-
լիմենի տես։

— Հլա կարմիր բանակայինիս մտիկ, —
ծիծաղեց Լյուբան և, սատանայական խորա-
մանկությամբ (առանց վորի Վահան Վարդյա-
նի համար մի քիչ պակաս հետաքրքրական
կլիներ նա) մատը թափ տվեց Վահանի վրա

Վահան Վարդյանը կհարձակվեր նրա վրա,
կդրկեր նրան ու կկծեր այդ չարաճնի մատը,
յեթե Լյուբայի փոքր յեղբայրը տանը չլիներ։

— Այլելի լավ կլիներ, վոր զինվորական
հազուսառով ինձ մոտ գայիր, իզուր ես ժորժի-
կացել, — քնքարար հանդիմանեց Լյուբան։

Լյուբայի փոքր յեղբայրը տանից դուրս յե-
կավ։

Վարդյանը հարձակվեց Լյուբայի վրա, մի
քանի անդամ ամբողջ ուժով համբուրեց, ապա,
թեների մեջ առնելով բարակ իրանը, տարավ
նրան դեպի մահճակալը։

— Այդ ի՞նչ դողություն ե, հե՛յ, — շեմ-
քի վրա յերեաց Լյուբայի մայրը, — դո՞դ զին-
վոր. այդ յե՞րբ ես յեկել։

Մի թեր դեռ Լյուբայի իրանին փաթա-
թած, Վարդյանը մոտեցավ Լյուբայի մորը։
Մայրը համբուրեց Վահան Վարդյանին։ Իսկ

Վարդյանը նրա ձեռքը։ Ներքին անհուն մի ու-
րախություն դզալով, մայրը կճմթեց Լյուրայի-
թուշն ու գունաթափ շրթունքներով մբմնջաց։

— Չա՛ր աղջիկ, դո՞ւ ել ես գաղտուկ բա-
ներ անում։

Վահան Վարդյանը գնաց տուն, հագալ-
ղինվորական շորերն ու ելի հանդիսակեց Լյուրա-
յին։

— Այ, այդպես ավելի յես դուք գալիս
ինձ։ — քրքջաց Լյուրան։ Բայց Վարդյանն ա-
մաչում եր կողիտ ու մեծ սալողներից, իմաս-
եր զդում իրեն շինելով ու կոմունարկայով և,
վորպեսզի Լյուրայի չար աչքերից աղատվի;
ամուր գրկում եր նրան ու դեմքը սեղմում
կրծքին։

— Վայրենացել ես, Վահան, եղակես ել
կոեղմե՞ն — հատուկ հաճությամբ բողոքեց
Լյուրան։

— Տաս-տասնըհինդ որվա համար այսոր
պետք ե տեղը հանեմ, Լյուրինիա ջան…

Այդ որը, յերբ կտմանդայի ավաղն զդաստ
տվեց Վարդյանին և ասաց, վոր նկատողու-
թյուն ե անում նրան ժամի իննի փոխարեն
տասնեմեկին զորանոց դալու համար, վորը
զինվորական կարգապահության խախտում և,
Վարդյանը չեր կարող մտածել, վոր՝ ավելին ե
սպասում իրեն։

Ալագի նկատողությունից հետո Վարդ-
յանի տրամադրությունը նույնիսկ բարձր եր-
ֆորձնական նշանառության պարապմունք եր:

Վարդյանը թեք եր բոնում հրացանը։ Վորքան
ուղղում եյին, դարձյալ նա սխալ եր բոնում։

— Չե, ախտեր ջան, քո բանը թեք ա, դու
բայլշեիկյան գծից թեքվել ես, — կատակում
եր բայլշեիկ Ասատուրը։

Վարդյանը հրացանը մեկ դեպի աջ եր թեք
բոնում, մեկ դեպի ձախ և Ասատուրն ասում եր.

— Քո մեջ աջ ու «ձախ» թեքումները
խառնվել են իրար բալամ, դու բայլշեիկյան
գծից թեքվել ես...

Բոլորը ծիծաղում եյին Ասատուրի կատակ-
ների վրա։ Այդ կատակներում անախորժ բան
չկար նաև վահան Վարդյանի համար։ Նա ի-
րեն այնքան եր ուրախ զգում, վոր թվում եր
թե գեղարվեստական տեխնիկումի ընկերու-
հիներով և շրջապատված և վոչ թե նրանցով,
վորոնցից հաճախ կատաղելու չափ զայրա-
նում ե։

— Քաղաքավարի խոսելն ա՞ , վոր վոչ վոք
չկարա վրադ, — ելի մեջ ընկալ Սարդիսը։

Վարդյանի արամադրությունը մեկեն վոխ-
վեց։

— Դե, ինչպե՞ս իստերիկայի հասնելու
չափ չհուղվես, յերբ քաղաքավարությունն ել ե
ծաղրվում, — սկսեց զայրանալ Վարդյանը։
Յեվ ուղղակի դիմեց Սարդսին.

— Դու ե՞լի սկսեցիր, իսկ յես քեզ մարդ
չե՞մ հաշվում, դրա համար ել չեմ պատասխա-
նի քեզ...

Սարդիսն ել վրա տվեց։

— Դու ինդլիկենդ մարդ ես, իհարկե մեղ
մարդ չես հաշվի...

Պետը չեր լսում: Վարդյանին ու Սարդսին
մոտ եր Քարամյանը: Ռւղղակի ձեռվի, մի տե-
սակ հրամայելու յեղանակով, վորից վահռն
Վարդյանը բնավ դժգոհ չմնաց, միջամտեց
Հրայրը:

— Վերջապես վերջ պետք և տա՞ք, թե չե:
Վարդյանն զգաստացավ ու լուց:

Այդպես: Լյուբայի մոտից վերադառնա-
լուց հետո մի նկատողություն ավագի կողմից,
աննշան մի անախորժություն Սարգսի հետ
պարապմունքում և, ուրիշ վոչինչ:

Թվում եր թե ամեն ինչ դա յե, թե ամեն
ինչ այդպես թեթևորեն վերջանում է:

Բայց պարապմունքից հետո, պետը ելլի
դիմեց Վարդյանին:

— Ընկեր բանակային, ներկայացեք ինձ:

— Լսում եմ, ընկեր պետ, — զարմացած ա-
սաց Վարդյանը և մոտ գնալով զգաստ կանդ-
նեց:

— Ինչո՞ւ յեք յերեկ քաղաքացիական
զգեստով դուրս յեկել փողոց

— . . .

— Պատասխանեցեք, ընկեր բանակային:

Վարդյանը կմկմաց: Անակնկալը շփոթել
եր նրան: Պետը վո՞րտեղից գիտեր դրա մա-
սին:

— Վոչ մի բանակային, վոչ մի դեպքում
իրավունք չունի քաղաքացիական հագուստ իլ-

ըելու, այդ ձեզ ասիմած եւ: Վերջապես պետք է վերջ տա՞ք ձեր այդ քաղաքացիական տրամադրություննե՞նին թե՞չ չե: Կարծում եք շատրային աշխատողն այստոնյա՞լ ե, կարող ե այդպիսի խախտո՞ւմներ կատարել:

Վորովհետեւ դուք նոր բանակային եք, դրա համար յես ձեզ միայն դդուշացնում եմ, այլապիս տույժի կենթարկվելիք...

Վարդյանը փորձեց արդարանալ:

—Վոչ մի խոսք, վոչ մի առարկություն, —բարկացավ պետը, — վերջին դեպքը լինի, աղա՛տ:

Վարդյանն ազատ չնչեց: Ազատ հրամայելուց հետո պետը մոտեցավ նրան ու ձեռքը նրա ուսին դնելով, մտերմորեն սկսեց զրուցել հետը: Պետը բացատրում եր, վոր Վարդյանն այդ քայլով խախտել ե կանոնադիրքը, վոր պարետը նույնիսկ դրա համար կարող եր կալանքի տակ առնել նրան, վոր Վարդյանը բոլորից գիտակից ե և չպետք ե թույլ տա իրեն, այդպիսի հանցանքներ գործելու ե այլն և այլն:

Վարդյանը վարժվել եր պետի քարոզներին: Մինչդեռ պետը խոսելիս լցվում եր ուսուցչի հավակնությամբ, Վահան Վարդյանը հաշվում եր թե յուրաքանչյուր նախադասության մեջ քա՞նի քերականական սխալ ե գործում նա, քանի ավելորդ բառ ե ասում. —

Պետը վաղուց հեռացել եր Վարդյանի մոտից, իսկ Վարդյանը դեռ փնթփնթում եր.

— Այո, կան մարդիկ, վորոնց անհրաժեշտ

ե դրել, կարդալու արտահայտվել սովորելոց
բայց նրանք շտապում են ամրիոն բարձրա-
նալ... ի՞նչ արած պետք ե յենթարկվել...

Սարդիսն այդ դեպքից հետո անընդհատ
ծաղրում եր Վարդյանի գալստուկի կապելը և
ներվայնացնում նրան։ Հաղիվ կարողանալով
դապել բացահայտ իր արհամարհանքը, Վար-
դյանը համոզում եր իրեն։

Լավ ե, լավ ե, վոր չպատասխանեմ, ինձ
համար վայելուչ չի նրա հետ վեճի բռնվել, լավ
ե վոր չպատասխանեմ...

Իսկ յերեկոյան, յերբ պետք եր քնել, շա-
րունակելով ցերեկիվա իր մտածումները, Վա-
հան Վարդյանը մտքում խոսում եր.

— Կարող եյի դեղարվեստական ակամե-
դիա մտնել... կարող եյի ակադեմիա գնալ
սովորելու, բայց յեկա ու ընկեր դարձա Սար-
դսին, Հովհանն...

Այդ որը Վահան Վարդյանը վոչ կարող եր
ասել ուրախ ե և վոչ ել տիսուր։ Մի տեսակ
տարտամություն եր մտել նրա սիրու, վորը
նման չեր տիսրության։

Այդպես ել նա դրեց իր որադրում։



Յերբ Վահան Վարդյանը բաց արեց զորա-
նոցի դուռը, հանդիպակաց լուսամուտից յե-
րեաց վերջալույսը՝ արյան անափ մի ծով։
Աննման ու սքանչելի յե քաղաքի վերջակալույսը։

Վահան Վարդյանը լուսնոտ մարդու նման
անդայնության մեջ ե ընկնում, յերբ նայում
ե նատուրային այդ գեղանկարին։ Արշալույսը
Վահան Վարդյանը չի սիրում, վերջաշույսը՝
դա նրա համար ե միայն, ինչպես մութը՝ չղջի-
կի։

Վահան Վարդյանը նայում ե վերջալույսին
ու մտածում։ «Կոխվ լիներ։ Արյուն հոսեր։
Վերջալույսին արյունով ներկվեյին ծովի պես
անծայրածիր դաշտերը։ Հետո՝ դադար լիներ,
ու մենք արյան այդ ծովում թիկնեյինք ալիք-
ների, այսինքն թումբերի վրա, հանգստա-
նալու»։

— Ցնծա՛, ինչ փառահեղ պատկեր ե, —
ասում ե Վարդյանն ու մտածում, թե ինչպես
կկոչեր այդ նկարը։ Յեվ ահա դտնում ե դա յել։
Նկարի տակ նա պիտի գրի։ «Կարմիր ասպետ-
ների հանգիստը»— դործ՝ նկարիչ Վահան
Վարդյանի . . .

Ապա Վահան Վարդյանը պատկերացնում
ե, թե ինչպես մուղեյներում պետք ե նայեն այդ
նկարին ու հիացած բացականչեն։ « Զամեշայ-
նայ կարտա» , թե ինչպես պետք ե աղջիկներն
հուզվին այդ նկարով ու ասեն։ «սիրելի նկար
ե» . . .

Վողեռորվելով գեղեցիկ այդ մտահղացու-
մով ու յերեակայությամբ, Վահան Վարդյա-
նը դրամատիկ ձևով արտասանում եր զորանո-
ցի դատարկ սենյակում։

— Ոհ, կեցցես դու, հույս, յերազի պես

յերջանկացնող հույս, յերադի պես քաղցր։ Յես
հավատում եմ քեզ ու դիտեմ, մոր տատմու-
թյան գըքերում արվեստների մարդկանց ա-
նունների մեջ կլինի ՎԱՀԱՆ ՎԱՐԴՅՅԱՆ անունն
ել։

Հույս, հույս . . .

Վարդյանը թիկնեց լուսամուտին ու նա-
յում եր հեռու հորիղոնի դեղին անսահմանու-
թյանը։ Ապա նա բացեց լուսամուտը։ Պաղ ողբ
խիեց նրա գեմքին։ Նա մտածում եր, ու քիչ եր
մնում, վոր բաց լուսամուտից բարձրածայն
արտասանի, ինչպես արտիստը՝ բեմից (այդ-
պես և նա իր հուղումների տարերքի պահերին)։
Բայց յերբ յետ նայեց, տեսավ, վոր իր մահճա-
կալի վրա լուռ ու մտահոգ նստած և Բայլշեիկ
Ասատուրը։ Վարդյանը նրան այդպես յերբեք
չեր տեսել։ Ձանձրացնելու չափ կատակներ և
անում Բայլշեիկ Ասատուրը։ Ու հիմա նստել և
այնպես տխուր ու մտահոգ, վոր թվում և թե
ուզում և լուծել անլուծելին։ Բայլշեիկ Ասա-
տուրը՝ տխուր։ Դա և՛ շինծու յե, և՛ բռնադրո-
սիկ, և՛ տարորինակ։

— Իսկ ինձ թվում եր, — մտածում ե Վար-
դյանը, — վոր Հովոն, Սարգիս և Ասատուրն
ու սրանց նմանները տխրել չդիտեն, վորովհե-
տեւ մտածել, ապրել ու հուզվել չդիտեն. ուրեմն
պատահում ե, վոր յես ել եմ սխալվում։

Ասատուրը նստել եր տխուր, նույնիսկ՝
մոայլ։ Նրան նայելով, Վարդյանն հիշեց յերա-
զում տեսած ներոնի արձանը, մոայլ ու ան-

ժայիս: Վարդյանը տեսնելով Ասատուրին այդ
դրությամբ, մոտեցավ ու թևը նրա մեջքին
տանելով, մտերմական կարեկցությամբ հարց-
րեց.

— Դո՞ւ յել ես արդեն բանակից ձանձրա-
ցել, Ասատուր...

Ասատուրն այնպիսի մի հայացք նետեց նրա
վրա, ինչպես նա կնայեր իր թշնամուն: Այդ
հայացքը լիքն եր չարությամբ ու մահառիթ ա-
տելությամբ: Բայց թե ինչով յեր նա այդպես
նայում իր վրա, թե ինչով եր ինքը մեղավոր,
այդ վահան Վարդյանը չեր հասկանում: Նա
յենթադրեց, թե Ասատուրը չհավատաց իր կա-
րեկցությանը և անկեղծությամբ ասված խոս-
քերը չհամարեց այն խօսքերը, վորով ինքը դի-
մեց նրան: Դրա համար ել նա կրկին թեև
Ասատուրի մեջքով տարավ և այս անգամ ավելի
քնքշագին, հարցրեց.—

— Իսկապես Ասատուր ջան, ի՞նչ ե պատա-
հել...

Ելի նույն մահառիթ ատեղությամբ լիքը
հայացքով Ասատուրը չափեց նրան: Իսկ Վարդ-
յանն ամենի աշխատեց քնքշանալ:

— Ինձանից հեռացի՞ր, ուղրութունիստ
շան վորդի, — պայթեց մեկեն Ասատուրը:

Վահան Վարդյանին թվաց, թե Ասատուրը
դերի մեջ ե: Վարդյանը մորձեց կատակել և
դրանով ամենի կատաղեցրեց Ասատուրին:

— Քեզ ասում եմ հեռացիր ինձանից,
քո...

Վարդյանը յետ-յետ քաշվեց։ Ասլա՝ տես-
նելով խաղ կարծածի լրջությունը, փորձեց
ինքն ել լրջությամբ վերաբերվել։

— Հայհոյանքիով համար պատասխանտու-
յես, այդ մասին յես կզեկուցեմ ավաղին,—
սպառնաց Վարդյանն ու հեռացավ։

— Գնա՛, քեզանից վախեցող չկա, յես քո
հետ հետո կխոսամ,—նետեց Ասատուրն ավելի
սպառնագին։

Վահան Վարդյանն ի հարկե, ավաղին չղե-
կուցեց, մտածելով, վոր դրանով առիթ կստեղ-
ծի Ասատուրի համար իրեն պոչեր կտցնելու։
Վահան Վարդյանը խուսափում եր այդ բնույ-
թի հարցերով իր գլուխն ազմուկի խառնելուց։

Վարդյանը միայն հանդիմանում եր իրեն,
վոր բաղմաթիվ դեպքերից հետո ելի ինքը
սրտաբաց ե մոտենում այնպիսի մարդկանց,
վորոնք իր լավ վերաբերմունքին արժանի չեն։

— Յես քննադատում եյի Ռդնելի հերո-
սին, կոստիա Ռեաբցովին,— դուրս դալով դո-
րանոցից, մտածում եր նա,— վորն առում եր
թե, «Յես յոթերորդ հարկից նրա ծոծրակին
չեմ թքի»— յես հիմա դոհունակությամբ
կկրկնեմ այդ խոսքերը։—

Այդ որը Վարդյանն իր որադրում դրեց։

«Ամենադեղեցիկ գեղեցկությունն ինձ հա-
մար դա մեր քաղաքի վերջալույսն եր։ Այսոր
յես վայելում եյի այդ գեղեցկությունը և արա-
մադրությունս Շալիապինի յերդի պես բարձր
եր ու նրա արվեստի պես նրբին։ Կոտրվեց

տրամադրությունս և Շալիալինից իջավ մինչ
չե Ասատուրը, բարձունքներից՝ հատակը:

Աշնավերջի պաղ շունչն և ներս մէջում լու-
սամուտից»:



Հարավովիոխու ու տարորինակ:

Այսպես են ասել Վարդյանին: Հիմա, յերբ
մտածում ենա, զոնում ե, վոր սխալ չեն առել:
Մարտ ամովա յեզանակի պես մուփոխական և
նրա ներքին աշխաբճի բնությունը:

Այսոր ելի ճիշտ այդպես եր:

Առավոտյան վաղ լսվեց ալադի ձայնը:

— Արթնանա՞լ.

Վահան Վարդյանն ել արթնացավ: «Արթ-
նանալ»—ազդանշանից մինչեւ «Հաղնվել»—ը
հինդ բոպեյի տեսողություն ուներ: Անցավ այդ
հինդ բոպեն, լսվեց «վերկաց»—ը և դեռ Վահան
Վարդյանը քնած եր: Ավագը մոտեցավ նրան,
շարժեց:

— Վեր կացեք, ընկեր Վարդյան:

Վարդյանը նստեց անկողնու մեջ ու հո-
րանջեց: Նրա մարմինն այնպես եր թուլացել,
հարծես թմրեցնող շիճուկ եյին սրսկել:

Վեր կացեք ե, ձեզ հետ չե՞մ, ընկեր Վարդ-
յան:

Վարդյանն ելի հորանջեց: Նա ինչ վոր
ծանրություն զգաց դիմի մրա: Ստուգելու
համար շոշափեց խուզված դլուխը:

Վորքան ել Վահան Վարդյանն աշխատեց
շուտ հաղնվել, վորպեսզի Փեղկուտառայի

պարապմունքից շուշանա, չկարողացավ հասնել:

— Շաբովե՛լ, — լսեց նա բակից ավագի ձայնը:

Վարդյանը մինչև դուրս յեկավ բակը, շաբքը պատրաստ եր:

— Ընկեր ավագ, թույլ ամինք շաբք կանոնել, — խնդրեց նա զգաստ կանոնելով ու պատիվ բռնելով ավագին:

— Կանգնեցեք, բայց ուշացել եք, — թույլատրեց ավագը դժողոհությամբ նայելով Վարդյանի վրա:

Վարդյանը հիշեց դպրոցական տարիները, յերբ հաճախ վորակես մշտական բեռ, իր վրա կրում եր ուսուցիչների դժողոհության արտահայտությամբ լիքը հայացքները: Պարզ է, վոր նրա տրամադրությունն այլևս չեր կարող Շալիապինի յերդի սկզբ բարձր լինել, վորովհետեւ նա ուներ նաև Շալիապինի յերդից բարձր ինքնասիրություն:

— Ա՞զ, դա՛րձ:

Յերբ մարդ անտրամադիր է լինում: Ֆիզիկապես ել թույլանում ե: Վարդյանն զբում եր, վոր վատ է ԱԶ ԴԱՐՁ անում:

— Զամ'խ, դա՛րձ: Քայլով մա՛րշ: Ընկեր Վարդյան, գլուխող բարձր, ուսղ մի կծկիր, այդպե՞ս:

— Տեղո՛ւմ:

Ֆիզիկական պարապմունքից հետո կամանդայի բանակայինները նախաճաշի դնացին,

վորից հետո՝ քաղալարապմունքի։ Լենանկյան
դռանը չարքը ցրվեց։ Սպասում եյին, վոր ալե-
տը գտ ալարապմունքն սկսելու։ Մոտենալով
Վարդյանին, Հրայր Քարամյանը դիմեց նրան։

— Վահան, այսորիա թերթն ունե՞ս։

— Այսորիա թե՞րթը, չունեմ։

Այս անդամ Վարդյանը յերկու քայլ մո-
տեցավ Քարամյանին։

Ամենից սբատակիցը դիմիղիայի շտարի կա-
մանդայում ելի Հրայր Քարամյանն եր Վարդ-
յանի համար։ Վարդյանն իրեն հարազատ եր
զգում նրան։

Վարդյանը մոտեցավ, բայց Քարամյանն
սկսեց։

— Ինչպես ե նորին պայծառափայլության
արամադրությունը։

— Իհարկե՛ վատ։

— Վա՞տ, ինչո՞ւ։

— Չե՞ս տեսնում, Հրայր ջան, արամա-
դրություն են թողնում։

— Ինչո՞ւ, ի՞նչ ե յեղել։

— Չտեսա՞ր, առավոտը... հաշվի չեն
առնում, թե մարդ ինչ հոգեկան վիճակում ե
լինում, ինչ հոգեկան ապրումների մեջ ե...։

Վարդյանը նկատեց Քարամյանի հանկար-
ծակի փոխվելը։ Ժպիտը թուավ Քարամյանի
զեմքից։ Նա այնպես նայեց Վարդյանի վրա,
վոր Վարդյանին թվաց թե միայն Մասիսը կա-
րող եր այդպես նայել իր վոտքերին, միայն
բանաստեղծը կարող եր Պառնասից այդպես

նայել հասարակ հյուլեներին։ Քարամյանը
այդպես նայեց ու մեկեն դժողոհ դեմքը թեքեց
Վարդյանից։

Վարդյանը չհասկացավ այդ տարրինակ
վոտիոխությունը։ Նա մտածում էր, թե ահա
սա յել մի Սարդիս և, մի Առատուք, նրանցից
տարրեր միտքն նրանով, վոր սրան հասել են
կուլտուրականության թուքը շորջուիները։—
Տալսույր, վոր Տալսույր և յեղել, յերբեք այդ-
պես չի նայել իր որերի վորեւ նկարչի վրա—
մտածում էր Վարդյանը, —իսկ սա զեռ իտպ-
մբդելու փորձեր և անում և արդեն ուրիշի վրա
այդքան բարձրից և նայում։

Վահան Վարդյանն արդեն վորոշակիորեն
իրեն սխարժած էր համարում Քարամյանի
նկատմամբ։

Գարապմունքն սկսվեց։ Վարդյանն ելի չեր
լսում։ Այմիտովիվել էր նա ինքն իր մեջ։ Պետք,
վոր այսպես սիրում և անձանձիր բացատրել ու
կրկնել, ելի հասել էր Հովոյին։

— Ո՞ւմ գիկատառուրան և մեր դիկտատու-
րան, — Հարցրել էր պետք և եղի կրկնում էր
Հարցը։ Հովոն սովորականի մես տարուրերում
էր դշտիր։

Ո՞վ և Հիմա մեր յերկիրը կառավարում,
ո՞ւմ իշխանությունն եմեր իշխանությունը։

Վարդյանն այդ բոպելին մտածում էր, թե
Հովոն ելի չասի՞ Կլտյանի և ակամա, չիմացայի
թե ինչպես, տեղից հուշեց։

— Հովո՛, ասա Կլտյանի՛.

Հովոն թեքիւց դեսլի նառ ու համարյա գոռաց նրա վրա:

— Ատ՞ , քո արևն ել դինա՛ , Կլոյանի՛...

Պետք բարկացած նայեց Վարդյանին , ապա Հովոյին :

— Տեսնո՞ւմ ես , վոնց են շփոթեցնում քեզ : Ուրեմն ակետք և այնպես սովորես , վոր չսխարժես : Աղա՛ ասա , ո՞ւմ դիկտատուրան ե մեր դիկտատուրան :

— Հը՞...

Պետն ելի կրկնեց հարցը :

— Ում դիկտատուրան ա՞ :

— Այո՛ , ո՞ւմ դիկտատուրան և մեր դիկտատուրան :

— Բնկեր Վորոշիլովի դիկտատուրան ա , ո՞ւմ դիկտատուրան ա .

Մյուս բանակայինները միայն ժպտացին , իսկ Վարդյանը չկարողացավ զսպնել իր միոթիոցը :

Սարդիսը նստել եր Վարդյանի կողքին : Կամաց , այնպես , վոր ակետը չլսի , Վարդյանի ականջին հայհոյեց նա :

Զաթլա՛խ , դու նրանից լա՞վ մարդ ես , վոր ծիծաղում ես նրա վրա ...

Այս անդամ ել Վարդյանը չպատասխանեց նրան :

Պարապմունքը վերջացած հայտարարելուց առաջ ակետը դիմեց բոլորին :

— Բնկերներ , ձեզանից մեկին պետք ե կցենք Հովոյին , նրա թե՛ անդրադիտությունը

և թե՛ քաղաքական անդրադիտությունը վերացնելու համար։ Ամոթ է կարմիր բանակայինի համար անդրադես ընկեր ունենալը։ Ո՞ւմ կըցենք, Հ՞ը, — ասաց պետն ու նայեց Քարամյանին։

— Ո՞ւմ, — հարցրեց Քարամյանը ու, մի բոպե լոելուց հետո, պատասխանեց, — Վահան Վարդյանին կցենք, Վահան Վարդյանին։

— Ո՞ւմ, — հարցրեց Ասատուրը, կարծես չսելով։

Վահան Վարդյանին։

Չե, յես գեմ եմ։

— Ինչո՞ւ, — հարցրեց Քարամյանը։

— Յես քեզ ասել եմ, ընկեր Հրայր։

— Չե, Ասատուր, դու սխալվում ես, պետք ե դրա համար ել Վահանին կցել։

— Սկի ել չեմ սխալվում։

— Սխալվում ես, սխալվում ես։

— Ե՛, ասում ես ելի...

— Վարդյանին պետք է կցենք, վոր նա յել չծիծաղի Հովոյի վրա, վոր պատասխանատվություն դդա։

Վերջին նախադասությունը Քարամյանն ասաց ժպասալով, նայելով Վարդյանին։ Նա գուր յեկավ նրան։ Իսկ թե ինչ եր Ասատուրն ասել Հրայրին իր՝ Վարդյանի մասին, Վարդյանը միայն մի բան եր յենթադրում։

— Լավ, ուրեմն կկցենք ընկեր Վահան Վարդյանին։ Վարդյան մի ամիս հետո Հովոն փոխված լինի, — պատվիրեց պետը։

Վահան Վարդանյանը դժողով եր: Սեվա-
ռործ բանվորի աշխատանքը դրին ուսիս, մտա-
ծում եր նա, — յես ուրախությամբ կղառնայի
սեվազործ բանվոր, կթողնեցի արվեստը, քան
Հովոյի դլուխը կկամենայի գիտություն լըց-
նել:—

Բայց Վարդյանը չդիտեր, թե ինչու չա-
ռարկեց: Յերեկի նրա համար, վոր Քարամյանն
ու պետն եյին առաջարկել:

Վարդյանը Քարամյանի նկատմամբ ելի
լցվեց այն վստահությամբ, վորով լցված եր
առաջ: Զնայած այն տարորինակություննե-
րին, վոր Վարդյանի կարծիքով, կար նրա
մեջ, այնուամենայնիմ նրան Վարդյանը շա-
րունակեց զավ ընկեր համարել:

Պարապմունքից հետո Վարդյանն ելի
մոտեցավ նրան ու, ավելի հուզված ցույց տա-
լով իրեն, քան իսկապես ե՛ր, ասաց.

— Գոհ չեմ կարող լինել քեղանից, Հրայր,
ինչո՞ւ առաջարկեցիր:

Քարամյանը զարմացավ:

— Վահան, իսկապէ՞ս:

— Լուրջ եմ ասում:

— Ինչո՞ւ:

— Իմ կարծիքով, Հրայր, Միենույն ե նրա-
նից բան դուրս չի դա:

— Ի՞նչ ես ասում, այ տղա:

— Ելանց վեմ խօշեմ. նրան ընությունն
ստեղծել ե, միայն նրա համար, վոր նա սայլ

քշի: Բնությունը չի սխալվում իր վորոշումների մեջ:

Քարամյանը մի պահ մտախոհ լոեց, ապա բոնելով Վարդյանի թեմից, քաշեց նրան իր յետեվից:

— Արի քեզ բան եմ ասելու:

Վահան Վարդյանը լուռ հետեւց նրան, ինչոքես հիպնոսվածը՝ հիպնոսողին: Լենինյան անկյունում մարդ չկար: Քարամյանն արմունկը հենեց սեղանին, ճակատն առավագի մեջ ու սկսեց խորհրդավոր նաքշը Վարդյանին: Իսկ այդ բոպեյին Վարդյանը մտածում եր. «Այս զիբքով յեթե մեզ քանդակեցին, հոյակապ մի մոնումենտ կլիներ, հոյակապ մոնումենտ...»:

— Գիտես ինչ, Վահան, յես քեզ հետ ուղում եմ խոսել, միայն թե՛ չվիրավորվես, խիստ եմ խոսելու:

— Ինչո՞ւ պետք ե վիրավորվեմ:

— Միենույն ե, ուղում ես վիրավորվեիր, քո զործն ե դա, բայց յես, վորպես ընկեր, քեզ հետ խոսելու յեմ չար լիզվով:

— Խնդրե՛մ, խնդրե՛մ, յես շատ ուքախ եմ:

— Գիտես, Վահան, դու մի տեսակ պարոնավարի յես նայում տղաներին... Նրանց արհամարում ես, այն կարծիքն ունես, թե նրանց բանականությունը բութ ե, թե նրանք միայն սայլ քշել կարող են և այլն և այն: Այդ բոլորը, ընկե՛ր Վահան, միայն պարոնի հոգեբանության ու մտայնության արդյունք են,

ուրիշ վոչինչ: Իսկ դու կոմյերիտական ես, զու լենինյան կոմունիստական յերիտասարդական միության անդամ ես:

— Այո, յես 1931 թվից կոմյերիտական եմ, զեղարվեստական տեխնիկումումն եմ ընդունվել, — պատասխաննեց Վարդյանը: Բայց Քարամյանն ուշադրություն չդարձնելով նրա պատասխանի վրա շարունակեց:

— Դու կարծես թե չես սիրում ու հարդում ընկերներիդ, վորոնք այն դասակարգի անդամներն են, վորի յերիտասարդական կառամակերպության մեջն ես դու ել: Այդպես չի կարելի... Ի՞նչ անենք, վոր յես ու դու մի յերկու դրքույկ կամ վեպ ավել ենք կարդացնել նրանցից, մի քանի արձանագործի ու նկարիչի անուն դիտենք, վոր նրանք չդիտեն, քերականական որևէ քններից ավելի քիչ ենք շեղվում, քան նրանք: Յես որինակ, յերեք-չորս տարի առաջ ճիշտ այնպես եյի, ինչպես նրանք՝ այսոր: Բացի դրանից, դու մանր բաններից շատ ես դժողովում, թե ինչու ավագը քեզ այսպես կարդադրեց, նույն բանն ուրիշին կարդադրելու փոխարեն, թե ինչու նա բարկացած խոսեց հետդ և այլն և այլն: Յես հասկանում եմ քեզ: Դու կարծում ես, վոր յեթե ավագը տառասխալով ե դրում, իրավունք չունի քեզ հրամայելու, վորովհետեւ ստեղծագործությունից արդեն թանդարանում բան կա դրված... Այդպես չպետք ե մտածել, սիրելիս: Մենք վստահել ենք ավագին մեր կա-

մանդայում՝ ղեկավարելու պլրոլետարիատի դիմումատուրայի պաշտպանության դործը, ուրեմն պետք է կատարենք նրա հրամանը, վորը բղխում է դասակարգի շահերից և վո՛չ թե իր՝ ավաղի քմահաճույքից։ Ով չի կատարում նրա հրամանը, դժողովում է, նա պլրոլետարիատի դավաճանն է, այս, պլրոլետարիատի դավաճանը . . .

Վահան Վարդյանը վտրձեց արդարանալու վորեմի բան զտնել ասելու, բայց կմկմալ իսկ չկտրողացավ։

Ենանելյունից դուրս դալով, Քարամյանը շարունակեց։

— Վորպես ընկեր, իրավունք եմ համարում ինձ, քեզ նախաղղուշացնել։ Նոր կոմյերիատական ես, բայց այդպիսով կարող ես քեզ դուրս դնել կոմյերիատմիությունից . . .

Վարդյանը փշաքաղվեց։ Նրա ձեռքն ինքնիրեն գնաց գրապանը։ Կոմսոմոլիի տոմսը գրալանումն եր։ Նա շոշափեց տոմսն այնտեղ ու հանգիստ շնչեց։

— Վոչ միայն կոմսոմոլից, այլև կարող ես բանակից ել քեզ դուրս դնել, բանակից ել. . . Յերկը պաշտպանությունը վատահվում է նրան, ով իր վողջ հոգերանությամբ ու զգացումներով է նվիրվում այդ պաշտպանությանը։ Իսկ մեր զործն այժմ ուրիշ բան չե, քան յերկը պաշտպանությունը . . .

Վարդյանը դլուխը կախած լսում եր։

Այդ ոքը յերեկոյան վահան վարդյանն իբ
որագրում դրեց.

«Ուշ յերեկո յե, բայց քնել չեմ կարողա-
նում: Միտքը կանզնեցնել չի լինում: Կինո-
ժապավենի նման անցնում ենա մի պատկերից
մյուսին, բայց յերբեք չի կտրվում կինո ժա-
պավենի նման: Այն, ինչ վոր Քարամյանն ա-
ռաց այսոր, հասարակ բաներ եյին, ԱՅԲ ու
ԲԵՆ. Քարամյանը նույնիսկ ԳԻՄ-ին ել չհա-
սալ: Բայց այսոր, յերբ նա կրկնեց դրանք ինձ
համար, և, այնքան բարեկամի նման (դա նրա
հատկությունն ե), յես հանկարծ հասկացա-
այդ հասարակ բառերի ու նախադասություն-
ների լրիվ իմաստը: Նրա նույնիսկ ամեն մի
բառը լիքն եր իմաստությամբ, ինչպես լիքն ե
լինում սերմի հատիկը: Յեվ ահա այդ հատիկ-
ները ծիլեր են արձակում ուղեղիս բոլոր խոր-
շերում ու չեն թողնում, վոր քնեմ...

Ճիշտ ե, Քարամյանը մի քիչ ել սպառնաց,
բայց յես վոչ վախեցա և վոչ ել վիրավորեցի:
Յես հենց վաղը անզայման պետք ե խնդրեմ
Քարամյանին, վոր թույլ տա իրեն նկարեմ...

Մատիոը տետրակի մեջ փաթաթելով՝
վահան վարդյանը բարձի տակը դրեց այն
և ադյալը քաշեց դլխին: Նա կարծում եր վոր
այս անդամ գոնե անմիջապես կքնի, բայց ճիշտ
հակառակը դուրս յեկավ: Մտքերն հաջորդում
եյին իրար:

Մատածելով Քարամյանի մասին, Վարդյանը հարցուեց իրեն:

Բայց վերջապես Հրայրն անձնական կյանք չո՞ւնի, վորոնք են նրա «զաղունիքները»: Միտյն քաղաքական խնդիրների մասին և խոսում և ուրիշ վոչի՞նչ: Յեվ Վարդյանն ելի հիշելով Կնուտ Համսունի «Պան»-ի պատմությունը, քիչ մնաց ծիծաղեր: Դա Քարամյանի «զաղանիքներից» մեկն եր, վոր Վահան Վարդյանը կարգացել եր իմանալ և միշտ հիշեցնում եր նրան, յերբ ուզում եր կատակել:

Շատրի հնուախոռը հաճախ դրնդում եր և աղջկային մի ձայն հարցնում եր.

— Ասացեք խնդրեմ Հրայրն այդտեղ և: Վարդյանը բոլորից շատ եր հետաքրքրվում իմանալու, թե ով և Հրայրին հեռախոսողը: Վերջապես հաջողովոց իմանալ: Մի անգամ բարձրահասակ, մուգ շեկ մազերով մի աղջիկ յեկալ Հրայրին կանչելու: Նրա մանր աչքերը փոսիկների միջից փայլում եյին սիրո ու չարություն արտահայտությամբ:

Պատրիակով զուրո դալով շտաբի դռւոք, Վարդյանը բարեկեց Հրայրին ու կանգնեց:

— Ծանոթացեք, ընկերս և, նկարիչ—ներկայացրենց Քարամյանը Վարդյանին:

Վարդյանը սեղմելով աղջկա ձեռքը, աշխատեց չմոռանալ նրա անունը, Լիդա Աղարյան:

— Լիդա Աղարյան,— ապա զհնեց Լիդայի վոտքից մինչև դլուխը: Նկատելով Լիդա Աղար-

յանի քթի վրայի կոռ խաղը, հետադայում
վարդյանը կատակում եր.

— Ճիշտն ասա, Հրայր, դա հո քո կծածի
հետքը չկ^o:

— Նու, թող, Վահան,— չուզենալով լսել
այդ կատակները, կտրում եր Հրայրը: Բայց
«Պան»-ի սղատմությունը Վարդյանի համար
սենսացիոն կատակի նոր նյութ եր:

Հանգստի որ եր: Քարամյանը թույլտվու-
թյուն ուներ քաղաք դնալու: Որապահը
Վարդյանն եր.

— Յես տուն եմ դնում, յեթե ինձ կհարցնեն,
զանգահարիր 7-81:

Մի ժամ հետո Վարդյանը զանգահարեց.

— Հրամային ե, բարե, Հրայր:

— Բարե ո՞վ ե:

— Վահանն ե, ի՞նչ ես անում:

— Վահան Վարդյանն ե, հա՞ . կարդում
եմ, Վահան ջան:

— Ի՞նչ ես կարդում:

— «Պան» եմ կարդում, վաղուց կարդացել
եմ, ելի՛ եմ կարդում:

— «Պան»-ը յես ել եմ կարդացել: Մենակ
ես, վոչ վոք չկա՞ մոտղ...

— Վոչ վոք, մենակ եմ:

— Վոչ վո՞ք, մենակ հարյո՞ւր տոկոսով:

— Մենակ եմ ելի՛, ասում եմ:

— Խաղով քիթ ունեցողը մոտղ չի՞...

Վարդյանի այդ հարցի վրա Հրայրն անմի-

ջապես կախեց հեռախոսի փողը։ Իսկ վարդ-
յանը մի քանի բոլք հետո ելի զանդահարեց։

— Ո՞վ և խոսում։ — Հարցըին 7-81 համա-
րից։

Դա մի աղջկա ծանոթ ձայն եր։

Լիդա Աղարյանի ձայնը։

Հետեւյալ որն արգեն վահան վարդյանն
արտակարդ ուրախության մեջ եր, մանավանդ
վոր Քարամյանը չեր արդարանում։

Եղաղես ելի, Հրայր, ասում ես վոր «Պանն»
եյիր կարդում... Չորս ժամ մնացիր տանը,
չորս ժամում քանի՞ անդամ «կարդացիր»։

Հետո այլես Աղարյանը վոչ զանդահարում
եր. և վոչ յերեվում։

— Ո՞ւր և Լիդան, չի յերեսում, — Հարցըց
վարդյանը մի անդամ։

— Ամուսնացավ, — պատասխանեց Քարամ-
յանը կարճ և այնպես, վոր կարծես թե ուրա-
խացել եր Լիդա Աղարյանի ամուսնության հա-
մար։

— Ուրիշի խրատում ես, բա վոր չեյիր
ամուսնանալու, ինչո՞ւ եղքան «Պան» կար-
ցիր...։

— Այդ մասին ել չխոսենք, — կտրեց Քա-
րամյանը, և դրանով ել վերջացավ «Պան»-ի
պատմությունը։

Վարդյանի աչքերն արդեն փակվում եյին։
Նա քնում եր։ Բայց հանկարծ թռավ ու նստեց
անկողնում։

— Վահ, մոռացել եյի... Յես Լյուբային
ովետք և բացիկ դրեյի այս յերեկո...

Ապա մի ըովե մտածելով, վորոշեց.

— Վոչինչ, կզրեմ հետո... ու պառկեց
քննլու...

— Բանվորի դիկտատուրան ա, վի՞ք դիկ-
տատուրան ա...

Քնի մեջ խոսում եք Հովոն:

Վահան Վարդյանն արդեն սկսել եք կա-
տարել իր պարտականությունը՝ պարապել
Հովոյի հետ։ Առաջին յերկու որը նա դեռ տա-
տանվում եր, համաձայնի մշտապե՞ս պարա-
պելու, թե՞ ուղղակի հրաժարվի։ Յերբորդ
որն արդեն չեր մտածում հրաժարվելու մա-
սին։

Զարմանալի բան։ Հովոն, այն Հովոն,
վորը, Վարդյանի կարծիքով միշտ ել բութ
ովետք և մնար, այնպես եր հետաքրքրվում
Վարդյանի ասածներով, վոր Վարդյանը նույ-
նիսկ վոգեվորվում եր իր կատարած գործով։

Յուրաքանչյուր խնդրի մասին Հովոն մի
քանի հարցեր եք տալիս և ամեն մի հարցը մի
քանի ձեռով։

— Բուրջվածի տղեն ել հասարակ զինվոր
եղնի։

— Բանվոր շատ ա բուրջվածից, ըստ ին-
չի՞ բանվոր չելնի հաղթա։

— Վոր բուրջվածներու յերկրներու մեջ
անոթի կմնան, թող մի որ հելին ու սպանեն
բուրջվածներուն, մե խետ ընդոց քոք կտրեն...

Աւ այսպես՝ հարցեքի շաբան:

— «Բանից պարզվում է, վոր յես ել կարող ելի սխարթիլ: Նա նույնիսկ մտածում է ու հետաքրքրվում, ուրեմն՝ նշանակում է, վոր անհուսալի չի, կարող է միշտ բռնթ բանականության տեր չմնալ»— մտածում եր վահան Վարդյանը:

Այդ որբ, յերբ Հովոն ելի հարցնում եր, թե ինչու բանվորները հեղափոխություն չեն կատարում բռնթուական յերկրներում, վահան Վարդյանը, փոխանակ հարցին պատասխանելու, հիշեց իր բրոկնոտում դրած մի դրգից վերցված քաղվածքը: Բլոկնոտն դըքանից հանելով, նա այդ քաղվածքը կարդաց Հովոյին:

— Տես, եսաեղ ի՞նչ և դրված, Հովո:

— Ի՞նչ ա դրուել:

— Լոիր, կարդամ:

— Բ' ի, կարդա, լսում եմ, վահան ջան:

«Դիտությունը դադարել է միայն մատչելիք մնալ նրանց, վորոնք ծնվել են դղյակների հայելապատ սննյակներում, դաշնամուրի նըլիագ են լսել և հայրական սեղանների վրա տեսել են արձաններ ու պատերին՝ հանճարների ստեղծագործությունները՝ դնած վոսկով ու դոլարներով: Գիտությանը կարող են ու տիրապետում են գյուղերից, հյուզակներից ու գայլողներից յեկածներն ել: Յեվ մեզ մոտ դըքանից են գլխավորապես, վոր համառ ու ան-

վհատ մարդում են գեղի դիտության գաղաթները»...

— Տեսնո՞ւմ ես, ինչ լավ բան ե, յերեկ կարդացի մի գրքում:

— Եխ, լավ բան ա,— համաձայնեց Հովոն այն անխմաստ ու հիմարական ժպիտով, վորք վաղուց եր, ինչ նբա գեմքին չեր տեսել վարդյանը:—

— Լավ բան ե, իհարկե, — կրկնեց Վարդյանը՝ մտքում ելի կարդալով քաղվածքը: Խոսքը դեղեցիկ եր, իհարկե: Յեվ հիմա, յերբ Հովոն հարցերի տարափ եր տեղում նրա դլխին, թեկուզ ալրիմիտիվ հարցերի, նա ավելի խորությամբ եր ըմբռնում իր ընթածքաղվածքի միացը: Վարդյանը դանում եր, վոր ինքն, իսկապես հարափոփոխ ե իր կարծիքների մեջ ել:

Այսոր, յերբ Վարդյանը մտավ լենանկյուն, այնտեղ եր միայն Հովոն:

— Մեեր— մեր կուսակցությունը, բանով բանվոր դաստիկա-ը-դի, դասակարգի կուսակցություն ե կուսակցություն ե...

Միոքինակ, ու առանց կետադրական կանոներն հարդելու, կարուում եր Հովոն:

Ներս մտավ Բայլշեիկ Աստուրն ել:

— Ամոթ քո բատրակության ստաժին, Հովոն, մինչև հիմա հլա կարդալ չես կարում,

— Քաշեց նա Հովոյի կոմունարկան աչքերի
վրա:

— Սուս կաց ե՛, քյովողի Բայլշեիկ Առտ-
տուր, — հրեց նրան Հովոն առանց աչքը զբքի
վրայից հեռացնելու, ու շարունակեց կարդալ:

— Ի-ս-կ-իսկ կարմիր-կարմիր բ-ա-ն-ա-
կ-ը-րանակը, հ-ա-մ-ա-շ-խ-ա-ր-հ-ա-յի-ն-
համաշխարհային, ոլ-բ-ո-շ-ե-տա-ը-ի-մ-ա-ի-
—ոլբոլետարիատի բանակն ե:

Ապա Հովոն ծալեց գիրքը մտածեց մի
քանի բողե ու թեքվելով ղեղին վարդյանը,
հարցրեց:

— Վահան ջան, ի՞նչ կեղնի, առևս, ոիկ-
տատուրիա ի՞նչ ա.

Ապա՝

— Թաշիղմ ի՞նչ ա:

— Ենտուղիադմ ինչի՞ն կոն:

— Տբամվա ի՞նչ ա:

— Աջ թեքումն ա լա՞վ, թե՞ ձախ թե-
քում . . .

Վարդյանը յերբեմն ձանձրանում եր: Ա-
մելի դժվար բան, քան քսանյերկու տարեկա-
նին գրադիտության, գիտության ու քաղաքա-
կանության այրութեն սովորեցնելը, նա յերե-
վակայել չեր կարող: Բայց յերբ Վարդյանը
տեսնում եր, վոր Հովոն ոճի գլխին նման իր
քիթը շարժում ե ոդում, կարծես ցանկացած
բառը հոտոտելու միջոցով այնտեղ գտնելու
համար, յերբ Վարդյանը տեսնում եր այդ,
չեր կարող հանձն չառնել վորոշ տանջանքներ,

մարդկանում ու զգում եր, վոր Հովոն
ել և տանջվում:

Բայց ամենից զարմանալին այն եր Վարդ-
յանի համար, վոր այդ մարդն զգացումներ ել
ամի, նույնիսկ լիրիքական զեղումներ: Զե-
ղումներ, իհարկե, վոչ թե քառյակներով ու
հանդերով արաահայտված, այլ գոռոցով ու
մեանների ուժով:

Յերեք չորս որ հետո, այն որվանից,
յերբ հանձնարարվեց Վարդյանին պարապել
Հովոյի հետ, արդեն մի քանի անգամ մարտա-
կան պատրաստականության պարապմունքներ
եյին յեղել կամանդայում: Մի որ ել, յերբ նոր
եր վերջացել «Մեռյաշ-ժամ»ը, Հովոն արդեն
զորանոցում չեր: Վարդյանը նրա յետելից գր-
նաց լենանկյուն, վոր կարդա «Պրոլետարուկոյե
իսկուստվո» ժուռնալը: Յերբ Վարդյանը ներս
մտավ, տեսավ, վոր, Հովոն ցուցամատը ձախ
աչքի վրա սեղմած, քարի պես լուռ կանգնել
եր սեղանի մոտ, իսկ սեղանի վրա լցված եյին
հրացանի փակաղակի և տվիչ մեխանիզմի մա-
սերը: Հովոն չղղաց Վարդյանի ներս մտնելը:
— Ի՞նչ ես մտածում, — հարցրեց Վարդ-
յանը հանկարծակի:

— Վա՛յ դու ըստե՞ղ ես:

— Հա՛, ի՞նչ ես մտածում:

— Հ՞ը...

— Ի՞նչ ես մտածում:

— Ըսկի բան ել չեմ մտածում, ես անտեր
սլուշի անուն մտես դացեր ա, չդինամ ի՞նչ ա,

- Վորի՞ :
- Եստոր, ես անտեր պոչի :
- Մաածիր, կղտնես :
- Թու, անտեր իմայլ մտես զնաց .
- Հրահանն իր . . .
- Վա՛յ, խա՛, խա՛, հրահանն իր կոճակով . . .

Հովոն շարունակում եր հավաքել փակադակի մասերն ու ելի միացնել, իսկ Վարդյանն սկսել եր կարգալ, «Պրոլետարոկոյե իսկուսավոն»։ Հետո կամանդայի բոլոր բանակայինները լցվեցին լենանկյուն և նրանցից յուրաքանչյուրը վրա պրծավ մի թերթի։ Ամեն անդամ, յերբ բալորով այդպես լցվում եյին լենանկյունը, Վարդյանին թվում եր, թե վորեն հանրային գրադարանում են գտնվում։ Տիրում եր շատ հաճելի ընդհանուր լոռոթյուն։

«Պրոլետարոկոյե իսկուսավո»-ի տեսությունը բանվոր սկսնակ նկարիչների մասին, Վարդյանը վերջացրեց այն ժամանակ, յերբ բանակայիններն արդեն Փիզկուլտ դահլիճ եյին զնացել։ Լենինականում մնացել եյին մի-այն Ասատուրն ու Հովոն։

Վերջացնելով հողվածի ընթերցումը, Վարդյանը շուռ տվեց որվաթերթի վերջինյերեսը։ Հայտարարությունները նայելուց հետո՝ հեռագրերի բաժնում նրա աչքն ընկավ Հիտլերի նկարին, վոր ատամների մեջ բռնել եր մի մերկ սուր։ Այդ ժամանակ, բարկացած շուռ

տալով թերթի մյուս յերեսը, Աստառութը
մինթմինթում եր.

— Շան վորդի, շան վորդի ֆաշիստներ,
ականում եք ի՞նչեր են անում, յես ձեր են...

Հովոն, ձեռքում ելի փակաղակի մի մաս
բռնած, մտածում եր, ապա մոտեցավ Վարդ-
յանին:

— Վահան ջան, եստոր անումն ել մաւա-
դնաց, իմ լեզվի վրեն ա, հմա չի գա միտս:

— Զարդանն...

— Շիշտ ա, ճիշտ ա, զարդանն իր ասե-
ղով: Վա՛, քո խոքուն մեռնեմ, Վահան ջան,
տխալեր ջան, ազիզ ջան...

Զարդանը սեղանին դնելով, Հովոն ամուգ
դրկել եր Վարդյանի մեջքն ու սեղմում եր,
քիչ եր մնում վոսկորները ջարդի: Հովոն սեղ-
մում եր նրան իր ռամիկ մկանների ամբողջ
ուժով ու գոռում:

— Ախալեր ջան, քո խոքուն մեռնեմ: Ախր
դու կցվեր ես ընձի ե՛... կցվեր ես ընձի, հա՛
հա՛, հա՛, հա՛, ... գինա՞ս կցվել ինչ ա՞... մենք
կցվեր ենք իրար, հա, հա, հա...

Սեղմում եր Հովոն՝ ամբողջ եյությամբ
դարձած ուրախություն:

Վորքան տարորինակ ու արտաօօվոր թը-
լաց Վահան Վարդյանին, յերբ առաջին ան-
դամ Հովոն այդպես սեղմեց իր մեջքը, այժմ
այնքան Վարդյանը հասկանում եր նրան: Ա-
ռաջին անգամ Վարդյանը հետ վանեց նրան ի-
րենից: Այժմ այդ չարավ:

Դրկելն ու դռաալը, սեղմելն ու ցավացնեալ՝ դա Հովոյի սերն է առ ընկերը, դա նրա զեղումների արտահայտության ձևն է։ Ամեն մարդ իր զգացումներն արտահայտելու մի ձև ունի։ Հովոն արտահայտում է մկանների ուժով ու դուռցով, խոկ յեթե նա պոետ լիներ, յերեխի կարտահայտեր քառյակներով ու վոտանավորներով։

— Ինչ ծիծաղելի բան է, Հովոն պոետ, բանաստեղծ, խոկապես վոր ծիծաղելի յե... .

Ծիծաղեց Վարդյանը։ Զհասկանալով այդ ծիծաղի խմաստը. Հովոն ելի ձեռքերով ողակեց նրա մեջքը։

— Շատ պինդ ես սեղմում, Հովո, բա վոր սիրածդ լինի, ինչպե՞ս կսեղմես... .

— Ե՛... խուսափեց Հովոն դեղջուշի ամոթխածությամբ։

— Խոկապես, Հովո, վոր սիրած լինի ինչպե՞ս կսեղմես... .

— Ե՛, յես սիրած չունեմ, դու ունես, են որ չտեսա՞ , վոր են սե աղջիկ եկալ քո մոտ։ Վարդյանը մտածում է։

— Հովո, վոր կոխով լինի մարդ կսպանե՞ս։

— Ինչի չեմ սպանի, ըրա ել ընչի եմ եկե կարմիր բանակ։

— Մեղքը չե՞ն, Հովո, վո՞նց կսպանես։

— Ինչի՞ են մեղք, թշնամի յա չե, դուշման ա, որ ձեռեն դա, են ել մեղի կսպանա։ սպատասխանեց Հովոն հաստատակամ ու կրազիս։

Այդ ըովելին Վահան՝ Վարդյանը նկատեց, վոր Ասատուրը թերթը թողած, խոժոռահայքով իրեն և նայում:

Ելի ի՞նչ վորդ և շարժվում նրա ուղեղում-Հարցնում եր Վարդյանն իրեն ու վորեւ բան չեր յենթադրում:

— Ինչո՞ւ յես այդպես նայում, Ասատուր: Ասատուրը, պատասխանելու փոխարեն, ի՞նչ վոր բան մինթինթաց:

— Ի՞նչ ե, և՛, ի՞նչ ես ասում, ընկեր, — վրա տվեց Վարդյանը:

Այդ ժամանակ Ասատուրը վոտքի կանգնեց ու ձեռքը սեղանին զարկելով դուաց.

— Են եմ ասում, վոր վերջ տաս քո ոպոր-տունիստություններին, համկանալի՞ յա...

Վահան Վարդյանը դայրույթից դողում եղ:

— Ինչ ոպորտէնիզմ դառանցանքի մե՞ջ եք, ի՞նչ ե:

— Զառացանք, մառացանք չեմ իմանում, բոլ ա ոսկրտունիստություն անես:

Դողում նյին Վարդյանի բոլոր մկանները: Նա կորցնում եր իր հավասարակշռությունը:

Հիմար, դմբո, յես կարիք չեմ զգում քեզ հետ խոսելու, — պոռթկաց Վարդյանը և դեմքը թեքեց Ասատուրից:

— Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ, — պատասխանեց Ասատուրն հանգիստ ու դուրս յեկավ լենանկյունից:

Վարդյանը աշխատում. եթ հաղթահարել
իր բարկությունը, բայց չեր կարողանում: Նա-
զգաց, թէ ինչպես արտասուքի կաթիլները
ցած դլորմիեցին աչքերից:

Վահան Վարդյանը լաց եր լինում:

Մի քանի բոպե հետո, յեր արդեն չորս-
ցել եյին արտասուքի կաթիլները, Վարդ-
յանը խոսում եր ինքն իր մեջ ու ինքն իր հետ:

— Սատանան տանի ինձ, ինչո՞ւ յեմ յեռ
այսպես գյուրազդաց ու փիրուն սրասով ստեղծ-
վել: Հայվասառմ եմ, վոր ուրիշներն այդպիսի
դեպքերում կկարողանան աիրապետել իրենց,
ինչպես թեկուզ Առատուրն իրեն տիրապետեց:
Իսկ յես լաց եմ լինում, այո՛ իսկական որիոր-
դի նման:

Յեվ նու հիշում եր իր մասին ասած Քո-
րամյանի խոսքերը:

— «Բավկական ե մի վոքք պատճառ և պու-
հուզվում ես ու տիրում, նույնպիսի վոքքը ա-
ռիթով ել ուրախանում ես ու խանդավառովում:
Նման ես զու հանկարծակի բոնկվող բամբակի,
դա խառնվածքի անկազմոկերպվածություն ե,
դա տարերայնություն ե».—

Վորքա՞ն ճիշտ ե հասկանում Քարամյանը-
մարդկանց: Զե վոր այս անդամ ել հենց դրա-
նից եր, վոր Վարդյանը նկատարելասքն հի-
մար դրության մեջ եր, վոր լաց եր լինում նա-
որիորդի նման:

Իսկ սրտի ու հոգու այդ տարերայնու-

թյան համար Վահան Վարդյանը չի ների
իրեն, յերբեք չի ների.

— Բան չկա, բան չկա, Վահան ջան մի
մտածա, ամոթ ա, լա՞ւ ինչա...

Հանդիմանում են Վարդյանին և այն ել
ո՞վ — Հովոն: Վարդյանը վայրկենապես սթափ-
վեց նրա խոսքերից, արտասունքները դադա-
րեցին և այդ վայրկյանին եր, վոր սկսեց մտա-
ծել, թե ինչ և ասել Քարամյանը իր խառնը-
մածքի մասին:

— Հլա իշկա, իմ աչքեր կխփում ու փակա-
ղակը կհավաքնմ, սարքի քցեմ, — բոնազբուի-
կորեն ծիծաղում եր Հովոն ու հավաքում փա-
կազակի մասերը, — ճիշտ ա՞ , լավ հավաքե-
ցի՞...

Վարդյանը հասկանում եր, վոր Հովոն
ուղում և շուտ մառացնել տալ Աստուրի հասց-
րած վիրավորանքը: Բանից պարզվում է, վոր
Հովոն մոռչ միայն զգացումներ ունի, այլև՝ ու-
րիշի զգացումներն ել և հասկանում: Ինչքան
պաղանիքներ կան մարդկանց հոգում ու սրաի
խորքերում, վոր հետո, շատ հետո յես միայն
զգում ու հասկանում:

— Գինա՞ս, Վահան ջան, թե ինչի յես լավ
չսորվի հրացանի մասեր, — հանկարծ հարցընդ
Հովոն:

Վարդյանը չհասկացավ:

— Կսեմ՝ դինա՞ս ինչի՞ զոռ եր հրացանի
մասեր յես չսովորի, հը՞ :

— Ինչո՞ւ:

— Կվախենի, Վահան ջան, իմ ջան կղողեր:

— Վախենում եյի՞ր, ինչո՞ւ:

— Իմալ չվախենի, Վահան ջան, մոք զիւնստ ի՞նչ ա եղե իմ դլուխ... պստկուց եմ վլխեցի, հա չուրի մկա յել եղ վախ իմ սրտի մջից չելեր ա:

— Ինչ վախ, Հովո ջան, պատմիր:

— Յեռ պստիկի ի, Վահան ջան, մեց տարեկան: Իմ խոր խետ զացերի չոլ տավշար կարծուցի: Կովեր ու յեղներ մասմել ին չայիրի մեջ, կարածին: Մար աեղ եր: Հրա ձունն ել լավ չխալել եր: Պաղ քամին կիչեր ու կզարկեր իմ խոր բեղերուն: Յեռ իմ դլուխ դրել ի իմ խոր չոքերուն ու ենդոր բեխերու խետ կխաղի, են ել թիղնել եր մի ջոջ քարի ու իրա դլուխ վերել կրաքճրացուցեր, որ իմ ձեռներ չխառին իրա բեղերուն: Մեկել վր' զ' զ'— մե բան վզզաց հնցավ իմ անդըճի մոտով: Վզ' զ'— եղ վզզոց, վոր չուրի մկա ել իմ անդին մեջն ա, չուրի մեռնիմ ել, եղ վզզոց չմոռանամ... Եղ ձեն որ իմ միտ գուքա, իմ ջան կղողա... Խա՛, իմ ախաղոր վոր ասեմ, Վահան ջան, մեկ ել վզ' զ' մի բան հնցավ իմ անդըճի մոտով, յես դիցա թե բզեզ եր զզաց ու գնաց: Մեկ ել վզ' զ'... Ես անդամ յեռ տեսա, որ իմ խեր քարի վրեն թինդնուկ ել մնաց ու ել իրար չեկավ: Մենակ մեկ քիչ խռիսուաց: Գյուլլեն, թու չե, զնդա՛կ, գնդակ կպեր եր իմ խոր վզին, վիզ ծակեր եր ու դացեր եր: Ախ, Վահան ջան...

Հովոն այսպես եր դդացվել իր պատմածից, վոր քիչ եր մնում լաց լիներ։
— Հայրդ առողջացա՞վ — հարցրեց Վարդանը։

— Զե, Վահան ջան, իմ խեր եղ գնդակից ել մեռավ։ Մե անդամ խռոաց ու ձեն կտրեց իմ խեր։ Մեկ ել տեսա ուստըռնդաշերով, ջոջազ էւաւիախներով, խինդ-վեց մարդ եկան մեջ տափար ժողվնցին որ տանեն։ Յես զացի ու փախա։ Որ փախա, եղոնք թվանք ուստըցին ընձի։ Մեկ ել տեսա իմ ճռու ծանդրցավ ու տաքցավ։ Յես ընկա դետնին։ Եղոնցից յերկու խողի յեկան իմ վրեն։ Յես ճվացի ու իմ խելք դնաց։ Որ իմ խելք մե քիչ եկերեք տեղ, լսեցի որ եղոնք խայելվար կխոսան։ Որ իմ աչքերը բացեցի, եղոնք ես անդամ թուրքեվար խոսացին, յանի թե թուրք ենք։ Հմա սութ, խային։ Վահանին որ ըսեմ, իմ եարեն լավցավ։ Յես մացի յեթում։ Իմ խեր նախրորդ եր, ես ել ընդոր պես հորթարած դարձա։ Հմա վորտեղ վոր թվանք կտենի, իմ ջան կղողեր…

Իմ խեր որ մեռավ, ընդոր նախրորդության հախ մե եղ հորթիկ եր մնացե։ Իմ խոր մեռնելուց խինդ աարի հնցավ, եղ հորթիկ դարձավ կով։ Եղ կով թազա հղի յեր, յես ել ենքան հազ կենի եղ կովուց, ենքան կսիրի։ Են վախտըն եր, որ բալչեկիկություն գուքեր ու դաշնակըն ել կփախեր։ Մի որ ել, դաշնակներ պախկվուկ բայլչեկիկներուն շուռ գուքին ձորերում մեջ, մեկել թրխ-թրխկոցի ձեն լսվավ։

թարսի պես եղ շան տղի գնդակ եկավ ու մեր
երնջու հղի փորին կպավ։ Երինջ մզգած ու
նստավ։ Ելի իմ խոր մեռնելու որվա պես իմ
շան դողաց... Վահան ջան, ազնիվ խոռք,
ըսկի եղոնք իմ մտեն չերթան։ Հյա ենոր ըն-
կեր պետ կխարցի, կատ՝ կուլակին ինչի՞ բա-
նակ չըերենք։ Դինա թե՛ յես չդինամ որ կու-
յակ մեր գուշմանն ա... Եղ հմենն ըսեցի են-
դոր խամար, որ դինաս, թե ինչի յես հրացա-
նից կվախենի։ Ձև, ըսենք՝ չվախենի հմա իմ
զզվալ գուքեր...

Մկա կմտածեմ, որ յես սխալի, պաի սովորեմ
հրացանի մասեր, որ կուլակներուց իմ
վրեժ խանեմ։

— Ձե, Վահան ջան, պաի սովըեմ։
— Ի հարկե, պետք և սովորես։
— Ի հարկե Վահան ջան, ի հարկե, յես
քո խոքուն մեռնեմ Վահան ջան։

Հովոն ելի մաթաթվեց Վարդյանին։
— Աղիդ ջան, տխողեր ջան... Հմա որ
տխրես, ել իմ տխողեր չես, հա՛, ամոթ ա,
տղամարդ ինչ ա՛, լո՛լ ինչ ա...»

Վահան Վարդյանը վոչ մի հանդիմանու-
թյունից այնքան չեր ամաչել, վորքան այդ
պահին։ Նա սոմաչեց Հովոյի հանդիմանու-
թյունից։ Վարդյանը կցվել և Հովոյին՝
նրան սովորեցնելու, դաստիարակելու և ահա,
պարդպում ե, վոր ինքն ել դաստիարակվելու
կարիք ունի։ Յեվ ահա նախատաղ ու հանդի-

մանական խոսքեր ե լսում նա... Հովոյից ել
Հովոյից, վորին ինքը մարդ չի հաշվել:

Ինքն իրեն ձնշող մտածումներից ազա-
տելու համար, Վարդյանը դիմեց Հովոյին:

— Բեր, Հովո, գիրք կարդա:

Հովոն դիրքը բոնած մոտեցավ նրան և
նա սղնեց Հովոյին կարդալում:

Ֆիղկուլտ դահլիճից բանակայինները վե-
րադառնում եյին: Նրանցից վոչ վոք չնկատեց
վահան Վարդյանի ընկած տրամադրությունը:
Վարդյանը և Հովոն դրքի վրա կուցած ան-
տարրեր շարունակում եյին սկսած հոգվածի
ընթերցումը:

Սարդիսն անցնելով նրանց կողքով, Վարդ-
յանի մեջքին խփեց:

— Կեցցես դու, կեցցես, ընկեր ինտելե-
գենտ, արդեն բայլչելիյան թեքում ևս ստա-
նում...

Վարդյանն արդեն սկսել և չառել Սար-
դիսին: Յերբ Վարդյանը պըսպառմներ ե կա-
տարում իր սրտի բոլոր անկյուններում, չի
դանում մի խորշ, ուր ատելություն լինի Սար-
դիսի նկատմամբ: Իսկ որնը առաջ ճիշտ հակա-
ռակն եր:

— Զե, ի հարկե, Սարդիսն իր անտակտու-
թյան մեջ ել չարություն ու թշնամություն
չունի, — համոզում եր իրեն Վարդյանը: Նա
յել այդալիսի ընավորություն ե:

— Բոլ ա, բոլ Վահան ջան,— հորանջեց
Հովոն— եսոր բոլ կարդացինք— ու դիրքը ծա-
լեց.

Պարզված առազաստը Վահան Վարդյանի
մտքի նավթ քշում և դեղի հեռու, բայց ծանոթ
ափեր: Յեփ ահա Վարդյանը հիշում է Ակորին-
Քարսմյանի ձեսադրի հերոսին: Ու մի գար-
նանային յերեկո յե հիշում Վարդյանը:

Ի՞նչ եր սպառել Ակորը ցարի բանակում:
Ինչպես ուրեմն յերտնություն չհամարեր նա
Հովոների ու յերդով բանակ գնացաղ պղնձա-
հանքերի նորտելոչիկների բախտը:

Վահան Վարդյանը այդ որվա ամենից
յերկար որադիրը վերջացրեց այսպես.

«Լովեց ավագի ձայնը «շարքի»...»

Շարքը պատրաստ է: Գնում ենք ընթրելու:
Ընթրիքի ժամանակ յես առելությամբ եմ նա-
յում Ասատուրին: Նա կարծես դիտմամբ նըս-
տել և ուզիդ գիմացու: Այս, յես նրան լավ տղա-
եցի համարում, բայց այժմ չեմ սիրում նրան,
ու նկարիչ Վահան Վարդյանի արհամարտնքն
և խոսում մեջու:

Ասատուրը հետախույզի նման հետեւում է
ինձ»...

Նա յերբ նկարիչ Վահան Վարդյան եր,
տիեզերքի բռնոր մարմինները պատվում եյին
նրա ՅԵՍ-ի շուրջը: Կարծես աստիճանաբար
այդպես չի լինում: Կարծես մի բան փոխավում
է: Թե ի՞նչ ե փոխավում, ինչո՞ւ, և, ի՞նչպես,
այդ ինքն ել չպիտի: Վարդյանը չի նկատում
այդ փոփոխությունը, ճիշտ այնպես, ինչպես
չնկատեց, թե յերբ իր դեմքի աղվամազն իս-
կական առնական տղամարդու մազերի յեր

վորխովել, յերբ առաջին անգամ վարսավիրի դիմեց: Փոփոխությունը չես զգում, բայց նաև, նա կատարվում է: Յեվ հենց հիմա փոփոխություն և կատարվում վարդյանի մեջ, նրա հոգու մեջ:

Վարդյանը հավատացած եր, վոր այդ փոփոխությունը կա:

Վահան Վարդյանը վորոշել եր վոչ մեառիթ չտալ ավաղին, կամ պետին՝ իր վրա վատ աչքով նայելու: Վարդյանը վորոշել եր այդ և զարմացած հարցնում եր:

— Արդյոք սա հենց փոփոխության մոմենտներից մեկը չի՞:

Նկարիչ Վահան Վարդյանը չի կարող ճիգեր զործ դնել հաճոյանալու մարդկանց, վորոնք հարգել չդիտեն մարդու մաքի թուիչք ներն ու սրաի զգացումները, վորոնք մի աչքով են նայում արվեստի բարձր գեղեցկություններով առըրող և սովորական մարդկանց վրա, իր, Վահան Վարդյանի և առենք Հովոյի ու Աստուրի վրա:

Յեվ Վահան Վարդյանը վորոշել եր առիթ չստեղծել իր վրա վատ նայելու ու զարմացած հարցնում եր. արդյոք սա հենց հաճոյանալու վորոշում չի՞: Բայց Վահան Վարդյանը հիշում եր և հիշում է Քարամյանի խոսքերն այն մասին, թե պետերի հրամանները վոչ թե նրանց անձնական, ինչպես ասում են, սուրյեկտիվ արամադրություններից են բղխում, այլ հեղափոխության շահերից... ու դրանով Վարդ-

յանը մխիթարում և իրեն, վոր իր վարչումը հաճոյանալու վորոշում՝ չի յիդել, վոր հրամանները կատարելով նա հեղափոխությունն և ծառայում... Յեզ, բացի դրանից, արդյո՞ք ինքը յեղակի մի բացառություն է։ Զե՞ վոր Քարամյանը նույնպես արվեստի աշխատավոր դառնալու ձանապարհն և բոնել, խոկ նա, մյուսների նման հրամաններ և լուսմ, կրկնում և լսուծ հրամաններն ու կատարում։

Յեզ ինչո՞ւ վարդյանն ել չի կարող այդպես լինել։

— Թող յես ել այդպես լինեմ, — մտածում եր Վարդյանը — թող յերեք յեռանկյունի, կամ նույնքան քառակուսի նշաններ ունեցողները, անկախ նրանից, թե նրանք գիտեն ովքեր են յեղել Միքել Անջելոն, Այվազովսկին ու Սարյանը, թե չե, հրամայեն ինձ։ Յես միամյակ եմ, մի տարի յեմ ծառայելու բանակում... Մի տարի յետո, վոր զորացրվեմ և քաղաքացիական կյանքում բախտ ունենամ հանդիպելու նրանց, վորոնք այսոր հրամայում են ինձ, այլես հեղափոխությունը չի ստիպի նրանց ինձ հրամայելու...»

— Զե՞ չե՞ յես պարտավոր եմ կտտարելու նրանց բոլոր հրամանները, — խոսում և ինքն իր հետ Վարդյանը և հանկարծ նկատում է, վոր դա փոփոխություն ե, ինչպես հանկարծ ես զգում, վոր յերեկվա աղվամազ ունեցողդեմքդ այսոր մազակալել ե։

Հրաձդությունից հետո Վարդյանը ղորանցի լուսամուտից դուրս եր նայում հորիզոնի վերջին ծայրին, ուր յերկինքը միանում եր յերկրի հետ, ուր յերկիրը ծածկող կապույտ վրանի վեշերը քովում եյին գետնին։ Վարդյանը ղուրս եր նայում յերաղուն հայացքով և մասձում եր, թե ինչ գաղափարներ դնի Քարամյանի նկարի մեջ. ի՞նչ արտահայտություններ տա նրա ղեմքին։ Յերբ դործում և ստեղծագործող միտքը, այնի վատ բան չկա, քան նրա ընթացքը խանգարելը։ Այդպիսի ղեպքում Վարդյանը մոլեգնում ե, կատաղում։ Կատաղում ե, բառի խկական իմաստով։

Վարդյանը կապույտ վրանի՝ յերկրին հասած վեշերին նայելով, աշխատում եր պատկերացնել Քարամյանի դիմագծերը, յերբ հանկարծ լսեց իր անունը։

— Վարդյան։

Վարդյանը թեքվեց։

Ավագն եր։

— Լսում եմ, ընկեր ավագ։

— Ասատուրի հետ գնացեք լենանկյունը կահավորելու, այսոր չեֆերի հետ հանդիսավոր նիստ ե, մեխանիկական գործարանից մեզ մոտ են գալու։

— Թող ուրիշն անի, — ալատասխանեց Վարդյանն անփույթ և զայրույթ զգաց, վոր այնքան գեղեցիկ հորիզոնին նայելն ու Քարամյանի նկարն ստեղծագործելու իր մտքերն ընդհատվեցին.

— Յես գործ ունեմ, ընկեր Այադ:
— Ի՞նչ գործ:
— Նկարում եմ:
— Հետո կնկարես, հիմա դնա:
— Յես, ընկեր ավագ... Յես... Ասատուրի
հետ չեմ դնա—:

Այլադը բարելությունից կարմրեց: Նա ան-
միջապես զգաստ կանդնեց ու հրամայեց վարդ-
յանին:

— Զգա՛սա:

Վարդյանը փայտացավ տեղում:
— Յե՛տ, դարձ, մա՛րշ, տուշ:
— Յե՛տ, դա՛րձ, մարշ:
— Կա՛նդ, ա՛ռ:

— Վերջին անգամը լինի, ընկեր բանակա-
յին. սրանից հետո յել ձեզ նորակոչիկ չենք
հաշվելու, վոր միայն բացատրելով վորձենք
դաստիարակել... տույժեր կան, նարյադ կա-
խիչ ա նշանակում՝ Ասատուրի հետ չեմ դնա,
ուս ի՞նչ արամադրություն ա.

— Վորովհետեւ, ընկեր ավագ... Վորովհեւ
տեվ...

— Վոչ մի «ընկեր ավագ», — կտրեց ա-
վագը:

Վահան Վարդյանը Ասատուրի հետ դնաց
քննանկյունը կահավորելու: Բայց հետո մի ժամ
հետո, յերբ նա մտածում եր դեսպի մասին,
փնթինթում եր իր վրա, «թո՛ւ... չե վոր յես
վորոշեց եյի առիթ չտալ, վոր ինձ վատ նա-
յեն: թո՛ւ, սատանան տանի...»

Յեվ Վարդյանը կըկին անդրադարձավ այն
մաքին, վոր հիբավի փոփոխություն և կատար-
վում իր մեջ։ Ել չստանելով որվա վերջանա-
լուն, Վահան Վարդյանը հենց լենանկյունում
բլոկնոտը բացեց ու մանրիկ տառեր նկարե-
լով դրեց այդ որվա իր ապրումները, դրածն
տոնելով կարմիր գծերի ու ծաղկանկարների
ու շրջանակի մեջ։

«Բնկապես վոր փոփոխություն և կատար-
վում մեջո։ Յես վախենում եմ այդ փոփոխու-
թյունից։ Վախենում եմ վոր կարող եմ հասա-
րակ մահկանացու դառնալ, կորցնել ստեղծա-
դործելու ձիրք։ Այդ դեսլքում հնից կմնան
միայն նկարիչ Վահան Վարդյանի խարտյաշ
մազերի մինջերը (յերբ բանակից աղատվեմ, ա-
ռաջին դործո ելի յերկար մազեր թողնելը կը-
լինի) և, ուրիշ վոչինչ։

Այո, յես ել եմ փոխվում, յես ել եմ փոխ-
վում, ինչպես փոխվում ե ամեն ինչ կյանքում։
Դիալեկտիկայի որենքն և դա»։

Իսկ յերեկոյան շեֆերի հետ կազմակերպված
միացյալ ժողովում Վահան Վարդյանի տրա-
մադրությունը վատ չեր։

«Յերկրի պես կյանքով լեցուն իմ Լյուրա,
դարնան արեի պես սիրով արբած, իմ Լյու-
րա։ յուսնի պես դոդորիկ ու յուսնի պես սի-
րելի Լյուրա, յես քեզ մոռացե՞լ եմ։

Իսկապե՞ս, դու այդպե՞ս ես հավատացած։
Չեմ կարծում։ Դու սատանայի պես խարում

ես, դու ծիծաղելով ես ոչքել բացիկդ, վոր հուզես ինձ, վոր ինձ հուզես ու ծիծաղես: Աւ ծիծաղես սատանայի խորամանկությամբ: Դու չար ու սիրելի Լյուրա:

Բայց զիսեմ, վոր դու իբավունք ունես այդպես վարիվելու: Չորրորդ բացիկդ եւ յես նոր եմ սպատասխանում քեզ: Ուշ եմ սպատասխանում քեզ, իմ Լյուրա, բայց ՆՌԻՇ-ով եմ սպատասխանում:

Հինգ որ տռաջ, յերբ դու ինձ մաս յեկար, յերբ Սարդիսը կանչեց ինձ, թե՝

—Վարդյան, մի ինանլիղենստ, թուխ ու սիրուն աղջիկ քեզ ա կանչում— սիրաս տազնապով արավինց: Յերբ դու յետ գնացիր, Հբայր Քարամյանը մոտեցավ ինձ ու իբեն հատուկ ժպիտով ասաց.

—Սիրուն ու լավիկ ընկերուհի ունես, վահան...

Այդ բովեյին յես ինձ զգացի: յոթերորդ յերկնքում: Բայց այդ բովեյին ել զգացի, վոր անշնորք եմ յեղել: Ռւբախությունից մոռացա քեզ նրա հետ ողաշտոնապես ծանոթացնել: Կարծեմ, հենց այնպես դուք սկսեցիք իրար հետ խոսել չե՞՞: Իմ սիրելի Լյուրա, այդ բովեյին եր նաև, վոր յես ավելի հավատով լցվեցի զետքի մեր վաղվա շողշողուն յերջանկությունը: Ո՞, քաղցը վաղ: Քաղցը, վորովհետեւ վաղվա որերին քեզ հետ ալիսի լինեմ յես: Մենք միասին պետք եւ մթնեցնենք որերը: Աչքերս խփում եմ ու սեղանի վրա տես-

նում ևմ մեր գանդրահեր վիոքը իկին: Վերցնում ևմ մլոճինը նկարելու նրա դանդուրները, վորոնք, և դեպ, չգիտեմ ինչ դույնի կլինեն. Ձե վոր դու թուխ ես, իսկ յես՝ շեկ: Գուցե այդ յերկու դույների խառնուրդը... Բայց ո՞ւր հասավ միտքս: Գիտեմ, վոր յեթե քեզ մոտ առեցի այդ բոլորը՝ ծիծաղելով ուսիս կխփեցիր ու կստատասխանեցիր.

— Ռւբիշ նյութ չունե՞ս խռովելու, անամո՞թ...

Յես կարմիր բանակում լսով կտշխատեմ: Կարմիր բանակը ինձ համար ստեղծագործական վողելորության ակռւնք կլինի: Քայլում ե ահա դիմիզիայի հրամանատարը: Քայլում ե հպարտ, բայց անշուք: Նկարելու հիանալի հասակ ու դեմք, վորը ծով համեստություն և արտահայտում: Քայլում ե ահա քաղբաժնի պետը: Նրա դեմքը խորթ ու բորթ ե, խորշումներ ու կնճիռներ ունի, նրա դեմքը նրա լեռնաշխարհի քանդակն ե: Յես արդեն սկսել եմ նկարել նրան: Իսկական հերոս մարդ ե, իմ քնքուշ Լյուբինկա, գրողի համար ել հետաքրքրական ու կենդանի նյութ ե: Մանկությունը լեռնային մի գյուղում անցկացնելով, հետո նա դնացել ե Բաղու: Այդտեղ պաղապալիայում աշխատել ե բայլշեմիկների հետ, Լյուբա ջան, հետո մասնակցել ե քաղաքացիական կոխներին, ու, հիմա, դիմիզիայի քաղբաժնի պետն ե: Նրա կուստոմսում, պաշտելի Լյուբինկա, դրված ե «1906 թիվ»: Տես-

նո՞ւմ ես, սիրելիս, ինչ գերոյ ե, ինչ հերոս։
Յես նրա նկարի վրա շատ կաշխատեմ և կան-
մահացնեմ նրան, չեմ թողնի, վոր տարբիների
ու հիշողությունների մշուշում կորի նա,
այնպես պետք է նկարիմ, վոր նա մնա կյան-
քում վորպես պատմական ֆիզուրա։

Յեվ այս բոլորը, Լյուրա ջան, ամենից
շատ նրա համար, վոր փայլես դու քո Վահա-
նի փառքով, նկարիչ Վահան Վարդյանի
փառքով հպարտ։

Այսոր հրաձգություն եր։ Ավելի ուրախ
բան չկա զինվորական մարդու համար,
քան կրակելը։ Նույնիսկ յես, վորի իդեան
վոչ թե հրացանն ե, այլ վրձինը, նույնիսկ
յես, խանդավառվել եյի։ Բացիկդ նոր եյի
սաացել ու նրա մասին եյի մտածում։ Նշանա-
ռության ժամանակ նշանակեալից դու ժպտա-
ցիր ինձ ու ցնցեցիր մաղերիդ դեղը։ Ճեռքե-
րըս թուլացան նշանառության ժամանակ և
դնդակներո վրիուցին...

— Ի՞նչ և պատահել քեզ, Վարդյան, խոժ
սիրահարված չե՞ս... ճեռք առավ պետք։

Հինդ գնդակով յես միայն 15 աչող եյի խը-
փել։

Յերկըի ուես կյանքով լեցուն իմ Լյուրա,
գարնան արեի պես սիրով արրած իմ Լյու-
րա։ լուսնի նման չքնաղ Լյուրա, տեսնո՞ւմ
ես, վոր յես քեզ չեմ մոռացել, վոր յես քեզ
չեմ կարող մոռանալ»...

Վահան Վարդյանը, նամակը վերջացնելով,

աղաւ շունչ քաշեց, աղա ժպտաց Վորոշիլո-
վի նկարին, ժպտաց այնպիսի ինքնազո՞ն ժպի-
տով, վորը ցույց եր տալիս նրա հոգու ան-
ստահման ինդությունը։ Այդպես խինդով եր
լցվում նա, յերբ վերջացնում եր վորեւ նկար
և վոչ մի կասկած չեր ունենում այդ նկարի
հաջողության մասին։

Նամակը ծալիլով, Վահան Վարդյանը ինչ
վոր հանգստություն զգաց։ Իր սիրտն այն-
քան եր դատարկել նամակում, մոր վոչինչ
չեր մնացել այնտեղ, որադրի համար։

Այդ յերեկո Վահան Վարդյանը որադրում
վոչ մէ տող չգրեց։

Ելեկտրական լույսը վաղողել եր լենանկյու-
նը։ Ստալինի, Վորոշիլովի, Սմոլինի դիվի-
զիայի և քաղբաժնի պետք նկարները փայլում
եյին դեղին լույսի առկի։ Վարդյանը նայում
եր այդ նկարներին դեղագետի հայացքով։
Վորոշելու թե նրանց մեջ արվեստի տեսակե-
տից ինչ թերություններ կան, ու մտածում
եր, թե ավելի շատ չի՞ դնահատվի դիվիզիայի
Քաղբաժնի պետք՝ իր՝ Վարդյանի նկարը։

Լենինյան անկյունը լցվում եր բանակա-
յիններով։ Կոմյերիտական բջջի բյուրոյի
նիստ կար։ Բյուրոն նիստ եր Հրավիրել ակտի-
վի հետ միասին։ Կանչել եյին նաև Վարդյա-
նին։ Բայց թե ինչու եյին կանչել, նո այդ
չդիտեր։ Վարդյանը մտածում եր, թե քննա-
դատությունն ինչպե՞ս կդնահատի Քաղբաժնի

ովետի՝ իր նկարը։ Մտածում եր այդ մասին եւ հանկարծ անդքապառում այն հարցին, թե ինչո՞ւ յեն իրեն կանչել բյուրոյի նիստին. չե՞զոք դա բյուրոյի ու ակտիվի նիստ է։ Իրեն եւ են ակտիվ համարում։

Քարամյանը, ավագն ու Ասատուրը նստել եցին իրար կողքի։ Նրանք հաճախ մոտենում եցին իրար ու փոխում։ Յերբ Ասատուրն եւ եր խառնվում այդ փախումելին վարդյանը լավ բան չեր դուշակում դրանից։ Նա այնքան համատաց իր նախադպացումին, վոր արդեն վախենում եր դրանից։

Նիստը հայտարարվեց բարցմած։ Յերբ վարդյանը տեսավ վոր նիստին նախադպահում և Քարամյանը, նրա բորբոքված մտքերն հանդըստացան։

Հբայր Քարամյանը հայտարարեց որակարգի հարցերը։

Առաջին հարցը յերկու կոմյերի խականների խնդիրն եւ այդ մասին զեկուցելու համար խոսքը տրվում եւ բյուրոյի անդամ ընկեր Ասատուրին։

Յերբ Ասատուրը վարդյանի կողմը նայելով վոտքի կանգնեց, վարդյանը յենթադրեց, թե ինչ հարց կարող է լինել այդ յերկու կոմյերի խականներից մեկի հարցը։ Մինչ այդ ժողովը, նա Ասատուրից ակնարկներ եր լսել, վոր իր հարցը ժողովում կքննեն։ Բայց թե՝ ինչպես Ասատուրը պետք է ապացուցի վարդյանի «ուղորտունիստությունը», ինչպես այդ ասում

Եր Աստուբը, Վարդյանն այդ յենթաղբել
չեր կարողացել:

— Բնկերներ, — սկսեց Աստուբն իր հեղի-
նակության վրա վստահ զասախոսի պես, —
առաջին հարցն ընկեր Վահան Վարդյանի
հարցն ա: Նա մի քանի անգամ տրամադրու-
թյուններ առնեցել, վոր միանգամայն ան-
թույլատրելի ա, հարյուր տակոսով ոպորտու-
նիստություն ա, շեղվում ա բայլշենիլյան
պծից: Այդ տեսակետով ել մենք պետք են մո-
տենանք հարցին: —

Վարդյանն ապուշ կտրած հետեւում եր
նրա ամեն մի բառին: Բայց Աստուբը հե-
տըզհետեւ ավելի վողեառիլելով իր խոսքերով, —
շարունակում եր:

— Խայտառակ փաստ ա, ընկերներ, պետք
ա բայլշենիլյան զդոնությամբ խփենք:

— Փաստեր, փաստեր տվեք, — ել համբե-
րել չկտրողանալով, կանչեց Վարդյանը տե-
ղից:

— Առաջին փաստն են ա, ընկերներ, — շա-
րունակեց Աստուբն առանց ուշադրություն
դարձնելու Վարդյանի վրա, — առաջին փաս-
տըն են ա, վոր անցյալ որը յես նամակ եյի
ստացել, վոր մեր կոլխոզի պահեստը գիշերը
դասակարային թշնամին թալանեւ: ա: Ճիշտ ա,
վոր բայլշենիլյան հոգին չպետք ա տիրի,
բայց մի քիչ ել յես թեքման մեջ ընկա,
վոր տիրեցի. պետք ա բայլշեմիլորեն խոս-
տովանեմ: Քեզս մի քիչ կոտրվել եր ու

նստեղ եցի զորանոցը։ Մեկ ել ընկեր Վարդյանը յեկայի ու ասում ա, թե՝ դո՞ւ ել ես բանակից ձանձրացել, Ասատուր ջան... Սուածինը սա նշանակում ա, վոր ինքը ձանձրացել ա, յերկրորդը, նշանակում ա, վոր ուղում ա ուրիշների մեջ ել իր ոպորտունիստություններն ու տրամադրությունը տարածի, վորը միանդամայն դատավարութելի ա։ Յերկրորդ փաստն են ա, վոր անցյալ որը նա Հովոյի հետ պարտպում եր ու յես ել լսում եցի։ Հովոյին հարցնում ա թե՝ «Հովո, վոր կոխով լինի մարդ կոպանե՞ս, բա մեղքը չե՞ն»։ Սա յել սխալ արամադրություն ա։ Բուրժուաների սուտ տեսակետ ա, վոր մարդ սպանելը մեղք ա։ Իրենք եղաղեռ են տառմ, բայց հարյուր հաղար հոգու մի գրրի յեն սպանում, հարյուր հաղար բանմխը ու դյուզացիներին։ Ուրեմն սխալ ու անտեղի կածիք ա, թե բուրժուաներին սպանելը մեղք ա։ Մենք, ընկերներ ընդհակառակեց յեկել ենք կարմիք բանակ, վոր բուրժուաներին սպանելու տեխնիկան տիրապետենք, վոնց վոր ընկեր Ստալինն ա ասել... Ենո առաջարկում եմ միանդամայն խիստ վերաբերվել։

Վարդյանը շշմել եր։ Վոր այդ խոսքերն իսկապես ինքն ասել եր, դա ճիշտ եր։ Բայց դրանք սպորտունիստական եյին թե չե, նա չեր զգացել, նա չեր ել յենթադրում, թե իր այդ խոսքերից կարելի յե սպորտունիզմ դուրս բերել։

— Ուրիշ ո՞վ ե ուզում խոսել, — գիմեց
Հրայրը ժողովին:

- Յես, ընկեր նախադահ:
- Չա'յն տուր ինձ:
- Մի ձայն:

Չայնը տրվեց ավագին: Նա ասաց, վոր
Վարդյանը մարտական գծով ել արդեն նկա-
տողություն ու դպուշացումներ ունի, վոր յե-
թե Վարդյանն իրեն այլպես պահի, հրամանա-
տարությունն ավելի խիստ կվերաբերվի, վո-
րովհետեւ առաջին որերը վազուց են անցել և
1910 թվի ծնվածները վոչ թե ելի նորակոչիկ-
ներ են, այլ կարմիր բանակայիններ: Ավագը
հիշեցրեց, վոր նա դընեթե միշտ այս կամ այն
կերպ տուրելում ե իրեն, ապա նոր հրամանը
կատարում: Դառնալով Վարդյանին ավագն
ասաց.

— Ընկեր Վարդյան, պետք ա քո նկատ-
մամբ ավելի խիստ կինեն թե բջիջը և թե հրա-
մանատարները, վորովհետեւ դու գիտակից
ընկեր ես, բարձր կրթություն ունես, վոր դու
եղանակ բաներ ես անում, անդրադետներն ի՞նչ
կանեն:

- Խոսեց Սարդիսը:

— Ընկեր Վահան, — սկսեց նա, ուղղակի
Վարդյանին դիմելով, — պետք ա քո աչքերի
մեջ ու քո յերեսին ասենք, շատ ես ինդիկենտի
նման մարդու մտիկ անում, հենց գիտաս թե
դու յես, վոր կաս, ուրիշները հե՛չ...

- Սարդիսը մի քանի անդամ կրկնեց, վոր

Վարդյանը պարապմունքում ծիծաղել եւ Հովոյի վրա, վոր իրեն՝ Սարգսին միշտ առել եւ օթես քեզ մարդ չեմ հաշմում, չեմ պատասխանի քեզ»:

— Բայց պետք առնդդել, — շարունակեց նա, այս անգամ դիմելով ժողովին — վոր ընկերը վորոշ չափով ուղղվում առ, ինդիմիենառկան թեքումից դուքս առաջի, պետք առ խոստովանել:

— Ներողություն, — նետեց տեղից Աստուբբ:

— Վոչ մի ներողություն, — պատասխանեց Սարգսին ու անվրդով շտրունակեց, — պետք առնդդել, վոր ընկերը ուղղվում առ և ուղղում առ իր ինդիմիենառական հոգին:

Հրայրը բոլորից հետո խոսեց: Վարդյանը քիչ բան կարողացավ հիշել նրա ասածներից: Նոր բան չասաց Հրայր Քարամյանը: Այն, ինչ վոր նա առել եր բազմիցու և հատկապես Վարդյանի համար, այս անգամ կրկնեց: Բայց այդ բոլորից մի բան մնացել է Վարդյանի հիշողության մեջ:

— Իզուր եք կարծում, ընկեր Վահան, — ասաց Քարամյանը, — վոր մենք՝ յես ու դու, ամելի զրադես լինելով, սովորելու բան չունենք մյուսներից: Մենք կարող են սովորել մոչ միայն Ասատուրից, Սարգսից, այլև յեթե կուղես, Հովոյից ել, Հովոյից, վորի հետ պարապում եք դուք: Մի մտածեք, թե զեղարվեստական տեխնիկում եք ավարտել:

իսկ նրանք լրիվ դրադեանեց ել չեն։ Բայց
այն, ինչը վոր պահանջում են հեղափոխու-
թյան, դաստիարդի ու յերկրի շահերը, նրանք
ավելի շատ ունեն, քան մենք։ ահա թե ինչ
պետք ե սովորել նրանցից։

Զայնը արմեց Վահան Վարդյանին։ Նա
ասաց այն, ինչ մտածել եր ու մի քանի անդամ
մտքում կրկնել։

— Ընկերներ, — ակնեց նո կործես վախվր-
խելով, — յես անկեղծ եմ ասում, և հուսով
եմ, վոր իմ անկեղծությանը կհավատաք։ Աղ-
նիվ խոսք եմ ասում, վոր յես չեմ իմացել, թե
իմ այդ խոսքները, վոր ընկեր Ասատուրն ա-
սաց, ոսկորտունիստական են յեղել, աղնիվ
խոսք եմ ասում, չեմ իմացել, ինչո՞ւ չեք հա-
վատում։

Ամբողջ ժողովը հռհռաց։ Վարդյանն ա-
յելի հիմար դրության մեջ եր զդում իրեն,
քան Հովոն այն որը, յերբ պետի հարցին պա-
տասխաննեց, թե ուաղմահեղափոխական խոր-
հըրդի նախադահը կլոյանն ե ու բոլորը ծի-
ծաղեցին նրա վրա։

— Զի՞ իմացել... տղեն չի՞ իմացել, վոր
ոսկորտունիստական բաներ ա տեղել... — ինըթ-
վիընթում եր Ասատուրը տեղից։

Ժողովն անցավ առաջարկություններին։

Ասատուրն առաջարկեց՝ Վարդյանին հե-
ռացնել կոմյերիտմիության շաքրերից։

Վարդյանի մարմինը վայրկենապես փշա-
քաղվեց։ Հեռացնե՞ն, այդ յերկու հասարակ

խոսքերի համարը։ Ինչ խիստ մարդիկ են։ Զըրդավիր՝, չճշա՞ր, վոր նրանք քյալագյողներ են։ Խոկական քյալագյողներ, իսկ ինքը հարցը կըհասցնի Դիմիզիայի Կուսհանձնաժողով, Բանակի Կուսհանձնաժողով կհասցնի, այնտեղ իրեն կհասկանան։

Բայց ավելի լավ չի՞ լինի արդյոք, վոր լոի, վոր կրքեր չբորբռքի իր դեմ և այսպես հեշտ պրծնի։

— Ասատաւըն առաջարկում և հեռացնել, տեղին ե, շարունակեց Քարամյանը։

Վարդյանը զարմանքից ստուց։ Զե վոր այդ որն առավոտյան, յերբ ինքը նկարում եր Քարամյանին, նա շատ սիրովիր եր իր հետ, ինչպե՞ս և, մոռացել և հիմտ չի պաշտպանում իրեն։

— Տեղին և Ասատաւի առաջարկը, բայց յես կարծում եմ, ի նկատի ունենալով, վոր Վարդյանը նոր կոմյերիտական ե, վոր նա հարող և բջիջի և ընկերների սղղեցությամբ դաստիարակվել, վոր մինչեւ բանակ գտը նա քաղքենիական շրջապատ և ունեցել, չի շփովել բանվար յերիտասարդության հետ և դեռ անհուսալի չի, յես առաջարկում եմ անել խիստ նկատողություն վերջին նախազգուշացումով։ Դրանով մենք վերջին անգամ կիրորձենք դաստիարակել նրան։

Այդպես ել վորոշվեց։ Խիստ նկատողություն, վերջին նախազգուշացումով։

Ժողովից հետո Քարամյանը Վարդյանի

հետ դուքս յեկավ բակում խռովելու, կարծես
նախապես պայմանավորված լինելով դրա
համար: Վարդյանին նա հուսադրում եր չհու-
սալքվել, լծվել ուղմական-քաղաքական աշ-
խատանքներին, լավ կատարել կոմյերիտական
պարտականությունները:

— Յեվ այդպիսով՝ դու հեղինակություն
կունենաս թե՝ ընկերներիդ և թե՝ պետերիդ
մոտ . . .

Վարդյանն ուզում եր վիճել Քարամյանի
հետ միայն մի հարցում, վոր՝ ինքը քաղքենի
չե, վոր այդ շրջապատն իր վրա վոչ մի աղղե-
ցություն չի գործել: Բայց վորովհետեւ Քա-
րամյանը դա ասել եր իրեն պաշտպանելու հա-
մար, Վարդյանը հարկ չհամարեց դրա մա-
սնին վիճել:

Ամելիի լավ ե՝ լոել:

Ժողովի յերկրորդ որն ել դեռ Վարդյանը
տիսուր եր: Յերեկոյան, յերբ պետք ե զնար
միջաղղային ժամի պարապմունքին՝ հանկարծ
հորիղոնի ծայրին նկատեց հրդեհվող մի ան-
հունություն: Մանոթ մի զգացում, սովորա-
կան մի տիսրություն ամբողջովին համակեց
վարհան Վարդյանին: Իր բլոկնոտում նա գրեց:

«Յերեկոյանում եր: Սիրելի վերջալույսն
եր յերեւում լեռնակատարներին էլետված ամ-
պերի ծիրանագույն քուլանեցով, արյան ան-
հուն ծովն եր փուլել, արյան անհուն ծովը՝
տիսուր ու գրավիչ» . . .

Այդ յերեկո Ասատուրն ել—փորձեց կա-

տակել Վարդյանի հետ, բայց յերբ տեսավ, վոր Վարդյանը վոչ մի կերպ չի ժպատ, կառակելն ավելորդ համարեց:

Արդեն մի քանի որ եր անցել այն որից, վոր Վահան Վարդյանը բջիջի բյուրոյի նիստաւմ խիստ նկատողություն եր ստացել: Այդ որերի մասին Լյուբային գրած նամակում նու առում եր, վոր ինքը հոգու խսկական տրապեզիա յե ապրել:

— Յետ, վոր դպրոցում այնքան ըմբռատ եյի մտքերով, — մտածում եր Վարդյանը, — վոր կարդացել եյի մեծ մտածողների դորձերը, ու հետեւթաք՝ այնվի ինքնավստահ պետք է լինեցի, բյուրոյի նիստում ծաղրիմեցի Ասատուրի ու մյուսների կողմից: Ինչո՞ւ ախտը ե՛, ինչո՞ւ պետք ե այդպես լիներ»....

Եյուրոյի նիստից հետո Վարդյանը գլխավ ունեցավ: Եերկրորդ որն արդեն չուներ, բայց չգիտեր ինչու համար, տառապում եր: Իսկ մի քանի որ հետո ահա յեղավ մի որ, վոր եվերեստի դադաթն եր հասնում նրա տրամադրությունը: Դրա համար Վարդյանը յերեք պատճառ դիտեր և միշտ աշխատում եր չմոռանալ, վոր իր արամաղքության քարձրանալն այդ պատճառների հետևանքն ե:

Առաջին պատճառն այն եր, վոր նա ցույց եր տվել Քարամյանին նրա նկարի եսքիզն ու եսքիզը նմիրել նրան, իսկ Քարամյանը կարդացել եր նրա համար իր մի արձակ բանաս-

անդությունը։ Յերկրորդը՝ վոր վերջացրել
եր Քաղբաժնի պետի նկարը։ Քաղբաժնի պե-
տը, Վարդյանի ուսին խմբելով, հաստ բեխե-
րի տակից ասել եր։

— Ա՞,—բալամ, եղ Հո հենց յես եմ, վոր
կամ...

Բայց Վահան Վարդյանը առանձին մի կա-
րելորություն եր տալիս յերրորդ պատճա-
ռին։ Դրանից մի շարաթ առաջ այդպիսի մի
բանի համար նա թեթև մի ժպիտի համար ել
ժատ կլիներ։ Բայց հիմա այդ պատճառը
նույնիսկ ցնծությամբ ե լցրել Վահան Վարդ-
յանի վողջ եյությունը։ Սկզբում Վարդյանը
չգիտեր, վոր իր տցդ որվախության
պատճառներից մեկն ել, այն ել հիմնական
պատճառն այդ ե։ Զդաց ու հասկացավ հետո։

Եյուրոյի նիստից հետո Վարդյանը Քա-
րամյանից քաշվում, եր, իսկ Քարամյանն ան-
ընդհատ բացատրություններ եր տալիս նրան
ինչպես ուսուցիչն իր տհաս աշակերտին։

Յեվ Վարդյանը մտածում եր «Դժվա՞ր և
արդյոք այդ բոլոր պահանջները կատարել։
Ինչո՞ւ յես չպետք ե կարողանամ կատարել դը-
րանք։ Վորևէ սկզբունքի համա՞ր եմ զլանում։
Վոչ այդպիսի սկզբունք ու պատճառ չկա, չի
լինի, յեթե յես ուզենամ։ Հարկավոր ե միայն
վորոշ չափով թողնել նկարիչ Վահան Վարդ-
յանի խառնվածքի առանձնահատկություննե-
րը, իամ կարող եմ մի տարով արձակուրդ տալ
այդ առանձնահատկություններին»...

Յերեկոյան ժամի 11-ին Վարդյանը քննեց՝
Անկողնում արթուն մնաց միայն մեկ ու կես
ժամ :

— Արթնանա՞լ, — լսվեց առավոտյան և
Վարդյանը յերկրորդ, թե յերբորդն եր, վոր-
արդեն հազել եր շորերն ու պատրաստվել։ Ա-
մեն որդիա պես վոչ վերջինն եր նա, վոչ ել նա-
խավերջինը։

Շարքի', — լսվեց նախաճաշից հետո։ Յեվ
Վարդյանն ել մյուսների նման վազելով հա-
սով շարքի տեղը, դոտին ամուր կապած, ար-
տաքին տեսքը՝ խկական բանակային։ Քայ-
լելիս ել նա ուշադիր եր իր բոլոր շարժումնե-
րի նկատմամբ։ Հրաձգության ժամանակ ել
հինգ գնդակով անցյալ անդամվա 15 աչողի
փոխարեն 21 աչող խիեց, յերբորդ տեղը բըս-
նելով կամանդայի բանակայինների մեջ։ Առա-
ջինը Քարամյանն եր։

Պարագմունքից հետո՝ ավագը մոտեցավ՝
Վարդյանին ու մտերմությամբ մանը աչքերը
պսպղացնելով, տասց։

— Բնիեր Վարդյան, արդեն խոկական
կարմիր բանակային եք դառնում . . .

Նա ասաց՝ դա այնքա՞ն խորը նշանակու-
թյուն տաղով իր աստծին, այնքան բազմախոր-
հուրդ, վոր միանդամից բարձրացավ Վարդյա-
նի տրամադրությունը։

Ահա յերբորդ պատճառը։

Ավագի ժպիտը։ Ժպտալիս նրա ամբողջ
դեմքի հետ կարմրում եքթի ծայրն ել և կար-

ծես ժողիտը դեմքից ներքեւ և հոսում նրա քթի
կարմրած ծայրով։

Այդ նր յերբորդ աշատճառը, վոր Վահան
Վարդյանի տրամադրությունն ինչպես նա գը-
րել եր իր բլոկնոտում, հասել եր «Եվերեստի
գաղաթին, Շալիապինի յերգի կարկաչուն
բարձրությանը»։

Վահան Վարդյանն ամուր փակել եր լու-
սամուտը, վոր պաղ ուղը ներս շխուժեր ու
չխանգարեր նրան մտածելուց։ Յերբ կտրվում
ե նրա մտքի թնլը, նա զայրանում ե ինքն իր
վրա։ Իսկ այդ որը չեր ուզում զայրանալ։
Այդ որը Վարդյանը չեր ուզում, վոր անդոր-
րության փոխարեն աննորմալ կերպով խփի իր
զարկերակը։

Վարդյանը հոգու կատարյալ անդորրու-
թյան եր հասել։ Կրկիսի արենայում քրտնքա-
կալած արտիստը յերր արենայից փափուկ ան-
կողնու մեջ ե ընկնում, չի կարող այնքան ինք-
նադուհ լինել տանջանքից հետո գտած իր այդ
հանդստի համար, վորքան Վարդյանն եր այժմ
ինքնագոհ։

Նրան թվում եր, վոր մինչև այդ որն ինքն
ավելի յե տանջանքի մեջ յեղել, քան կրկիսի
արենայից ուշ յերեկոյան անկողին վերադար-
ձող ըմբիշը։ Ըմբիշն ինքն և իրեն յենթարկում
ամենորյա տանջանքի։ Յեվ դա միայն Ֆիզի-
քական տանջանքն ե։ Վարդյանն ամենեին չէ
դժուհում Ֆիզիքական տանջանքից։

Այժմ Վահան Վարդյանը հոգու կատարյալ անդորրությանն եր հասել և այդ անդորրությունը յննթաղթում եր հավերժական։

Աշնավերջի քամիները սիրամերժ արու կատուների խմբերի պես վոռնում եյին մողոցում, կամանդայի զորանոցի լուսամուտի տակ։ Վոռնում եյին կառվային զայրագին ու հոգումի վոռնոցով։

Վարդյանը յառամ եր նրանց ու խորհում։

Վարդյանը նայում եր զորանոցի բոլոր ժահճակալների վրա քնած բանակայինների դեմքերին։ Վարդյանին շատ եր հետաքրքում, թե բացի այլաշտհական հարցերից՝ նրանցից ո՛վ ինչի մտախն և մտածում, ո՛վ ինչ զաղտնիքներ ունի իր հոգում։ Բայց Վարդյանի հետաքրքրությունը հաղիսլ եր դոհացում ստանում։ Նա զգում եր, վոր ինքը դժվարությամբ և կարողանում ճանաչել նրանցից շատերին։

Ելեկտրական լամպը Վարդյանն այլ ևս թղթով չի փաթաթում...

Հրամանով դա արգելված է։

Եղեկտրական դեղին լույսի տակ յերեսում են բոլոր դեմքերը։ Վարդյանը նայում է բոլորի վրա հերթով։ Կարծես առաջին անդամն է տեսնում նրանց։

Ահա Հրայր Քարամյանը։ Ժպիտը, հայելուց ընկած սոլիտակ ցոլքի նման, խաղում է նրա շրթունքների վրա։ Քնած և նա, բայց Վարդյանին թվում և թե նա խոսում է իր հետ և ժպտում, ժպտում սիրալիք ու համակընելի,

կամ, ինչպես Այուբան և սիրում տաել Քարամ-
յանի մտախն, Շնորհականի:

Ահա Սարդիսը: Նա կարծես յերազի մեջն
ել ուղում և բութ մատը ցուցամատի ու միջա-
մատի մեջը մտցնել ու հայհոյել:

— Զաթլա՛խ ծնողա...

Այովես եր պատասխանում նա Վարդյա-
նին որեր առաջ: Իսկ հիմա ել այդպես չի խո-
սում: Յեվ անդամ կառապանին հատում այդ-
արտահայտությունների հետ միասին, Վարդ-
յանը սիրում և նրան: Սարդիսը պարզ ե, ինչ-
պես թափանցիկ ողը: Ցիշա ե, վոր նախիլ և նա:
Բայց սրանցից ո՞վ նայիլ չի, — պատասխա-
նում և Վարդյանն իրեն:

Ահա ավագը: Ինչպես ելեկորականության
մեջքը կոնանման մետաղի սուր դադաթից,
դեմքի ժամկանը ցած և հոսում նրա քթով:

Հովոյին Վարդյափնը չի անսնում: Նրան
տեսնելու համար նա տեսոք և շրջիմի մյուս կո-
ղի վրա: Բայց լավում են Հովոյի փափառվա-
յին մենախոսություններն ու խոմփոցը:

Դա նրա սովորությունն ե չնի մեջ:

— Հրահանն իր կոճակով... Զարդանն
իր ասեղով... խը՛ը՛ո... խը՛ը՛ո...

— Միացնող քանոն... քը՛ը՛ը՛իս... մար-
տական փակո՞ֆ...

— Խը՛ը՛իս... խը՛ը՛ո... ծիծիկ... տվիչ
մեխա... խը՛իս... նիզմ...

Մարդու մտքի իներցիան և դա, հավի-
տենական շարժման որենքը մարդու ուղեղի

մեջ: Ու այսպէս ամեն որ Հովհանքի ուղնդը շարունակում է աշխատել: Ուղեղի խոսելու կենտրոնը քնի թմբքի մեջ հրաժայում և լնդիքն ու ձայնալարերին՝ կատարել իրենց ֆունկցիան:

Ելի ծանրանում ևն Վահան Վարդյանի կոպերը: Հոգնություն, թմբնցնող նյութ դու, վոր թաղիքի նման թուլացնում ևս մտքի արձակած ուղացիկ նետերի թափը, յերբ նրանք քեզ ևն կալչում:

Մանրանում ևն Վարդյանի կոպերը: Նորուկում և մեջքի վրա ու նայում առաստաղին: Ճերմակ, հարթ մակերևույթ: Բայց վառ սպիտակությունը խաժամուժիում և, յերբ Վարդյանը խփաւմ է իր աչքերը: Խաժամուժը ուղիւների մեջ սեը հողթում և բոլորին, ապա ևն դույնը կլորանում և ու դառնում նշանակետ, ոև խնճոր՝ թվանշաններով՝ չտիերով: Վարդյանը պառկաւմ և նշանառության: Սիրարչի տրուիում: Վարդյանը նեղվաճք չի դդում: Նա դանուղությամբ ու աստիճանարար ձգում է ձղանը: Արձակած դնդակն ուղիղ խնճորի կենտրոնին և կալչում: Աչքերը բացվում են: Ճերմակ առաստաղն և լամպի թելից նրա վրա ընկած ռուփերի մի դժով:

Ելի յեն ծանրանում Վարդյանի կոպերն ու ելի նույնը: Յեզ հանկարծ, ինչպես մութը՝ առավոտյան, Վարդյանի աչքերից փախչում է քունը: Ճերմակվա լույսի հստակությամբ մըտքերն են լցվում նրա ուղեղի մեջ:

Իր կյանքի այդ նոր որերից յուրաքան-

չյուր ոքվա մանրամասները, իր տեսած սիրելի
նկարների նման, թարմ են Վարդյանի դլխում:
Նա լսում է զեւ Հրայր Քաշամյանի՝ յերա-
ժշտության պես քաղցր խոսքերը:

— Այսպես, Վահան ջան, մենք դառնում
ենք խեկական կարմիր բանակայիններ:

Նույն բանն առում են բոլորը: Բոլորը
նույնն են առում, ուրեմն՝ այսուղի ճշմարտու-
թյուն կա:

Քարամյանը «ձենք» տասց: Բայց Վարդ-
յանը նրա ակնարկը հասկացավ այսպես, վոր
դա միայն իրեն՝ Վարդյանին կարող ե վերա-
բերվել:

Քունն ելի սկսեց հաղթել Վարդյանին,
ելի նոյում ե նա առաստաղի սպիտակությա-
նը, վոր չընի, վոր հեշի հենց նոր մռացած
լայլ մտքերը:

Սև խնձորը:

Կարծես քննի և Վարդյանը, բայց արթուն
է: Մի հաճելի թմրություն ե իջել նրա վրա.

Ահա սև խնձորի մոխարեն՝ Պիլսուղսկու՝
ծիծեռնակի ջարդված թեվերի նման բեխեր
ունեցող, և, Հիտլերի պես լերի քարե մկան-
ներ ունեցող զորավարներ գրոհում են կար-
միքների զնդի հրամանատար Վահան Վարդ-
յանի վրա: Պիլսուղսկու բեխերի ծայրից լու-
տանք ե ծորում, խել Հիտլերի դեմքից թույն
և արձակվում:

Վարդյանը կրակում է և նրանք չեն ընկ-
նում: Սվինահարում ե և նրանք չեն ընկնում:

Նա քաշում և իր փայլիլող սուրը, ճռճում
նրանց դվիսին։ Վարդյանը տեսնում է նրանց
յետելից յեկող զինվորներին, վորոնք հաշտու-
թյան թաշկինակ են օլորզում կարմիրների
բանակին։ Վարդյանին, ու, մերկացնում են
սրերն իրենց գորավարների թիկունքը խրելու։

— Ուռում . . . Ուռում . . . Բդավում և
վարդյանն ու առաջին անգամ ինքն և արթնա-
նում իր ձայնից, ապա՝ ավագը, Ասատուրը,
Քարտամյանն ու մյուսները։

Վարդյանը նայում է առաստաղին ու ինչ
վոր մի միտք, ամիսներ առաջ լսած առվակի
խռիսողի պես անուշ, ելի չի թողնում նրան
քնելու։

Հա, զատի նա, թե վորն եր ամիսներ ա-
ռաջ լսած առմի խռիսողի պես անուշ միտքը։
Չե վոր մի շաբաթ առաջ նա այս սպիտակ ա-
ռաստաղի վրա ակնում եր թուխ խռպաղնե-
րով թխաչյա մի տղջեա՝ տմպերի տակից փախ-
չող լուսնի պես կոկեա դեմքը . . .

Լյուրային եր տեսնում նա։ Իսկ հիմա նը-
շանիեւոն և այնանդ յերեւում։

— Ռւբեմն, իսկապես վոր, յես վոխվում
եմ, — շնջաց նա յուրովի, — բայց լավ ե քնեմ,
քնեմ, վոր շուտ արթնանամ։ Չե վոր վաղը
մի քանի ժամ անընդհատ շաբային վարժու-
թյուններ ենք անելու։

Կամանդայի զորանոցում խորը քնի մեջ ե-
յին, յերբ շտարի շենքի միջանցքում լավեց

տաղնապալի սուլոցը։ Բոլոր քնած բանակային-ների վրա ել կարծես սառը ջուր լցրին։ Մի քանի վայրելյանում բոլորն արդեն հագնվում են։

Անուշ յերազից հանկարծ վեր թռավլ Վարդ-յանը և արսընլով քնատ աչքերը, տռաջին պահ չղղաց, վոր դա յերազի շարունակությունը չի։ Նա ուզում եր կանչել այնքան քաղցը յե-րազում տեսած իր սիրնիին, բայց սուլիչի տաղնապային ճշլոցը սթափեցընց նրան։ Չղալով, վոր տաղնապ և հայտաբարվում, Վարդյանն արագությամբ ոկանց շորերը հաղ-նել։ Յերկու բոսկեյում նա արդեն հագել եր։ Թեթև ու արագ հայացքով նայեց մյուսներին ու զդաց, վոր ինչ-վոր հրճվանքով լցվեց իր սիրուը։

Նա յերկը որդն եր շուտ հագնվողների մեջ։ Բայց, յերբ դեռ նոր պետք և դուրս վազեր զո-րանոցից, տեսավլ վոր շալվարի առաջի կոճակ-ները չկան։ Կոճակները պետք և կոճկվեյին յետելից։

Շալվարը հագել եր նա հակառակ կողմից։ Մինչև հանեց ու նորից հարավ, արդեն բոլոր բանակայինները դուրս եյին վազել։ Դատարկ մնացած զորանոցը շփոթեց Վարդ-յանին։ Մի քանի անգամ պտտվելով տեղում, ինչուս դլվին հարված ստացած հավ, նա կը ին սթափվեց։ Նայեց ժամացույցին։ Սլաք-ները կարծես թռվում եյին ժամացույցի շր-ջանակի մեջ։ Վարդյանը ցուցամատի հողերով տրորեց աչքերը։

Ժամի 4—30—նն եր։ Արդեն հինգ բովեւ եր
անցել այն վայրկյանից, յերբ տաղնապ հայ-
տարարվեց։ Հինգ բովեւ... ինչքան ժամանակ,
իսկ Վարդյանին թվում եր, թե իսու ժամից
ավել և անցել։ Հինգ բովեւ... Յել արդքան
ժամանակում Վարդյանն ինչքան բան մտա-
ծեց։ Իդուր չի ասված, վոր ոմենաարար ոշ-
խատող մեքենան մարդու ուղեղն է, մարդու
մտքի ընթացքն և ամենաարագ չարժումը։

Մանելով ոքապահի սենյակը, Վարդյանն
այնտեղ տեսավ պետին ու պատիվ մերցրեց։

— Լուսմ եմ, ընկեր պետ։

Պետք նայելով ժամացույցին, ինչիոք նր-
նշանակում արեց բլոկ-նստում։ Վարդյանը
կարմրեց մինչեւ կոմունարկացի ծանրությու-
նից կախված ականջները։

— Մեր պահեստի յերկրորդ սենյակում
խիստ հրդեհ է, անմիջապես անցնել այնտեղ—
կարգադրեց պետը։ Վարդյանը դուրս թռար։

Այդ բոլորը տեսց մի քանի վայրկյան մի-
այն։

Մինչև վերևի հարկի միջանցքից Վարդ-
յանը պատից կախված կրակմարիչը վերցրեց
ու վաղեց պահեստը, արդեն այնտեղ ելին բո-
լորը, վորոնց թվում նաև պետը։ Մյուսները
զնացել ելին պահեստի ոշխատողներին ու հը-
րամատարներին կտնչելու։

— Գործել, գործել արագ, — հրամայում
եր պետը։

— Այ, այստեղ Վարդյան։ Տեսնում ես բոցերը կոնց են լիզում, այստե՞ղ։

Վարդյանը կրակմարիչի կափարիչը զարկեց գևանին և բռնելով ճիշտ այնպես, ինչպես կրակմարիչի վրայի նկարում հրդեհաշեջն եր բռնել, նրա անցքից ուժով դուրս նետվող հեղուկի ձողն ուղղեց դեպի «Ամպող բոցերը»։ Կրակմարիչի անցքից նետվող հեղուկի սպիտակ փրփուրը անկյունի դերաններից թափվում եր ցած։

— Ես կողմ, այ, ես կողմի բոցերը զոռ են անում— և Վարդյանը կրակմարիչի անցքից դուրս ձղվող հեղուկի ձողն ուղղում եր այն կողմը։ Մի յերկու րուրե հետո կրակմարիչից դուրս յեկայ տմբողջ հեղուկը։ Եերկրորդ կրակմարիչը բերելով, Վարդյանը պետից հրաժան ստացավ, ուղղել դեպի հատակին նոր թափված նավթի լճակը։

— Այ, սա յա, — վոտքը դետնին խփելով ցույց տվեց ոլետը, — նավթի գյոլը սա յա, և բոցերն ել բարձրանում են։

— Լավ— ասաց Վարդյանը, և անմիջապես հիշեց, վոր վոչ թե լճակին պետք եւ ուղել կրակմարիչի հեղուկը, այլ պատին, վոր լճակի յերեսին իջնեն փրփուրները և բոցը հանգնեն, այլապես լճակին ուղղելով, խփող հեղուկը կցընը նավթը և հրդեհը կծավալվէր։

— Վո՞տ, մալադեց, լավ եր չմոռացար, — խրախուսեց պետը։

— Վարդյան արդեն հանդցըիք, թող:
— Հանդցըա՞ծ եք հաշվում.
— Հա՛, Հա՛, հանդցըած եմ հաշվում,
Հիմա յել ա՛յ եստեղ են բոցերը մատենում:
— Վորանդ են բոցերը, վորն ե՞ք հաշ-
վում բոցը:
— Ա՛յ սա՛, եստեղ, բոցն ել եստեղ ա
հասել:

— Դե, զեն գնացեք...

Վերջացավ յերկրորդ կրակմարիչի հե-
ղուկն ել: Արդեն հասան բանակացինները՝
նոր բերած կրակմարիչներով:

Ի՞նչ անել հիմա դատարկածեռն: Բայց
տուանց վայրիցան իրբոցնելու, իրերը դուրս
հանողների հետ Վարդյանը վաղեց դուրս քա-
շելու այնտեղի իրերը, վորանդ բոց հայտա-
րաբիեց: Մինչդեռ իրենքը դուրս հանող մյուս
5 բանակացինները սապողների կապոցներն
եյին դուրս հանում, Վարդյանը աչքն ընկալի
լիքը արկղներին: Մանք մի արկղ վորբին դնե-
լով նու սկսեց արագ-արագ դուրս հանել:

— Վո՞տ, մալալեց Վարդյան, այդպե՞ս,—
ելի խրախուսեց սկետը: Այնուհետև ծանը ար-
կղները մեկ-մեկ մորենքին դնելով, բանակա-
ցինները դուրս եյին տանում ու անմիջապես
յետ գալիս: Պահեստն լիքն եր հրշեց բանակա-
ցիններով: Յեվ կանոնավոր կաղմակերպված ու
արագ շարժման մեջ լսվում եր սկստի բարձր
ձայնը.

— Բոցն ա՛յ, եստեղ ա՛, եստեղ—ու ձեռ-

քի յերկար փայտով ցույց եր տալիս տեղերը, —
առ հենց բոցն ա:

— Եղ կողմը հանգըրած եմ համարում,
թողնել եղ կողմը:

— Արա՛դ շարժվել, արա՛դ:
— Վո՞տ, մաշտղեց.

— Չե, եղ չնղաղ, ընկեր բանտկային, չե-
ղամ:

— Արա՛դ կըել:

Վարդյանը ծանը արկղները կրում եր
այնքան դյուրին կերպով, կարծես թե դրանք
թեթև բաներ եյին:

Վերջացան արկղները: Այս անգամ ել
նույն աբաղաջարժությամբ Վարդյանը սկսեց
իշել աղյալների հակերը: Վերջին հակը դուրս
տանելուց վերդառնալով Վարդյանը լսեց պե-
տի շատ խիստ հրամանը:

— Պաժարը տարածվում ա, աղնետուշի-
տելները չեն ողնում, նասոսներով ջուր բերել,
մա՞րը:

Վարդյանը դուրս վազեց: Նրանից առաջ
վազում եր մի հողի — Ասատուրն եր: Հաստ
ջրահանը միացնելով բակի ծորակին, Վարդ-
յանն, Ասատուրն ու Քարամյանը ջրհանը
քարչ տվին դեպի պահեստը: Քաշե-քաշ պահես-
տին մոտեցնելուց հետո, Վարդյանը ջրհանի
ծայրը բռնելով ուղում եր պահեստ մտնել,
յերբ ջուրը դուրս թռավ ջրահանից:

Ասատուր, վազիր կռանտը փակիր, թե չե
պահեստը կլցնենք ջրով, — բղավեց Վարդյա-
նը.

— Լավ չի փակվել հա՞ , վայ քո դործի թե-
քումին ինչ ասեմ :

Զուրը կտրվեց : Վարդյանն ամբողջ ուժով
ծանր ջրհանը քաշելով մտավ պահեստ :

— Ո՞ւր և բոցը, ընկեր պետ .

— Այ, տաստաղի ևն անկյունումը .

— Լավ — ու Վարդյանը ջրհանն ուղղեց
այն կողմը — Հրայր, տուր գա, ծանր և :

Զուրն ուժեղ շատրվանի պես դուրս դցեց
ջրհանից :

— Յօտ բեզօբառու, — բարկացավ պետը, —
ահանո՞ւմ եք ինչ արիք, պահեստը ջրով պիտի
լցնեք :

Աստուքն դուրս նետվեց : Զնայուծ մի
քանի բսալե հետո ջուրը կտրվեց, բայց ու-
հեստի հատակի ցածր անկյունն արդեն ջրով
լցվել եր :

— Ես կողմ, ես կողմ յեկան բոցերը, —
սխայր մոռանալով, պետը շարունակում եր
հրամաններ արաձակել : Վարդյանն անմիջա-
պես ջրհանն այն կողմն եր ուղղում, ուր հրա-
մայում եր պետը : Իրեր կըողները նույնական
վազում եյին դեսի այդ կողմը :

— Պաժարը հանդցրած եմ հայտարարում, —
հանկարծ հրամայեց պետը և նրա շրթունքնե-
րը, վոր հրամանների ժամանակ ամուր իրար
եյին սեղմակում, այս անգամ իրաբից բաժանվե-
ցին : Նա ժամանակ նայեց հոգնած բանակա-
յիններին, վոր նույնական ժամացին տեսին :

— Հիմա դուրս, բակում շարքե :

Դուքս յեկան բակը: Նոր յեկած թողմ
ձյունո տրորելով վաղեցին շարքի: Յերեկո-
յան ձյունելուց հետո յերկինքը պարզել եր:

Զմեռվա առաջին որն եր դա:

Ասատուքն ջրհանն արձակեց ծորակից ու
ջուրն ոկտեց անուշ դլդլոցով թափվել գոան
մեջ:

— Զգա՞ստ:

— Զա՞խ, դա՞րձ:

Զախ գառնալով շարքը նայեց ուղիղ դե-
պի արենելք: Լուսաստղը փայլվելում եր արե-
լիքում: Մյուս ասաղերը դժունանում եյին:
Զուքը զրնդուն ձայնով դեռ թափվում եր գոան
մեջ:

— Քայլո՞վ, մա՞րշ:

— Դեպի ա՞ջ, մա՞րշ:

— Տեղո՞ւմ:

— Կա՞նդ, ա՞ռ:

— Ա՞ջ, դա՞րձ:

— Ազա՞տ:

— Ընկերներ, յերկու խոսք և ցրվենք,
քրտնած եք: Եսորվա վորձը ցույց տվեց, վոր
դեռ չեք վարժվել: Եստեղ վոր եսքան սխալներ
արիք, վորձնական պաժարի տրեվողին, բա
վոր իսկական պաժար լինի, ի՞նչ կանեք: Մի
քանի ընկերներ փոխանակ առաջ փամփուշտի
յաշչիները դուքս հանելու, սապողներն եյին
հանում: Մենակ Վարդյանը ճիշտ արեց: Որի-
նակ՝ կրանտը բաց եյիք թողել ու քիչ եր մնացել
վոր սղահետոը ջրով լցնեյիք: Ով գիտի իսկա-

կան պաժարի վախտն ել կռանտը միակ պահէք: Բայց ընդհանրապես պլիտի ասեմ, մոր հաջող եր: Մի յերկու ընկեր շփոթվեցին, համարենց գտան: Որինակ՝ ընկեր Վարդյանը չնայած ուշ հաղնվեց, բայց լավ աշխատեց և պնտք ա տեղ, գերազանց զնաւհատականի յա արժանի:

— Ցըլել, բայց հիմա չլիացվեք, քրտնած եք:

Շարքը ցըլեց:

Վարդյանը թաշկինակը հանեց ճակատի ու դեմքի սառած քրտինքը սրբեցու: Զնայած բոլորից շատ նա յեր չարչարվել, բայց իրեն ընալ հոգնած չեր դդում: Նա այնքան ուրախ եր, վոր կարծես թե հենց նոր եր ավարտել նոր մի կար:

Նախաճաշից հետո շարքը կրկին պատրաստ եր:

— Զդա՛ստ:

Ընկերներ յերկու ժամով եսոր դնում եք դաշտ պարապմունքի, պատրաստվել տա՛ս բոլեյում:

— Զդա՛ստ,—

Շարքն արդեն պատրաստ եր:

— Քայլո՛վ, մա՛րշ.

Քաղաքի կենտրոնական փողոցով, այն վողոցով, վորի վրա ուշ յերեկոներին կամանողայի զորանոցի լուսամուտից նայում եր Վարդյանը, շարքն առաջ եր շարժվում:

— Մե՛կ, յերկո՛ւ, յերե՛ք:

— ԱԵՇ, յերկու, յերեք:

Դլուխները բարձր, կեցվածքները հսկարտ,
բանակացները վոտքերն ամուռ խփում եյին
նոր յեկած թարմ ձյունի մեջ: Վոտքերն ամուռ
խփում եյին նբանք թարմ ձյունի մեջ և՝

«ՄԵՇ, յերկու, յերեք»—ին վորովես ար-
ճապանք, նույն ոկտմով լովում եր արորվող
թարմ ձյան ձայնը:

— Խը՛շ-խը՛շ, խը՛շ,

— Խը՛շ խը՛շ խը՛շ:

Քայլում եր շարքը հսկարտ կեցվածքով և
շարքի գորշ շինելավորների մեջ հեռվից վա-
հան Վարդյանը չեր ջոկվում մյուսներից:
Վարդյանն և այն մեկը, թե Աստառը, Վար-
դյանն և, թե Հրայր Քարամյանը, տարբերել
չեր կարելի:



Զեր քնում Վահան Վարդյանն այդ որն
էլ, բայց նրա սրուում այդ որը տարբեր զգա-
ցումներ եյին յեռում: Նա զգում եր, վոր ինքն
այլևս այն չե, ինչ վոր եր յերեկ: Իսկ նկա-
րիչ Վահան Վարդյանի վրա նայում եր ներո-
ղամտարար:

— Գրեմ վերջին որագիրը նկարիչ Վահան
Վարդյանի տետրակում— ասաց նա և տետրա-
կը հանեց դլիս տակից:

— Այսպես, այսպես... շշնջած նա մը-
տապրադ, և արդեն մատիտը շարժվում եր
տետրակի բաց կապույտ տողերի վրա:

«Յես Վերջին անգամ և՛մ դրում նկարիչ
վահան Վարդյանի որագրի տետրտկում։ Մին-
չե հիմա դրածներո իմ նոր կյանքի առաջին ո-
րերի մտախն եցին...»

Առաջին որն՝ ը... շատ քաղցր եցին...»

Վաղը յերբ բացվի տուփութը, առավոտիա
նման պայծառ ու սուր մտքով յես հրաձդու-
թյան ու քաղաքարամունքի կղզամ ու վաղլիա-
նից հետո կղքեմ նոր որերիս մտախն...»

Առաջին որերին ինձ ներկում եր, նոր
որերին այդպես չի լինի...»

Չորսնոցում միայն չնչառությաններն են
լսվում։ Յեկ Հովոն քնի մեջ ելի կըկնում եւ փա-
կաղակի մտաերը։

Յես պետք ե նկարեմ զարանոցի ոկչե-
րը...»։

1933 թ. Հունվար-ապրիլ

Եկրևան-Լարմիր բոնակ

Խ Ա Զ Ե

1

Որայից հեռու, կանաչավուն մարդագետնի կողքին, բարձր ու լայն ժայռի վրա կանգնած, չորս յեղդուհիներ իլիկ եյին մանում։ Սպիտակ թելերը յերկար վոլորելով՝ թողնում եյին իլիկը, մինչև հասնի զետնին և անհամարձակ, հաղիսլ լսելի ճայնով յերդում եյին «Խորթե բաղավ» յերդը ու կասկածով վասիսում իրար հետ, ապա նորից յերդում մեղմ ճայնով։

Բոլորի ճակատներին ել կապված կային տարբեր մեծության ու գույնի մետաղե պլիկներ՝ դրամներ, թևերին հաստ ու ծանր ապարանջաններ, վորոնցից նույնակես մետաղե մանըր զնդլիկներ եյին կախված։ Պարանոցներին կապել եյին մի քանի փաթով հուլունքներ, նույնակես մետաղե զնդլիկների հետ։ Այնակես վոր յերբ շարժվում եյին նրանք, լսվում եր այնպիսի զբնդտոց, ինչպես կառքին լծած դանդուլակավոր ճիերի վաղքի ժամանակ։

Յերկուսի քթերի կողքից անց եյին կացված արծաթե զարաֆիլներ², մեկն ել վոսկե,

¹ «Գեղեցիկ յերկուսարդ» քրդական յերդ եւ

² Կոճակի նման մետաղե մի նցան, գ. ը մանուկ հասակից քիթը ծակելով նրա մեջ են տնցկացնում։

վորի հետևանքով մաքուր չեյին խոսում նրանք։
Չորրորդի քթին ղարաֆիլ չկար, բայց ղարա-
ֆիլի նեղլիկ անցքը յերեվում եր նրա քթի
վրա։

Մի քանի որ եր, վոր նրանք հաճախ եյին
ովանքու ու շարժունակութեայուի վրա իլիկ մա-
նելու։ Յուրաքանչյուր շարժումն ժամանակ,
յերբ զնդուսոցի ձայնն եր լսվում, նրանք
իննոռութախ քրքիջներով հրհրում եյին իրար,
յերդում եյին Արաղածի զեփյուռի հետ, յեր-
դում մեղմ ձայնով։ Ապրում եյին նրանք իրենց
կյանքի գարնան որերը՝ հույզերի ու կրքի
տարերքը։ Մեկը նրանցից՝ Զայնեն, վորի վոս-
կե զարաֆիլը տրեի տուի փոյլում եր, —որայի
աղայի աղջիկն եր։ Նա մյուսներից ավելի շատ
եր խոսում ու հուզմունքով թափ տալիս կրծքի
զգեստը։

«Կյավրե խուլի բա, կյավրե խուլի բա»¹—
կրկնում եյին նրանք ամեն քչփչոցից հետո ու
խորհրդավոր կերպով լուսմ, ավելի արագ
ոտառեցնելով իլիկները։

Արեւ բավական բարձրացել եր։ Լսվում
եր միայն լեռուն հողմի շաջյունը։ Մանում
եյին նրանք ու յերեմն աչքի տակով նայում
վերեի ժայռի կողմը, վորի տակ նստած եյին
յերկու աղջիկ՝ առանց զնդլիկների։ Մի գիրք
ծնկներին դրած՝ այդ աղջիկներն համաշտակ-
ված կարդում եյին և չեյին հետաքրքրվում
շրջապատով։ Գալիս եյին նրանք ամեն որ,

¹ Անեծք, վոր դորժածական և կանանց անջ.

նստում եյին վերելի ժայռի հովի տակ ու
ոկտում խոսել: Խոսում եյին ու կարդում: Ուրախ
եյին նրանք, ինչպես այդ որվա անամոլ, ա-
րեվոտ որը: Նրանց ժամաները լի եյին բեր-
կրությամբ: Համարձակ եյին նրանք և ծի-
ծաղները նրանց ավելի հնչեղ եյին քան ա-
ռաջինների:

Այսպես, չորս աղջիկ կարանալորներ, ան-
համարձակ ձայնով յերգում եյին, բամբա-
ռում ու վոլորում իլիկները, զնզոտացնելով
իրենց մետաղե զարդարանքները, իսկ մյուս
յերկուոն առանձին նստած, խոսում եյին ու
կարդում, խոսում եյին ու կարդում կյանքի և
նրա հուզող հարցերի մասին...

3

Կանաչ մարդաշնետնի սեղավետ թմբերի
վրա հաճությամբ, բավականությամբ թավալ-
վելուց հետո, դիրքը թեվի տակ դրած, Արամը
դանդաղ քայլերով սկսեց դնալ դեպի այն ժայ-
ռը, վորի տակ նստել եյին իր քույրը՝ Հաս-
միկն ու Խաջեն: Յերբ նրանք իրար տեսան,
Հասմիկը ծիծաղնելով ասաց:

— Յերեւակայիր, Արամ, ծիծաղում են
Խաջեյի վրա. բամբասում են, վոր գալիս և
մեզ մոտ կարդալու...

— Իսկ Խաջեն խոմ չպետք են նրանց ասած-
ներին ուշադրություն դարձնի, — պատասխա-
նեց Արամը ժամտալով ու նստեց քրոջ կողքին:

իսկ Խաջեն, վոր Հայերեն լավ հասկանում եր, ամոթիած դեմքը խոնարհեց դրքի վրա:

— Դեռ ինչքա՞ն, ինչքա՞ն աշխատանք կա.
Արամ... ինչքա՞ն, դժվարություններ են կապ-
ված մեր հաղթանակների հետ... վշտու և
մեր ճանապարհը, բայց քայլում ենք մենք
յերկաթե կոշիկներով... Այսուեղ, յեղիների
մոտ, դեռ կյանքն ինչքա՞ն հետ ե, ինչքան...
Չքավոր յեղիքու հովիվները հնագանդ դեռ
կոտնում են աղաների հարվածների տակ, իսկ
կանայք, կանայք դեռ մորքա՞ն անպատճա-
րեր միճակի մեջ են, վոտնահարվում են, ճընշ-
վում վորպես սարուկներ...

Հուզմունքից Հասմիկի կուրծքը բարձրա-
նում ու իջնում եր: Քրոջ հուզմունքն ու
վողեվորությունը վարակում եյին նաև իրեն՝
Արամին: Նա համակրական ժպիտով լուս եր
Հասմիկին: Իսկ Խաջեն, խուսափելով Հաս-
միկի հայացքից, շառապունած դեմքը դրքից
վեր չեր բարձրացնում:



Իսկ բարձր ու լայն ժայռի վրա դեռ մա-
նում եյին այն չորս յեղուռհիները, դեռ
բամբասում եյին...

— Աղջի, հլա տեսեք, հլա տեսեք ինչպես
ե հայի տղան են անամոթի մոտը նստել,
վայ, — հրում ե Զայնեն ընկերուհիներին ու
չորսով միասին նայում են դեպի վերելի


ժայռը: Բայց Աքամը նստել եր Խաջեյից հեռու
Հասմիկի մոտ:

— Թո՛ւ, նալլաթ քեզ, բեարուռ, կյավ-
րե խուլի բա, — մի քանի անգամ կրկնեցին
մանողներն ու շած իջնելով ժայռից, զնացին
բամբառելու Խաջեյին:

— Կորեք, շուտ յեկեք ձեր տունը, ձեր
մազերը կտրեմ, — որայից դուքս դալով բղա-
վում ե Զայնեյի մայրը՝ Խանումը:

— Կյավրե խուլի բա, դո՞ւք ել եք ու-
դում Խաջեյի նման «առուներ թոնել», կո-
րեք ձեր տունը, մեկ ել ձեզ այնտեղ չտես-
նեմ — բարեացած ավելացնում ե Խանումը:

Զայնեն լուսմ ե և ընկերուհիների հետ
մտնում որպես:



— Թող դուքս անեն, դուքս անեն որպա-
յից այն հայի աղջկան, անամոթը Խաջեյին
իր որին հասցընց, մեր աղջկեներին ել ե ու-
դում իր նման փշացնել, — դիմում ե աղայի
կնոջը հարեւիանուհին, վորն իր աղջկան տնից
դուքս դալ իսկ չի թողնում, նրան նամու-
տով դաստիարակելու համար:

— Թու, թու, թու, — կրկնում են բոլորը:

Մաթոշղան, ոռւսի մաթոշղան, բոլ
չի վոր հաղար տեղ ման ե դալիս, հիմա յել
հայի տղայի հետ զնարի¹ տակն ե նստում:

¹ Ժայռի

Թքած քո նամուսին, նալլաթ քո ծծած կտ-
թին, — կրկնում եյին յեղդի կանայք ու ամեն
խոսքի վրա ծեծում իրենց կուրծքը:

Բոլորը հոգված դեռ բամբառում եյին
Խաջեյին, յերբ նրա մոյրը յեկավ: Նա հի-
սունն անցկացրած, նվազած պառավ եր,
հազած ճալտուն, կտրված մի դեյրա, մեջ-
քին կարտված ցնցոտիների մի հին, կարմիր
շալ: Դեյրան չեր ծածկում նրա վարտիկի
լայն փողերը, վոր իջել եյին նրա բորիկ
վոտքերի վրա: Իսկ ճակատին նա կտխել եր
հին ու ժանդոտ մետաղների մի քանի պլիկ:

— Բարովի յեկար, բալաք շան կնիկ, —
Հեղնանքով դիմեց նրան աղայի: կինը:

— Բարով յեկար, խանը, — կրկնեց նա,
յերբ Խաջեյի մորից պատասխան չստացավ:

Ինչո՞ւ յես ողականձվել, Սայրե խա-
նում, — վերստին կրկնեց Խախումն ամելի
կծու հեղնանքով, — վազը կվերցնես ջուլ ու
մուրդ ու դուրս կդաս մեր որայից: Չմնաք,
Հարկավոր չեք, աննամուսներ: Գնացեք, գնա-
ցեք Թիֆլիս, ոռւսի մաթուշղեք սովորել եք,
սովորել, թո՛ւ, թո՛ւ... — իբրիրաց Խանումը,
գազաղած եղ վազքի պես:

— Չտեսնի, չտեսնի եղմալ բան, թու,
թու քո նամուսին, թու, — վրա բերեց մեկ
ուրիշը:

— Անամոթ շուն, թողնում ես աղջիկը
բոլորի հետ լկուավում ա, բա չե՞ս ամա-
չում, — ավելացրեց յերբորդը:

Սայրեն լուռ եր:

— Վերքոտ շուն, կեղտոտտ անտեղ, կորիր, կօրիր այստեղից, — բարկացավ ելի աղաւի կինը նրա վրա և ուժգնությամբ հրեց: Խեղճ պառավվը դետին դլորվեց և ապա վեր կենաւ լով տեղից, արտասուքն աչքին վերադարձավ մալասներից կարած իրենց վրանը:

Մանելով վրանը, Սայրեն յերկար լաց յեղավ: Արտասուքները թրջեցին նրա վոսկը, չոր այտերը...



Յերբ Խաջեն տուն յեկավ, մայրը տիխուք մոտեցավ նրան ու դլուխը շոյելով հարցրեց:

— Վորտե՞ղ եյիր, Խաջե...

— Հասմիկի մոտ եյի, դայե ջան:

— Ե՞լ ով կար պյատեղ, լառ:

— Հասմիկի յեղբայրը՝ Արշակ, Էնջու, դայե:

Մայրը թշվառ ու խեղճ կերպարանք ընդունելով, աղաչական տսաց.

— Դուրբան քեզ, Խաջե ջան, չե՞ վոր յետ ել եմ խեղճ, ինձ հայհոյում են, թքում են, մրում, դուրս են հանելու մեզ որայից: Ինչ դործ ունես, մի զնա եղ հայի աղջկա մոտ, ելի, ինչպես մյուս աղջիկները, այնպես ել ուր յեղիր, չե՞ վոր ամոթ ե, լառ, չե՞ վոր ամոթ ե...

Խաջեն հուզվեց:

Մոր անկեղծ հոգատարությունը շարժեց
նրա սիրտը: Գիտեր Խաջեն, վոր մայրը չա-
փազանց սիրում եր իրեն, այն որվանից մա-
նավանդ, յերբ հայրը մեռել եր: Հայրը մեռ-
նելուց առաջ պատվիրել եր կնոջը—«Խաջելին
ուսումի կտաս, Սայրե, մեր քրոնիրի աղջիկ-
ների նման չմնա, իսկ ուրիշներն ինչ ուզում
են, թող ասեն»: Բայց մայրը չեր կարողացել
Խաջելին դպրոց ուղարկել, կարիքից հարկա-
դրված նա Արագած եր յեկել, վոր խանում-
ների համար իլիկ մանի՝ իրեն ու Խաջելին
պահելու համար:

Մի պահ վերասլբելով հինը՝ Հիշելով
հորն ու իրենց թշվառ կյանքը, և մոր թշվառ
դրությունը, Խաջեն հառաչեց:

— Զե՞ վոր յես վատ բան չեմ անում,
ուայե, յես կարդում եմ, իրկ ուս վատ չե:
Հիշո՞ւմ ես հայրո ինչ առաց քեզ... ինչո՞ւ
յես ուրիշներին լսում, —ու մոտենալով մա-
թաթվեց մորը: Մայրը խորը հառաչանքով
զրկեց նրա գլուխը, համբուրեց վարսերը և
կամաց հեկեկաց:

— Մի լա, դայե ջան, թող ինչ ուզում
են խոսեն: Խելոք բան չեն խոսում նրանք:
Նրանք մեր թշնամիներն են, մեղ միշտ ել
ծեծել են, ճնշել են: Մի լա, դայե, յերկու ա-
միս մնաց, սարից գյուղ կիշնենք և լավ կլի-
նի: Ասում ես «Հայի հետ ի՞նչ գործ ունես».
Դայե, չե՞ վոր բոլոր քյասիր հայերը, թուր-
քերը, ռուսները մեր՝ քյասիր յեղդիների,

բրդերի բարեկամներն են, իսկ մեր թշնամիները հարուստներն են, մեր աղաները: Իսկ դու, դայե, դեռ կարծում ես, թե աղաներն ու խանումները բարի յեն, յերբ լցնում են ամանդ թանով: Մի լա, դայե, աղիղ դայե, մի լա, լավ կլինի, լավ դայե, դւե մն դայե...

Լոեցին մայր ու աղջիկ, զորովանքով իրար փարստծ: Խաջեն կախել եր իր գլուխր: Մառրումների— հուղող, ալեկոծ մտքերի մեջ եր: Տակն ու վրա յեղավ նրա սիրտը, յերբ մոր գեմքին նայեց, յերբ մոր արտասուքները տեսավ, հարազատ մոր առատորեն հոսող արտասուքները, չոր այտերի վրայով, քթի դարաֆիլի անցքի վրայով դլդլող արտասուքի կաթիլները...

Պոռթկաց նրա լացն ել, նա յել հեկեկաց: Ու տիրեց քար լոռություն, լոռություն, վոր այդպիսի պահին քարից ել ծանր ե, մղձավանջային, անտաճնելի: Ապա հիշեց նա հորը, թիֆչիսում անցկացրած իրենց կյանքը, դրևկանքների շղթան:

Նրա հիշողության մեջ դեռ թարմ եր այն որը, յերբ հայրը ծանր բեռի տակ, թիֆչիսի շուկայից աղայի տունը իրեր եր տանում: Խաջեն հիշում եր: Հայրը դանդաղ ու տնքալով եր քայլում ծանր բեռի տակ, հանկարծ հեծանիվը նրան գետին գլորեց, մեջքի բեռի հետ: Հոր քթից հրսող արյունը ներկեց դետինը...

¹ Թիրո իմ առյօնիկ:

Խաջեն ճշաց, վորքան ուժ ունիր:

Աղջիկը հիշեց և այն, վոր հայրն ուղում
եր իրեն դպրոց ուղարկել, իսկ նրա բեռնակիր
ընկերները ծիծաղում եյին նրա վրա, նախա-
տում եյին: Բայց հայրը համառ եր, վճռա-
կան: Նա ասաց, վոր իր աղջկան՝ դպրոց կու-
ղարկի, ասաց և կատարեց հետեւյալ որը,
տետրակներ գնեց ու դպրոց ուղարկեց Խաջե-
յին: Բայց միայն մեկ ամիս, մեկ ամիս մի-
այն նա ամեն որ հաճույքով գրկեց ու համ-
բուրեց դպրոցից վերադարձող աղջկան: Մեկ
ամիս հետո արդեն նա չկար:

Հիշեց Խաջեն նաև իր՝ վորբանոցում յե-
ղած ժամանակը, յերբ բոլորը ծիծաղում եյին
իր վրա, քաշում փեշերից ու միշտ կանչում
«Քրդի կյանե, քրդի կյանե»... Խաջեն շատ
անդամ եր լսել դպրոցում իրենց՝ քրդերի մա-
սին: Դպրոցում ասում եյին, վոր քրդերը դեռ
կիսավայրենի յեն, նրանց գեռ պետք և կար-
դալ սովորեցնել: Իսկ հիմա, աղայի կինը,
կիսավայրենի այդ կինը ծիծաղում և իր վրա,
նրա համար, վոր ինքը կարդալ և սովորում:
«Չե, յես վոչվոքի, վոչվոքի չեմ լսելու,
պետք և կարդամ, սովորեմ: Իսկ աշնանը՝ սա-
րից իջնելուց հետո, պետք և կոմումոլի մեջ
դրվեմ, կոմումոլ դառնամ: Խելոք բաներ են
ասում Հասմիկն ու Արամը, յես նրանց կլսեմ,
նրանց կհավատամ յես, մոչ թե Զայնեյին ու
նրա մորը, — վճռեց նա մտքում ու դառնալով
մորը, վճռականությամբ ասաց.

— Զե, դայե, դու նբանց մի լսիր, մեր
դուշմաններին մի լսիր, յերկու ամիս հետո
դյուղ կիջնենք և լավ կլինի...

3

Սրինդը սուլելով Զմշիդը վոչխարը տուն
եր բերում: Վոչխարն աղահությամբ արա-
ծում եր ու դանդաղ շարժվում դեպի տուն:
Սրինդի ձայնը մելամաճուտ ու հուզող եր և
վոչխարներն այդ ձայնից գերված՝ արածում
եյին ավելի աղահ ու ավավում, քլքլում այն-
պես, վոր կարծես պառավ կանանց բամբա-
սանքի փափառցներ լինեյին:

Տաս որ եր, վոր Խաջեյին չեր տեսել նա:
Տաս տարու չափ յերկար ժամանակ: Յեվ դրա
համար եր, վոր ավելի ավյունով եր վիչում
սրինդն ու յեռանդով եր սուլում: Մի տարի
յիշ հովիվ կիմներ, վեց դառ կստանար և այ-
նուհետև կտարենք այնպես, ինչպես շատերը՝
առանց ուրիշի ձեռքը նայելու:

Վոչխարները փափառցով արածում եյին-
ու ամեն մի ձայնի, կամ խշոցի ժամանակ
իրար անցնում, հալաքվում իրար շուրջ:

Վոչխարի յետև, հովվական կուլարն ու-
սերին՝ Զմշիդը կոթնեց մի ժայռի: Նրա զրյ-
խում միշտ այն միտքն եր պատվում, վոր յե-
թե Խաջեյի հետ չամուսնանար, ուշ, շատ ուշ
կնշանվեր՝ չորս հինգ տարի հովիվ կիմներ,
վոր ձեռք բերեր քսան, յերեսուն վոչխար՝
դալիմ տալու:

Ապա սույելով, վոչխաբը քշեց դեպի աղը. աղի դուռը շարեց ու կուլարն ուսերին՝ մտավ աղայի վրանը:

— Բարի իրիկուն,—ասաց և կամենում եր նստել, բայց պատասխան չստանալով, նորից կրկնեց կարծելով, թե չլսեցին առաջին անդամ:

— Բարի իրիկուն,—ելի վոչ վոք չպատասխանեց նրան: Աղայի դեմքը թթվել եր, Զմշիդըն զգաց, վոր մի անախորժ բան և ոլատահել: Նա ուզում եր նստել, յերբ նադո աղան մեզմ ձայնով, կարծես սիրավիր, բայց հեղնանքով ու զսպած բարկությամբ ասաց.

— Գլխիս վրա՝ յեկար, աղա... .

Զմշիդը կանդնած մնաց վրանի ոյունի մոտ, սպասելով, թե ինչ կլինի:

— Քեզ ասել եմ, վոր կնոջու սանձը քաշես, իսկ դու Ե՞շ ես, քեզ պետք ե բգե՞ն, վոր նամուս ունենաս: Կնիկդ իմ անունն ել կուրեց, իմ որայինն ել: Թո՛ւ, թո՛ւ, թքած հորդյերեսին. բա դու մարդ չե՞ս, դու նամուս չունե՞ս,— ու լեզվով «ծկ, ծկ, ծկ» անելով, դլուխը տարուրենց ու լոեց:

— Տոյդ դետինը մտնի, բոյդ, կնիկն իբ աչքի առաջ հազարի հետ նստառմ կանգնում ա, իսկ ինքը սուս ա կենում, մեռնի քեզ նման մարդը, մեռնի,— սկսեց Խանումը, բայց աղան նրան ընդհատելով այս անգամ այլելի բամբ ձայնով զոռաց:

— Շուն շան վորդի, ելի ասում եմ քեզ,

ելի յեմ բղում, կամ կնոջդ կարգի բեր, կամ
հեռացեք, հեռացեք իմ որսյից. շներն ու լա-
կոտները թող իմ անունը չկեղտուանն:

Զմշիդը չափազանց հուզվել եր: Շատ
ծանր եր նրա համար աղայի ու նրա կնոջ
թուքն ու մուրը: Ինքնասիրությունից խայթ-
ված նու այդ պահում ուզում եր Խաջեցին
կտոր-կտոր տնել, ցույց տալ, վոր «իր նամու-
սի համար» ինքը կին ծեծել դիտի:

Զմշիդը դուրս յեկավ աղայի վրանից,
դանդաղ քայլերով, մտածելու ու քարի նման
լուռ: Արագածի յերեկոյան դուրեկան քամին
վիշում եր նրա քյաքուլին, պոկում կուլարը
նրա թևերից: Բայց նու վոչինչ չեր զգում:
Ինքն ել չիմացավ, թե ինչպես Խաջեցնց վրա-
նը մտավ: Լուռ կանդնեց վրանի ոյան մոտ,
մինչ Խաջեցի մայրը նրան նստելու հրավիրեց:

— Զմշիդ, լառ, նստիր, ինչո՞ւ յե քեֆդ
խարար յեղել, — դիմեց նրան մայրը, իսկ Զմշ-
շիդն առանց պատասխանելու նրան, առանց
կուլարն ուսերից վեր առնելու, նստեց անկող-
նու վրա, դլուխն ափերի մեջ առավ ու հենվեց
ոյանը:

Խաջեն հասկանում եր բանի եյությունը:
Նա վրանի մյուս կողմում նստած, արհամար-
հանքով ու կարեկից զգացմունքով եր նայում
Զմշիդին: Այդ ըուեցին Զմշիդն այնքան, այն-
քան մանուկ ու անզոր յերեխա յեր թվում նը-
րան: Յերկար ժամանակ լուռ ելին յերեքն ել-
ուոչ վոք երանցից չեր ուզում խոսել: Յուրա-

քանչյուրն ամփոփիվել եր ինքն իր մեջ և ու-
ղում եր, վոր խոսքի ընթացքն ինքն իրեն ըսկո-
վի: Յեվ Խաջեն ու Զմշխում եյին, վոր
այդ ընթացքն իրենց կամքի հակառակ չզնա:
Առաջինի մեջ խոսում եր վճռտկանությունը,
նրա գատողությունն եր վճռում այդպէս վա-
վել, իսկ յերկըորդը կտմայականության ու
կամակորության մոլեսանդ մի ասպետ եր:
Նրանք, վոր այնքան սիրում եյին իրար, այդ-
պահին տարբեր բևինոներից իրար եյին հակա-
դրսվում: Յերկու կողմերն ել անդիջող եյին:
Դեռ յերկար կլոեցին Խաջեն ու Զմշիդը, յեթե
վերջապես մայրը չխոսեր:

— Ի՞նչ ե յեղել քեզ, Զմշիդ, ինչու չես
խոսում, զուրբան քեզ, ասա տեսնեմ, լսու,
ելի ի՞նչ ե պատահել քեզ:

Զմշիդը խորո շունչ քաշեց, ուղեց խոսել,
ելի լոեց: Մի անդամ ել խորը շունչ քաշեց,
նա, գլուխը ծանրությամբ կուացրեց ու մի
պահ լոելուց հետո ասաց.

— Ի՞նչ ասեմ, դայե, ինչ ասեմ: Աղջիկո-
թե ինձ, թե քեզ ու թե հոր պատիվը գետնում
ե տվել: Յես ել գլխիս մասկախ դնելու իրա-
վունք չունեմ, բոլորը մեզ վրա յեն ծիծա-
գում...

Այս ասելուց հետո գլուխը կախեց Զմշի-
դը ու ելի հառաջեց խորը, սրտի խորքից:

— Յեսի՛մ...—հաղիս դուրս պրծավ մոր
բերանից ու նա յել լոեց:

— Ի՞նչ եմ արել, յես, Զմշիդ աղա, վոր

իրավունք չունես փափախս դնելու դլխիդ, —
իիսահեղնական տռնով ասաց Խաջեն։ Այդ ժա-
մունակ Զմշիդը զղաձղորեն փափախս վերցրեց
դլխից և այն ուժեղ գետնին խփեց։

— Փափախս գետնին տվեցիր, ուրիշի յե-
րես նայել չեմ կարող, — ասաց նա հուզված,
լոցակամած ձայնով, — ևս ի՞նչ փորձանք եր
դլխիո յեկավ. եսպես ել կըա՞կ...

— Փորձանք ե դլխիդ յեկե՞լ... Յեթե կը-
բակ ես ընկեր, կարող ես ազատվել, ել ինչո՞ւ
յես նաղոյի խոսքով ու նրա հրամանով շարժ-
վում, — վրա տվեց Խաջեն վրդովված, վիրա-
վոր ինքնասիրությունից։

— Արածս ի՞նչ ե, — շարունակեց նա, —
ի՞նչ եմ արել... Քո աղայի աղջի՞ն ե նամու-
սով, Զայնե՞ն, վորի սիրոն այրվում ե ամեն
չահելի սե աչքերը տեսնելիս, վորը քարերի
վրա կանգնած ամբողջ որը գաղտնի «Խորթե-
րադավ» ե յերդում, վորը դիշերը ծպտյալ կեր-
պով անկողնուց դուրս դալով, մարդագետինե-
րում հովիվների հետն ե թափալվում, հերթով
լինում բոլորինը։ Նա՞ յե նամուսով, վորի ա-
պորինի մանկան գերեզմանը ձորում շները
փորեցին։ Իսկ հիմա վոր յերեկները տնից
դուրս չի գալիս, դրա՞ համար ե նամուսով։
Նամուսո՞վ ե նա, վոր տիրոջը տեսնող շան
պես գալարվում ե, յերկտակիվում ու քծնում,
յերբ գաղտուկ մի անկյունում յերիտառդի
յե հանգիպում։ Իսկ յես աննամուս եմ...

Թող այդպես լինի, Զմշիդ աղա. քո գործն և,
կարսղ ևս այդպես համոզվել...

Զմշիդը վոչինչ չասաց: Լուռ եյին և' մայ-
ըը, և' Զմշիդը, և' Խաջեն... Մի քանի ըոսկե
հետո, առանց վորեն բան ասելու, Զմշիդը
կուրսը թելերին առաջ, ու դուքս յեկայի
վրանից: Սայրեն նրա յետելից յերկար նայե-
լուց հետո, մեկ ել հառաչեց ու նայեց աղջ-
կան...

4

Հետելյալ առավոտ Խաջեն յեղելությունը
Հասմիկին պատմեց: Նա հուզմունքից կրծո-
տում եր իր շրթունքները: Մի քանի ըոսկե
լուռ մնալուց հետո Հասմիկը սթափվեց ու
պատասխանեց Խաջեյին.

— Դու չպետք ե աղղվես այդ բամբա-
սանքներից, Խաջե, դու պետք ե անվհատ
լինես, համտո: Առաջին քուրդ պայքարող
կինը դարձիր ու հավատա, Խաջե, վոր կհաղ-
թես: Մի՛ մտածիր:

— Բայց չե՞ վոր հիմա մեզ մնշում են,
ի՞նչ անեմ,— հարցընց Խաջեն տիսուր:

Նրա սիրտն այնպես եր նեղացել, վոր
քիչ եր մնում լաց լիներ, յերբ մտածում եր,
թե ինչ կլինի մոը վիճակը, յեթե ինքը դյուղ
գնա:

— «Շարունակիր ճանապարհը, Խաջե՛, և
թող մարդիկ խոսեն, ինչ կուզեն», դու այս
խոսքերը պետք ե լսես, Խաջե՛: Կրկնում եմ,

դու պետք և զինես առաջին քուրդ հերոս կի-
նը։ Մի մտածիր, դրությունդ լավ կլինի ու
կմոռանաս, այս բոլորը հետո կմոռանաս,—
կրկնեց Հասմիկը։

Ձե՞ր վոր Ջմշիդը համաձայն չեր լինի նրա
վնալուն, առանց նրա ցանկության ինչպե՞ս
դնար, կամ ինչպե՞ս վարվեր մոր հետ, յեթե
նա չկամենար բաժանվել նրանից, — մտածում
եր Ասցեն։

Իր բացակայությունից հետո մորը կքըր-
քըրեցին, կհայհոյեցին, ի՞նչպես տաներ խեղճ
կլինը այդ բոլորը... Ու Ասցեն հեկեկաց, հեն-
վելով ժայռին։

— Մի՛ լա, Ասցե, մի լա. կարող ես հիմա
չդալ. վոչինչ, աշնանը կդաս, լաց մի լինի, —
հուսաղըրում եր նրան Հասմիկը։

Ասցեն կամաց-կամաց կարողացավ զսպել
հեկեկոցը։ «Եարունակիր քո ճանապարհը և
թող մարդիկ խոսեն, ինչ կուղեն», — կրկնեց
նա մտքում։ Յերկար լոելուց հետո, դիմելով
Հասմիկին, ամաչկոտ ու բեկրեկուն ձայնով
տաց։

— Կդամ, Հասմիկ, իսկ մայրս թող ուրիշ
որս տեղափոխվի...»

5

Քոլովի թելերն աչքերի վրա եյին իջել։
Բեխերը լցվել եյին բերանը ու հայհոյում եր
նա։

— Պառավ շուն, դուրս կորիր իմ որա-
յից, սատկած մարդուդ գերեզմանը, քո վրբ
վ. Վարդյան—11

աղջկա հերը... Շատ եք յերես առել. ել չդի-
տեք, վոր մի որ կայրեմ ձեզ ու ձեր փալասե
կոնը...

Նադո աղօն հայհոյանքի տարափ եր թա-
փում Խաջեյի մոր գլխին: Հայհոյում եր նաև
Զմշիդը: Նրա «աիբուր յեթե խանչալ տային,
այրուն չեղ դուրս դա», ինչպես ինքն եր ա-
սում:

Խաջեն համաքեց իր փալասները ու տեղա-
փոխավեց մոտակա հայերի որան:

Նրա զնալուց հետո, թքում ու բանբասում
ելին:

— Նամուսով քրդերը պետք ե սովանեն,
սովանեն դրանց: Դրանց քոքը կտրվի, —ասում
եր նախրատանի կինը:

— Սովորել են հայերի ու ոռւսների հետ...

— Կրկնում եր մի ուրիշը:

— Լավ եր. վոր կորան ե իմ ոճիքը դրան-
ցից աղտավեց, — ասաց Զմշիդը աղային դուր
կալու համար:

— Աբխային կաց, յես քեզ լավ ու նամու-
սով աղջիկ կուղեմ, վոր ըսկի նրանց մասին
չմտածես, — հույս եր տալիս նրան աղան: —
Ափսոս եյիր դու լառ... Նամուսը քցել են
շանը, շունը չի կերել:

Խաջեն դյուդ եր զնացել:

Կես ճանապարհին եր նա Հասմիկին ու Ա-
րամին հասել, ուշանալով մոր մոտ: Նա յեր-
կար ժամանակ չեր ուզում մորից բաժանվել,
լաց եր լինում ու գրկում մոր գլուխը, համ-
բուրում նրա չոր, դուրս ցցված այտերը:

— Մի՛ տխրիք, դայե... Լաց մի յեղիք,
դայե՛, չե՞ վոր յես քո Խաջեն եմ, չե՞ վոր
յես քեզ չեմ մոռանալ, — լալիս եր նա բաժան-
ման ժամանակ:

Մայրն ել եր լալիս: Սա համաձայն չեք,
վոր աղջիկը բաժանվի իրենից: Յերկար խընդ-
րում եր, վոր մնա: Զե՞ վոր փեսան կարող եր
հրաժարվել, չե՞ վոր բոլորը ամոթանք կտա-
յին նրանց, կնախատեյին: «Հեյ գիղի, Հա-
սո, գերեզմանումդ շարժվես, մի վեր կաց,
վեր կաց տես աղջիկդ՝ Խաջեն ինչ որի յե հա-
սել... Կորցրել և նամուռը», ասել եր մի քանի
որ առաջ որայի քուրդ կանանցից մեկը և այդ
խոսքերը կտրել եյին Մայրեյի սիրոբ:

— Կերթաս, լառ նամուռդ մի՛ մոռա-
ցիր, մեռած հորդ պատիվն աչքերիդ առաջ
թող լինի, — պատվիրում եր նա աղջկան:

Հոգեկան ծանր գրության մեջ եր մայրը,
տխուր ու դժողով, անհաջո Խաջեյի գնալու
մտքին: Բայց նահանջեց: Մի աղջիկ ուներ,
միայն մի աղջիկ, վոր իր սրտի տվությանքն եր
աշխարհում և ուրիշ վոչինչ, իսկ իր ամբողջ
կյանքում տանջանք եր տեսել ու միայն տան-
ջանք:

— Մի տիրիք, դայե ջան, հետո քեզ լավ
կպահեմ, քեզ չե՞մ մոռանա, — ասաց Խաջեն
վերջին անդամ և բաժանվեց մորից: Մայրն
անկարող յեղավ իր հավասարակշռությունը
պահել, ծալվեցին նրա ծնկները և նա գետին
ընկալով ու յերկար լաց եր լինում: Որայում

հետո միայն իմացան, վոր Խաջեն դյուռ և
զնացել:

Կեսորին, յերբ Զմշիդը վոչխարը տուն
բերեց, այդ լուրն իմանալով, լաց յեղավ, ձե-
ծեց իր մորը, թափելով իր բարկությունը՝ նրա
վրա, իսկ հետո յեղ հայհոյեց: «Աղան ճիշտ եք
ասում», Խաջեն անհամուս եք, անպատիվ, յե-
թե այդպես չլիներ, ինչո՞ւ հայի աղայի հետ
գյուղի կերթար, ի՞նչ ասես չի լինի ճանապար-
հին:

— Պառավի շուն, շուտ ասեյիք ինձ, շուտ
ասեյիք, վոր զնայի ճանապարհին յերեքին եւ
սպանեյի, վոր իմանային Զմշիդն ով և...—
բարկացել եք Զմշիդը իր մոր վրա:

— Յես դրա ծծած կաթը...—կերջին տն-
գամ դայրացած կերպով հայհոյեց Զմշիդն ու
մահակը վերցնելով աղայի վրանը զնաց:

— Յես քեզ լավ, նամուսով աղջիկ կու-
զեմ, լառ, յես քեզ եյի ափսոսում, քեզ: Նա
անաեր աղջիկ, վորբանոցումն առլրած աղջիկ
եք, նա քեզ կին չեր լինի, չե,—կրկնում եք ա-
ղան շողոքորթ ու կեղծավոր յեղանակով:

6

Խաջեյի զնալուց հետո, մայրը հայերի ո-
բայում մի կերպ պահում եք իր դլուխը: Նա
ցան եք հավաքում, խնոցի հարում, ուրիշի հա-
մար եք իլիկ մանում: Սակայն արտասուքը
մշտապես անպակաս եք նրա աչքերից: Նրա
բորիկ վոտքերը ճաքճքել եյին ու մըմուս
եյին, յերբ մի կաթիլ թան եք թափվում նը-

բանց վրա։ Նա ավելի խեղճ, շատ խեղճ կին
եր դարձել։ Ազատ բողեներին նստում եր,
հարյուր անդամ կարկատված դեյրայի վրա ելի
կարկատաններ ավելացնում ու «Դաւալել» յեր-
պը քթի տակ մեղմ յերգելով, լաց լինում։ Կացը
նրա համար մշտական եր դարձել, դրանով եր
նա դատարկում իր սրտում կուտակված թա-
խիծը, մի բողեն հանդստանում հոգեալես, տար-
վելով անգորր մոռացությամբ։ Ամեն անգամ
լաց լինելիս, վերհիշում եր նա իր ամուսնուն...
Այս բոլորը սրած թրի նման կտրում եյին նրա
սիրաը և նա վերհուշերի այդ սպանիչ մղձա-
վանջին չղիմանալով, հեկեկում եր, անվերջ
հեկեկում... Ու արտասուժներն քարից կաթկը-
թող ջրի նման, ցած եյին թափիվում նրա չոր,
վուկրացած այտերից, թրջում նրա փեշերը։
Այստեղ ել հանդիսա չեյին թողնում նը-
րան, ծաղրում եյիկ, արհամարհում։

— Պիրե², զյուղ գնա, աղջիկդ այնտեղ
հայ ջահելների հետ «աշխատում» ե... Նա
դրանով քեզ խանումի նման կպահի, — ամեն
անդամ այսպես եյին խոսում նրա հետ։ Սկզբում
որայի աղան³ Յեղորը, Սայրեյին չեր թողնում
որան մտնելու, իր քիրվա նազոյի պատվերը
կատարելու համար, բայց ուրիշները միջամը-
տեցին ու Սայրեն այդտեղ մնաց։

Գյուղերից Արագած յեկող ամեն մարդու
մոտ վագում եր նա ու հարցնում Խաջեյի մա-
սին, իսկ նրանք պատասխանում եյին անլուրջ

¹ Թրդական մելամաղձուա, երդ.

² Կառավի

ու չարախինդ լեզվով. «Խաջեյի նման իսկէ Զանդիր աղայի կնիկն ել չի ապրում», կամ «քայշովիկ ա աղջիկդ, բալշովիկ, ել աստծուց կրա՞կ ես ուղում»։ Հուսախարժած ու վհատ սբոսի մայրը հետ եր վերադառնում «գրանից» յեկողների մոտից։

Մի անդամ, յերբ Խաջեյից շխտակ լուր բերին, քիչ մնաց Սայրեն ուրախությունից խելքը թոցներ։ Խնոցի յեր հարում նա։ Նրա բաց ու լայն վարտիկը թրջվել եր թանից, ճակատի ժանդուռ ոլլիկները կամաց ձայնով դրնդրտում եյին, բարձրանում ու կտչում նրա ճակատին։ Մի քանի բողե հարելով, նա խնոցին մի պահ ընդհատում եր, վոր շունչ առնի և շարունակում եր իր աշխատանքը։ Նրա մկաններն այդ որվա յերկար աշխատանքից թուրացել եյին արդեն ու հաղիվ եր շարժում մածնաթանով լիքը խնոցին։ Վոտքերի պատուրված մաշկի վրա յերբ մի դդալ թան եր թափում, նրա հողին դուրս եր դալիս, այնպես ուր եր մոմոռում։

Այդ որն առավոտից մինչև կեսոր աշխատել եր նա և յերբ մի անդամ ել կանգնեց հանդիստ շնչելու լսեց մի ձայն, վոր իրեն եր կանչում։

— Սայրե՛, Խաջեյից լուր են բերել քեզ...

Մայրը շփոթվեց, ուրախությունից կորցրեց իրեն ու առանց իմանալու, թե վորտեղ են յեկել, ով ե կանչում, հակառակ կողմը վա-

զեց։ Նույն ձայնը յետ կանչեց նրան ու ցույց
տվեց վրանը . . .

Մի քանի բողեյից, նա հասավ վրանի
դռանը ու աչքերը թանոտ զոգնոցով սրբնլով,
Հարցըց դյուղից յեկած բատրակին։

— Դու Խաջեյին տեսա՞ր, զուրբան քեզ . . .

— Տեսա, դայե՛, շատ ու անչափ լավ եք
և շատ ու շատ բարե եք անում քեզ։

— Վայ դու բարու մեջ մնաս, լառ, արեւ
յերկարի, կանաչի, լառ, վոր բարե բերիր իմ
Խաջեյից։ Ել ի՞նչ եք ասում մատաղ քեզ, քո
բերնին մատաղ . . .

— Ել շատ և անչափ լավ եք, դայե, ու
բարե եք անում քեզ և և չուստն ու ես կտորն
ել ավեց, վոր քեզ տամ։

Յերբ բատրակ Փոփոլը նրան հանձնեց
Խաջեյի ուղարկած մի քանի մետր չիթն ու
չուստերը, Սայրեն ել չկարողացավ զսպել ի-
րեն, հեկեկաց, բայց այս անզամ բարձր ձայ-
նով ու բոլորին լսելի։ Չիթը նա քաղցր զդա-
ցումով դեմքին եր սեղմում ու թափում նրա
վրա իր արտասուրները։ «Դայեն քեզ զուրբան
լառ, դայեն քեզ մատաղ, լառ, դայեն հայրան,
լա՞ո», կըկնում եր նա ու սրտի անզուսալ խին-
դըն արտահայտում միայն լացով։

— Լա՞վ եք Խաջեն . . . Քո բերնին մեռ-
նեմ, լառ, քո վոտքերին . . . Կյանքդ յերկար
լինի, դառ ջան . . .

— Խաջեն շատ և անչափ լավ եք, դայե,
և ասում եր՝ մորս ել կըկնեմ ինձ մոտ, հիմա

կոսղերատիվում առևտուր ա անում և ամսա-
կան քառասուն մանեթ փող ա առնում, ամսա-
կան քառասուն մանեթ, բա՛:

— Ամսակա՞ն ա առնում:

— Հա, դայե, քառասուն մանեթ...

— Ե, ել վո՞նց եր, լա՞վ եր...

— Շատ և անչափ լավ եր, դայե ջան,
դու հեշմի մտածի:

— Ասում եր մորս ե՞լ կըերեմ:

— Հա, դայե, ինձ ել ասեց, յեթե դու
կղաս, հետդ բեր:

— Լավ եր հա՞...

— Շատ, շատ, դայե, շատ և անչափ լավ
եր:

Դայեն դուրսան նրան, դայեն մատադ
նրան, մատադ...», կըկնում եր մայրն անվերջ,
առանց ընդհատումի:

Եերբ վերագարձավ նա Փոփոլի մոտից
Դիլրար խանըմը նրան հայհոյեց ու թքեց,
վոր խնոցին այնպես թողել ու դնացել եր:
Բայց Սայրեն, վոր հայհոյանքներ լսելու
սովոր եր յեղել իր ծնված որից, լուց ինչպես
միշտ: Բոլորն ել յեթե հայհոյեցին ու թքեցին
նրան այդ բուղեցին, նա չեր տիսրի, նրա սիր-
տըն այնպիսի ուրախությամբ եր լցվել: Իր
փալասե վրանը գնալուց հետո, յերկար
ժամանակ շոյում եր նա չթի կտորը, սեղ-
մում կըծքին ու աչքերին: Ուզում եր իր ճաք-
ճաքված վոտքերը չստերի մեջ դնել, բայց ավ-
տոսալով հանում եր վոտքերից, համբուրում

ու կտորի հետ ամուր, ամուր սեղմում եր կըրծ
քին:

Առաջին անգամ, կյանքում հիսունից ա-
վելի տարի զլորվելուց հետո, առաջին անգա-
մըն եր նա նոր վոանաման ու նոր կտոր ունե-
նում: «Դային քեզ դուրբան, լառ, քեզ մատաղ
դոյին, լա՛ո»—կըրկնում եր նա իրար վրա:
Մինչև ուշ յերեկո, մինչև քնելը, նա այնքան
ուրախ եր, վորքան չեր ուրախացել իր կյանքի
բոլոր տարիներում միատին:

Մի քանի որ հետո, մի առավոտ, նա իրե-
ղենները շալակին առավ, մնացածներն ել որա-
յի հովվի կնոջ մոտ թողեց ու ճամբար ընկալ
փոփոլի հետ դյուզ դնալու, Խաջեյի մոտ գը-
նալու համար...

Յերր անցնում եր նա Նազոյի որայի կող-
քով, բոլորը վրաններից դուրս թափվեցին նը-
րան նայելու:

— Կյավրե խուլի բա,՝ կյավրե խուլի բա,
ինքն ել աղջկանից դաս առավ ու հայերի հետ
մենակ ճամբար յե գնում, անամոթ, աննա-
մուս,—բարձրածայն կանչում եյին որայի կա-
նայք:

— Նալլաթ, հաղար նալլաթ քեզ...

— Սովորել են դրանք, իմ քույր, սովո-
րել են... Զեն ամաչում չե՞...

Բամբասանքին ել ծայր ու վերջ չկար:

բոլոր ծաղիկները։ Սարի վերևից սկսեցին մը—
չել քամիները։ Արագածում զգացվում եր
ձմեռվա շունչը՝ տաղ ու սառեցնող։ Յերկու
անդամ տասվոտները նույնիսկ ծյուն տեսան։
Ամառվա խուզելուց հետո վոչխարների մար—
մինները նոր եյին ծածկվում բրդով։ Նրանք
մըսում եյին, կծկվում, ուրեմն դաշտ իջնել եր
հարկավոր։ «Բարձե՞նք աղա՛, բարձե՞նք, ժա—
մանակն ե»—խորհուրդ ավեցին մի քանի ծե—
րունիներ, և մի որ որան շարժվեց տեղից, քո—
չեց։

Առաջին որը, յերբ քոչերը հեռացան, դա—
տարկ մնացած վարում¹ զգացվում եր այնպի—
սի ամայություն, վոր թվում եր թե հազար
ամյակներ առաջ և այդտեղ անմարդաբնակ ու—
ամայի դարձել։



Քոչը դեպի ցած եր իջնում։ Կանայք, վո—
րոնց քթերի վրա միայլում եյին դարաֆիլնե—
րը, յեղներն ու եշերն եյին քշում։ Կարմիր
շալերը, տասնյակ փաթ, մեջքերին փաթա—
թած, նրանք շարժվում եյին արագ, վորպես
խակական, աշխույժ լեռնցիներ։ Զահել աղջիկ—
ները, կորած մետաղե դարդարանքների ու հու—
լունքների մեջ՝ զնդրտոցը ձորերն ու քարափի—
ներն եյին դցում, յերբ առույդ վազքով քշում
եյին քոչը։ Արագ շարժումից քրտինքը կտ—
թում եր նրանց ճակատների զնդլիկների տա—
կից։ Մի քանի կանայք ել տրեխներով եյին ու

¹ Վար—վրաններ խփելու ահպւ

յերեխաները մեջքներին կապած։ Նրանք հով-
վուհիներն եյին, որայի աղքատ կանայք։
Միայն աղայի կինն ու աղջիկն եյին աղատ
քայլում, խանումի պես։ Նրանք ել զարդար-
ված եյին մյուսներից ավելի ու շքեղ։ Հագել
եյին նրանք նոր ու խայտարդետ չթից ճալտուն
դեյրաներ, կարմիր ու ավելի լոյն վարտիկ-
ներ, վորոնք իջնում եյին մինչև վոտքերի սե-
չոտերը, վորոնց վրա փայլում եյին կարված
սաղաֆները։ Նրանց դլուխները կորել եյին
վոսկե ու արծաթե դրամների զարդարանքների
մեջ։ Յերբ հոգնում եյին, կանչում եյին. հո-
վիվիներին, նրանք անմիջապես բերում եյին
ձիերը և նրանք ձիերի վրա նստած, հպարտ
վորապես արծաններ, քոչից առաջ եյին դնում։

8

Գյուղ դալուց հետո նրանք ամեն որ խո-
սում եյին Խաջեյի մասին ու յերբեմն ել տես-
նում նրան։ Խաջեն Նադոյի և յուրայինների
հետ խոսում եր մի տեսակ հաղարտությամբ,
իսկ Զմշիդի քրոջ, մոր ու մյուս հովվուհինե-
րի հետ՝ հարդանքով, ու սիրալիր վերաբեր-
մունքով։ Աակայն թե՛ առաջինները և թե՛
յերկրորդներն ամեն կերպ աշխատում եյին
խույս աալ նրանից։ Առաջվա նման ելի բամ-
բասում եյին Խաջեյին ու հայհոյում, բայց
այդ բոլորը հիմա միայն նրա բացակայու-
թյամբ եյին կատարվում, իսկ նրա ներկայու-
թյամբ՝ բամբասողները լուսում եյին։ Վախե-

նում եյին մանավանդ՝ Նաղոն ու նրա ընտանիքը:

Ամեն անգամ, յերբ տեսնում եյին յեղդիւները Խաջնեյին, ներս եյին մտնում ու կըկնում սովորական բառերը. «Կյալքե խուլի բա՛, կյալքե խուլի բա»:

— Ձեր մեջն ել պակաս աննամուներ չկան, Հա՛, — բամբասանքի բուղեներին նրանց եյին դիմում Հայ կուլակ կանայք, ակնարկելով Ասքեյին:

— Կեղառու կովը նախըի անունն ե կեղառուում, — պատասխանում եյին յեղդիները, ճնշված նրանից, վոր իրենց մեջն ել «աննամուներ» կան ու լուսմ եյին կոտրված ինքնասիրությամբ: Նրանց ինքնասիրությունը կոտրվում եր, վոր Խաջնեն, խսկական յեղդի Խաջնեն բայլշիկ եր: Նաղոն շատ անգամ եր իր Հայ կուսակիցների կողմից նախատինքի արժանացել գրա համար, նրան միշտ ասում եյին. «Եմեր Հայ աղգը հլա տսենք թե լուսավորված ա, գրա համար փչացած ա, ըրա ձեղնից ինչո՞ւ առանց լուսավորվելու փչանում են, են ել այլթա կանայք»:

— Եղպես ա, — պատասխանում եր Նաղոն, տառմ են Հայը վոր խաչը մոռացավ, սունի (մոլեռանդ) մուսուլման կղառնա, խոկ զուրունը մոռացող մուսուլմանն ել՝ սունի խաչապաշտ: Հիմա մերն ա, յեղդուց վոր բայլշիկ ա դարձել, սունի ա, հիմա դե հո կեղառու կովը չպիտի ամբողջ նախըի անունը կեղառուի:

Մի որ, յերբ Խաջեն կոմսոմոլի ժողովում
խոսել եր յեղդի հովվուհիների մեջ աշխատե-
լու և նրանց կին պատժողովին մոտեցնելու մա-
սին, իսկույն այդ լուրն յեղդիներին եր հասել,
ու նրանք զայրացել եյին։ Յեվ յերբ դրանից
հետո մի անգամ Խաջեն հովվուհի Զարեյի մոտ
դնաց խոսելու, Զարեն վըդովված պատաս-
խանեց.

— Գնա՛, դնա՛ . . . մենք քո ընկերը չենք,
դու ճամբենդ ու նամուսդ կորցրել ես, դու ա-
նամոթ ես . . .

— Խաջեն իր փորձում ճախողման հանդի-
պելով, դուրս յեկայի նրա մոտից, ծիծաղը
դեմքին։

— Գնա՛, Հայերի տղաները ճամբենդ են
աղասում, — կանչեց նրա հետեւից Զարեն։

• 9

Կոռպերատիվը լիքն եր հաճախորդներով։
Գործակատարներն արագ շարժման մեջ եյին։
Խանութը լիք լցված եր։ Գնորդների պահանջ-
ներն շտապ կատարելու համար՝ արագ աշխա-
տանքից նրանք հոգնել ու քրանել եյին։

Կարմիր թաշկինակը դլխին կապած, ա-
րագաշարժ Խաջեն ճանապարհ եր դնում դնում-
ներ կատարող դյուղացիներին։ Բոլորը նրա
հետ խոսում եյին մեղմ ու ժպտալով։ Ճանա-
չում եյին նրանք Խաջեյին, վոր նա յեղդուհի
յե և կյանք ե մտել համարձակորեն, հերոսու-
հու քաջությամբ, հակառակ յեղդիների կամ-

քի: Իսկ նա անընդհատ շարժման մեջ եր: Մըշ-
տական ժպիտը թուխ դիմքին, կարմիր թաշ-
կինակի տակ ուրախությունից փայլող սև աչ-
քերի վատահ հայացքով նա խոսում եր գնորդ-
ների հետ, կարճ ու ճկում մարմնի արագ վոս-
տյունով իսկույն խանութի մյուս անկյունից
բերում նրանց ողահանջած իրը:

Սայրեն ժամերով կանգնում ու դիտում եր
աղջկա բոլոր շարժումները: Աղջկա կենսուրախ
կյանքը նրան թևավորում եր, արթնացնում
նրա սրտում այնպիսի խինդ, վոր նա յերեք
չեր զգացել: Ամեն անգամ աղջկանով հըճվե-
լիս նա բոլոր մանրամասներով հիշում եր իր
կյանքի տարիները, զրկանքների և անպառուղ
աշխատանքի տարիները, աղաների թուքն ու
մահակը, կտոր հացի կարուտ որերը և ամուս-
նուց ու վորդուց զրկվելը: Ու անսնելով ներ-
կան, նա ուզում եր ամուր զրկել, հենց կոռպե-
րատիվում զրկել Խաջեյի դլուխն ու սեղմել իր
կրծքին: «Յես քո ջանին զուրբան, լառ», յես
քո ումբրին դուրբան, լառ...» շշնջում եր նա.
«Ուր հինը, ուր ներկան, վոր հովվելինը քա-
զաքի կարած վոտնաման հաղնի՝ ով եր տե-
սել... Խալիանվի, խալիանվի հինը...» միշտ
մտածում եր նա: Թվում եր նրան, թե աշխարհի
ամենաանհոգ ու բաղդավոր մարդն ինքն ե:
Ել ո՞վ կա իրենից լավ ապրող: Խաջեն թաղա-
կոշիկներ ունի, նոր շոր, ինքը նույնպես հաղ-
նված ե, ել ի՞նչ կուղի:

— Ընկեր Խաջեն, մի սապոն տռւր, սապո՞ն... , կանչում եր դյուղացիներից մեկը խառնված մարդկանց յետելից։ Սայրեն յերբ յում եր իր աղջկա անունը, շշմում եր ուրախությունից, իր վողջ եյությամբ դառնում ուրախություն։

— Համեցե՛ք, պատասխանում եր, Խաջեն սապոնն ուղողին և ուրիշի կողմ և թեքվում՝ նրան պատասխանելու։

Յեղիները գնումներ կատարելիս մյուս դործակատարների մոտ եյին գնում, Խաջեյից ամեն կերպ խուսափելու, համար։

— Ախալե՛ր, մի խառ սըմիչկա տաս, — դիմում և հովվուհին մի դործակատարի, անհամարձակ ու վախվիսելով։

— Խաջեյի մոտ գնա, — պատասխանում ենրան դործակատարը։ Հովվուհին՝ Զարեն յերկար սպասում եւ Նա չի ուղում Խաջեյի մոտ գնալ։ Չե՞ վոր Խաջեն եր, վոր յեղիների նամուսին քար գցեց, չլսեց աղային և յերեսի ամոթն ու նամուսը ցած թափեց։ Խաջեն նայում և Զարեյին ու ժպտում քթի տակ։ Իսկ յերբ դործակատարներն իմացան, թե ինչո՞ւ համար Զարեն Խաջեյի մոտ չի գնում ապրանք գնելու, փըրթկացին ու սկսեցին կատակել։ Զարեն ամոթից կարմրեց, բազնիքից նոր դուրս յեկած կնոջ նման, ու վերադարձավ առանց «սրիիչկա» ուղելու, չլսելով դործակատարների կանչը։ Զմշիդի քույրը՝ Զինեն, յերբ ամաչելով կոռպերատիվ եր մտնում «սըմիչկա»կամ

«Հաքըր» դնելու, նույակես Խաջեյի մոտ չեր պնում, ուրիշ դործակատարի յեր դիմում ու ստանալով պահանջեցիքը, վախսելով դուրս եր շատապում։

Այսպես անցնում եյին որերը...

10

Առավոտ եր։ Ընկերների հետ կողերտափիլի խանութը. բանալու յեր դնում Խաջեն։ Ծիծաղում ու խոսում եյին նրանք որվա խնդիրների մտաին։ Հասմիկը, առավոտվա պես պարզ, ուրախացնում եր բոլորին։ Խմբով քայլում եյին նրանք, յերբ մյուս փողոցով դեմ առ դեմ դալիս եր Նադոն։ Յերբ նա տեսավ Խաջեյին ու մյուսներին, գեմքը թթվեցնելով, հայացքը գետնին հառեց ու չհեռացնելով աչքերն իր վոտքերի վրայից, անցավ նրանց մոտով, շարժվող ստվերի նման, լուռ ու անձայն։

— Աղան յերկնքից խռովել ե, գետնին և նայում, — ասաց Հասմիկն ու բոլորով բարձրաձայն ծիծաղեցին։ Նադոն լսեց այդ, ու քիչ հեռանալով, փնթվինթաց քթի տակ, հայհոյեց ու ճանապարհը դեպի տուն թեքեց, վանդակում փակված կատաղած արջի հուզմունքով։ Ճանապարհին ծերունի Խուղոյին հանդիպեց ու նրանք միասին Նադոյի տունը դնացին՝ դարդերն իրար առաջ բաց անելու։

— Աշխարհը խըրաբ ե յեղել, կալե (ծերըուկ), ժամանակը վատացե՛լ, — դիմում ե ա-

զան ծերունուն, — ժամանակը կանանցն ե, կանա՞նցը, բավո՛ (հայր), աշխարհում պատիվ ու նամուս չի մնացել:

Նրանք լրեցին գլուխները տարբերելով ու քիչ հետո, ծերունին հազիվ լսելի ձայնով քթի տակ մըմուաց իր հորինած յերգն աշխարհի «խըրաբ» լինելու մասին: Յերգի մելամաղձուտ յեղանակով ծերունին վողբում, ափսոսում եր հնի անկումը: Հնի դառն պարտությունը ճըգմում եր ծերունու սիրտը:

— Փո՛ւչ, անբա՞խտ աշխարհ... Նամա՞րդ, նամարդ աշխարհ, — կրկնեց ծերունին յերգը վերջացնելուց հետո, իսկ նադոն համը ծանրությամբ տարուբերեց դլուխն ու կրկնեց.

— Նամա՞րդ ե աշխարհը, կալե՛, նամա՞րդ...

11

Մի քանի աղջիկ հավաքվել եյին Խաջեյենց տան դուռը և խոսում եյին ու ծիծաղում: Այդտեղ եր նաև Զարեն: Նա Խաջեյի բացակայության ժամանակ առիթը բաց չեր թողնում նրան բամբասելու և պատմում եր, թե ինքն ի՞նչպես ե նրան տեսել հայ տղաների հետ ծիծաղելիս և նրա ասելով յեղդի կանայք զայրանում եյին Խաջեյի վրա ու բամբասում, անվերջ բամբասում, սովորական «կյավեխուլի բա» խոսքերը կրկնելով: Բայց նույն

Զարեն առերևս բարեկամ եր Խաջեյի հետ։ Բարեկամանալու համար նա ուրիշ շահագրգռություն ուներ։

Իրիկվանը կանանց ժողովի կա, ճառելու յես չե՞՝, Խաջեյի, — դիմում և Խաջեյին կենսուրախ մի աղջիկ։

— Դու ճառիր, յես ճառել չզիտնմ, ընկե՛ր Հոխիվ... Ու Հոխիվը որախոսում եր, ծիծաղցնում։

«Հողը ձեր ժողովի գլխին, անամոթնե՛ր... Դուք ել, ձե՛ր ժողովն ել դետինը մտնեք», — կրկնում եր մտքում Զարեն, փնթփնթում ինքն իրեն ու պատում իլիկը։ Հիմա յեր նա խոսում Խաջեյի հետ, վորովհետեւ նրանից սպասելիքներ, ուներ, վորովհետեւ մի յերկու որ առաջ եր նրանից ստացել մի զույգ չուստ։ Բայց դե՛հ, ելի սրտով չեր խոսում, այդ սպասելիքներից դրավված, խոսում եր նա, բայց դժկամությամբ ու ակամա։ Ի՞նչպես զոհ ու պարզ սրտով խոսեր միասնամուս, անարգ» աղջկա հետ։

— Խաջեն լով աղջիկ ա, պատվով, համա ենպես չի նստում ու վեր կենում, ինչպես աղջկան ա վայել, — պատասխանում եր Զարեն Խաջեյի քայլերին կողմնակից մարդկանց, Խաջեյի ներկայությամբ անդամ գովում եր նրան, իսկ յեղդուհիների շրջանում յեռանդով պատմում եր նա իր «տեսածները»։

Խաջեն ու իր ընկերուհիները ծիծաղում եյին Հոխիվի որախոսելու վրա, յերբ Զարեն

Հուզումից այլաբանած ժամանով հարցը նրանց.

— Իսկ անձրեւ վո՞րտեղից ե գալիս, վո՞ր ասում եք աստված չկա, ասե՞ք տեսնեմ...

Բոլորը ժպտալով նրան նայեցին, իսկ նա սպասում եր պատասխանի, կարծելով թե հաղթությունն իրենն ե:

— Հապա ինչո՞ւ չեք կարողանում մի ճանճ ստեղծել, յերկնքից ի՞նչու ձյուն ու կարկուտ չեք բերում: Ասալած աշխարհն և ստեղծել, ձյուն, անձրեւ ու կարկուտ ե թափում, դիշե՛ռ ու ցերեկ ե անում, բայց ելի դուք չե՞ք հավատառում: «Դուք ի՞նչ եք նրա առաջ, խեղճեք, աստված վոր ուղենա, բոլորիդ մի որում կմեռցնի», — վրա յեր տալիս Զարեն, իսկ Հասմիկն ու ընկերուցիները հետաքրքրությամբ լսում եյին: Յերբ վերջացրեց նա, Հասմիկը հավատալով, վոր նրան կարող ե իր համոզումներից հետ կանգնեցնել, սկսեց բացատրել նրան, վոր անձրեւն ու ձյունը ծովերից բարձրացող գոլորշիներն են, վոր սառչելով ցած են թափվում: «Չե՞ վոր դու և ամուսինդ արդեն մի փոքրիկ տղա յեք ստեղծել, փոքրիկ Մատոյին, ել ինչո՞ւ յես ասում ճանճ ստեղծել չեք կարող», — կատակեց Հասմիկն իր յերկար բացատրությունից հետո:

— Անամո՞թ, — ասաց Զարեն ու քրքջաց բարձրածայն:

— Ստեղծեք, ստեղծե՞ք, վոր կարդմեն, իհարկե, յերեխա կունենան, այն ել աստծու

կամքով ե, իսկ դուք վոր զոչաղ եք, առանց
կարգվելու ստեղծեք:

— Ինչու չեք ասում, դե ասե՞ք ե, հապա
յերկի՞րն ով ե ստեղծել:

— Վոչ վոք յերկիրը չի ստեղծել, — պա-
տասխանեցին նրան:

— Հապա ինքն իրեն վո՞նց ե ստեղծվել, —
կրկնեց Զարեն:

— Իսկ յեթե աստվածն ե ստեղծել, հապա
աստծո՞ւն ով ե ստեղծել, — հարցրեցին նրան:
Զարեն զայրացավ այդ հարցի համար, ու-
ղում եր հեռանալ, բայց նրանց «Հիմա-
րությունը» ծաղքելու համար, պատասխանեց:

— Աստվածն ե բոլորին ստեղծել, աստը-
ծուն վո՞չ վո՞ք չի կարող ստեղծել, ամո՞թ
ձեզ, մեղք ե, վոր եղակես բաներ եք ասում:

— Հապա ինքն իրեն վո՞նց ե ստեղծվել, —
կրկնեց Հասմիկը, քիչ առաջ արտասանած նրա
բառերը:

Զարեն զայրացած լոեց: Մտքում նա հայ-
Հոյում ու անիծում նր բոլորին ու Խաջեյին,
վոր նրանց ընկերն ե գարճել: Նախատինքի մի
քանի խոսքեր առելուց հետո, խրատելու ձևով
դիմեց նա աղջիկներին.

— Մեղք եք, քույր ջա՛ն, ջահել եք, աստ-
ված ենակես կքրքրի ձեղ, վոր դուք լալով
մեղա գաք, — աղջիկներն անհոգ ծիծաղեցին,
իսկ նա ավելի հուզվեց ու փրփրեց:

Արեն ի՞նչպես ե դուրս դալիս ու մտնում,
եղ ել կարո՞ղ եք ասել, — վերստին հարցրեց

նոր, համոզված, վոր դրանով գոնե ղինաթափ
կատարել նրանց:

Հասմիկն ակամա ելի սկսեց բացատրել
թե ի՞նչպես յերկրագումնդը պտտվում է արևի
շուրջը և իր առանցքի շուրջը և թե ի՞նչպես
ամառ ու ձմեռ, ցերեկ ու դիշեր են առաջա-
նում:

Զարեն դրանից վոչինչ չհասկանալով,
աչքերը կիսախուսի արած, մտածում եր, թե
ինքն ի՞նչ նոր բան ասի:

Յերբ Հասմիկը վերջացրեց, Զարեն ելի
հրհուաց հիմարական ծիծաղով: Նա այնպես
բարձր եր ծիծաղում, վոր կարմրեց ծիծաղի
ուժից ու հետո, լրջանալով՝ իրեն ամենա-
զետ մարդ համարողի անապարծությամբ սկսեց
պատմել չեյխի ասածները. «Աստվածն իրի-
կունները ձեռքն արեսի վրա յե դնում ու որը
դիշերանում է, իսկ՝ յերբ վերցնում է ձեռքը
ցերեկ և լինում: Ամեն ինչ աստծու կամքովն է,
թշվառնե՛ր, դուք ի՞նչպես չեք վախենում,
յերբ նրան զեմ եք խոսում: Այ, յես ել կմե-
ղավորե՛մ, յես ել, վոր անհավատների հետն եմ
խոսում: Խոսողը մեղավոր չե, լսողն ե մեղա-
վոր, լսո՛ղը...»: Այս անդամ ավելի հնչեղ ձայ-
նով ծիծաղեցին նրա վրա: Զարեյի զայրույթն
արդեն սահմանն անցել եր: Նա շփոթված ու
կարմրած, հեռացավ նրանց մոտից՝ բարձրա-
ձայն հայհոյելով:

Զարեն, ճանապարհին հանդիպեց աղայի

կնոջը, վոր նրան կանգնեցրեց ու բարկացած ասաց.

—Մեկ ել դու զնացել ես ե՛ղ լրբերի մոտ, աղայիդ կասեմ մազերդ պոկի, քառասում գընդակ լցնի փորդ, դու յել ես կապդ կտրել, չե՞ վոր դուրս կդանք սարը: Կարծում եք բայլ-շեխներից կվախենա Նաղոն, իրիկվանից մինչև առավոտ բոլորիդ պանրի նման կբրդի՛, կրրդի՛...

Ընդունելով նրա նկատողությունն ու խեղ-ճանալով նրա առօջ, Զարեն սկսեց պատմել. թե ինչի մասին եցին խոսում նրանք, վորի համար ինքը խոռվեց ու յեկավ: Աղայի կինն ավելի բարկացավ նրա վրա ու կարողադրեց, վոր ել Խաջեյի հետ չխոսի, սպառնալով Նաղոյին տան:

— Անամո՛թ, մի՛րբ, զնացել կոմսոմոլ այեղել, քո հերը բալի գյոռի մեջ իր թեկրը կըծի լառ', թո՛ւ, թո՛ւ քո պատվին ու նամու-սին...

Ինքն իրեն խոսում եր աղայի կինը:



Ամեն անդամ, յերբ խոսում եյին Խաջեյի մասին ու բամբասում, Խաջեն չլսելու յերտալիս, միայն աղայի կնոջն եր նա պատաս-խանում և այն ել խոտությամբ: Մայրն եր միայն վեճի բռնվում իր աղջկան բամբասող-ների հետ ու հայհոյում նրանց: Նա այնքան եր արիացել, վոր մի որ ել հայհոյեց իրապես վա-խենալով Խաջեյից, միայն ասել եյին.

— Առբաակվի՛ր, փչացէ՛ր ելի, աշխարհ,
այնտեղ հասանք, վոր մեր կեղտուու կյաբա-
նին՝ Սայրեն ել ե մեզ հայհոյում...

Իսկ յերբ մյուսների հետ եր հայհոյանքի
բոնվում Սայրեն, Խաջեն միշտ աշխատում եր
պապել մորը:

Զմշիդի մայրն ու քույրն արդեն սկսել
ելին անտարեր դիրք բոնել, շատ քիչ ելին
մասնակցում բամբասողներին։ Բացի դա,
նրանք արդեն կամաց-կամաց սկսում ելին
դժոհել աղայից։ Աղայի կինը մի յերկու
անգամ իր ամբողջ զայրույթը նրանց վրա յեր
թափել, հայհոյել եր նրանց ու արգելել, վոր
իրենց առնը դնան։ Իսկ դրա առիթը յեղել եր
այն, վոր աղան Զմշիդի հովվական վարձի հա-
մար վաս դառ եր տվել, իսկ Զմշիդը լավն եր
ուղել։ Դրա համար աղան բարկացել եր, զայ-
րացել, վոր իր հովիկն առարկել եր իր խոսքի
դեմ և ծեծել ու հայհոյն եր Զմշիդին, իսկ
իր կինը Զմշիդի մորն ու քրոջը հայհոյելու
իր պարտականությունն եր կատարել և՛ մի
քանի անգամ։ Հայհոյելու ժամանակ խանու-
մը Զմշիդի մորն ասել եր.

— Գնացե՛ք, գնացե՛ք ձեր հարսին տեր
յեղեք, վոր ուրիշի դրկումն ե լինում, վոր
հայ աղաններին ե կին դարձել, դռւք ել լեղու-
ներդ հանեցիք մեզ վրա, տաքացած ոձեր...

Զմշիդի մայրն ու քույրը՝ Զինեն ել կա-
րող ելին նրան պատասխանել, հենց թեկուզ

նրա աղջկա մասին ակնարկելով, բայց լռել եյին...

Լռել եյին: Բայց Զմշխդի մայրն ամոթի ու հուզմունքի մեջ եր, խանումի ասածն ուժեղ ապտակ եր յեղել նրա ինքնասիրությանը:

12

Գյուղխորհողի ժողով եր: Նախագահը չեր կարողանում ղաղել աղմուկը: Վիճում եյին, խառնվում իրար: Ամեն մեկը կարծում եր, վոր իր կարծիքն ե ճիշտ և պետք ե անպայման ընդունեն, ու պնդում եր, աղմկում:

— Կսեցեք, ընկերներ, եղակես չի' կարելի, ով ուզում ե, առանց նախագահի սկսում և վիճեց: Ժողովը մի բոսկ խանգարվում ե, վոր հետո ելի՛ աղմուկն սկսվի:

— Զայնը տրվում ե ընկ. Հասմիկին, — հայտարարում ե նախագահը: Հասմիկը կարմրած դեմքով կանգնում ե, բլոկնոտի մի թերթիկ ու մատիտ ձեռքում բռնած:

Հասմիկի կողքին նստել ե տասնութամյա մի աղջիկ, կլոր ու թուխ դեմքով, քթի վրա մի նեղլիկ անցք: Թվում ե, վոր նա փոքր հասակում մի ծաղիկ ե հանել այդ անցքի տեղը: Նրա կրծքին, կիսահնամաշ վերարկուի վրա, փայլում ե կոմսոմոլի նշանը: Գլուխը կախ, ամաչկոտ ժաղիտով լսում ե բոլորի խոսքերը, յերբեմն ել կարմրած դեմքով լըրջախոհ հայացքը սևեռում խոսողի վրա, ու

վերաբերուի թելի հետ ելի կախում գլուխը:
Հասմիկը խոսում եր վոգնորդած ու կրա-
կու:

— Այո՛, ընկերնե՛ր, պետք և աշխատել
յեղի բատրակներին ու բատրակուհիներին
ել զիտակցության բերելու, վորպեսզի պայ-
մանադիր կնքեն վարձողների հետ: Նրանք
դեռ շահագործվում են իրենց անդիտության
պատճառով, մենք պետք ե պաշտպան կանգ-
նենք նրանց:

Բոլորի դեմքի վրա ուրախ ժամկետներ
եյին խաղում, յերբ Հասմիկը վերջացրեց:

— Ընկերներ, խոսքը տրվում ե ընկ. Խա-
ջեյին, — ասաց նախագահն ու նստեց իր տեղը:

Խաջեն վոտքի կանգնեց և ուղում եր խո-
սել, յերբ նույն բոպեյին դուռը շրխկարով
բացվեց ու ներս մտավ մի միջահասակ յերի-
տասարդ, արյունլիք դեմքով... Բոլորը նրա
վրա վաղեցին ու ժողովը խառնվեց իրար:
Յերբ Խաջեն նրան տեսավ, ճչաց և վայր-
կյանապես գունատվեց, վոտքերը թուլացան
ու նստեց նստարանի վրա: Ներս մտնողի գըլ-
խի մազերն արյունոտ եյին ու դղգղված:

Նրա այտերի վրա տեղտեղ մաշկը պլոկ
ված եր, վորտեղից կաթիլ-կաթիլ դեռ դուրս
եր գալիս կիսակարմիր հեղուկը, իսկ դլխի
ջարդվածքից հոսած արյունը չորացել եր մա-
զերի մեջ և ունքերի վրա: Նրա շորերը դղգըզ
ված եյին: Նրա ձեռքին մի մահակ կար, վոր
ներս մտնելուն պես բռնեց ձախ ձեռքով և ա-

ջով ցույց տվեց գլխի ջարդվածքը, նրանից
հոսող արյունն ու իր կտրտված շորերը: Լա-
ցակումած ձայնով նա դիմեց Գյուղխորհրդի
նախագահին.

— Ընծի սպաներ ե, նախագահ ջան, յես
մեռել ե, ընծի, հեչ հալ չմնացեր ե, —ու լացը
դաղելով շարումակեց, —շատ, շատ արփես
ինծի, նախագահ ջան, հեչ հալ չմնացեր ե:

Գյուղխորհրդի բոլոր անդամները հերթով
նայեցին նրա գլխին: Ահազին ճեղքվածքը,
վոր առաջացել եր մահակի մի ուժեղ հարվա-
ծից, և արյունոտ մազերն ու արյունի մեջ
թաթախված նրա դեմքը դիտելիս մարդու-
մարմինը փշաքաղմում եր ու սիրան առելու-
թյամբ լցվում վոճրագործի հանդեպ:

Գյուղխորհրդի գրասենյակը լցվեց մարդ-
կանցով: Բոլորն ել մոտենում, նայում եյին
նրա գլուխն ու Շայհոյանքներ ուղղում ծեծո-
ղին: «Ո՞վ ե խփել, եղ ի՞նչ և յեղել», —հարց-
նում եր յուրաքաջուր նոր ներս մտնողը:



Յերբ նախագահը նայեց իր յետե, ելի
նրա մարմինը փշաքաղմեց ու մնաց շշմած:
Խաչեն դեռ նստած եր իր տեղում, դադաղում
սրտկած մարդու դունատ դեմքով: Նա սպի-
տակել եր լվացված քաթանի նման, այն-
պէս վոր նայողը կկարծեր, թե յերկարատե-
հիվանդությունից նոր եր վեր կացել:

— Եղ ի՞նչ ե, Խաջե, քեզ ի՞նչ ե պատա-

Հերբացականչեց նախագահը և նրա ձեռքը
բռնելով կանգնեցրեց նստած տեղից ու կան-
չեց Հասմիկին, վորն իրարանցումին խառնը-
վելով, մոռացել եթ ընկերուհուն։ Հասմիկը
դուրս տարավ Խաջեցին, իսկ նախագահը
դյուղացիներին խնդրեց, վոր ազատեն պրա-
սենյակը քննություն կատարելու համար։

Յերբ դյուղի կատարածուները Նաղոյին
դրասենյակ բերեցին, նրանց հետեւից վազե-
լով դրասենյակի բակը մասն նաև Զմշիդի
մայրն ու քույրը։ Մայրը գոռում եր ամրողջ
ձայնով ու հայհոյանքներ ողղում Նաղոյին։
Հայհոյում եր նա Նաղոյին, վորին յերբեկ-
ցե մտքումն իսկ չեր հայհոյել, չնայած առա-
ջին անգամը չեր, վոր Նաղոյն ծեծում եր իր
վորդուն։ Զմշիդին տեսնելով, ձեռքերով
խփեց իր դիմին, դոռաց հայհոյելով ու ընկալ
դեանին։

«Քր բեխերը . . . քո հերը . . . շուն . . . ա-
նոմոթ շուն . . . հայհոյում եր նա առանց ընդ-
հատելու։ Նաղոյն միրիբում եր, ատամները
կըճտեցնում ու սպառնալիքով շարժում գլու-
խը։

— Հանգիստ պահիր քեզ, քաղաքացի Նա-
դու, և իմացիր վոր սարումդ չես, — դիմեց
նրան նախագահը բարկացած, յերբ նա պա-
ռավի հայհոյանքներին ուզում եր պատաս-
խանել ֆիզիքական ուժով։

— Մի զդա, թե բոլորը քո ստրուկներն
են, ինչպես զգացել ես միշտ, — կրկնեց Հաս-

միկը, — Հետո դատարանում կխոսենք, սրանով չեւ վերջանա:

Նաղոն վոչինչ ասել չեր կարող, ինչաղես կապած դամփուը մարդու կծել չի կարողանում և կրծոտում եւ իր շղթան: Իսկ Զինեն՝ Զմշիղի քույրը՝ գրասենյակի դռանը կանդնած հեծկրյոտում եր աղիողորմ, լաց լինում հոնդուրհոնդուր: Հասմիկի հետ գրասենյակից դուրս դարով Խաջեն մոտեցավ Զինեյին ու գրկելով նրա դլուխը, շնչաց քրդերեն լեզվով.

— Լաց մի յեղիր, խուշկ ե՞ ջան, մի լախմ քույր Զինե...

Զինեն ամոթից զսպեց լացն ու դլուխը կախեց: Խաջեյին թվում եր, վոր լուռ մի կարոտ, անհագ մի սեր կա Զինեյի մեջ դեսլի իրեն, վոր արտահայտվում և միայն լուռթյամբ: Յեվ իրապես սիրում եր նա Խաջեյին: Իսկ վոր միշտ հայհոյում եր, հայհոյում եր, նրա համար, վոր բոլորը ինչպես նաև իր մայրը, սովորություն եյին դարձրել Խաջեյին մըշտապես հայհոյելը:

Զմշիղին վոչինչ չի յեղել, քույր ջան, լաց մի յեղիր, մենք աղայից ավելի խիստ կերպով այդ վրեժը կառնենք, — կրկնեց Խաջեն շոյելով Զինեյի դլուխը:

Ներսում Զմշիղի մայրը դեռ հայհոյում եր Նաղոյին ու լաց լինում:

— Բնկեր նախաքա, իրավունք ունե ընձի՞

¹ Քույրիկի

քըլին, — արդար յերեւալու տոնով նախագահին
դիմեց Նաղոն:

— Իրավունքի մասին ես խոսում, իսկ
ու իրավունք ունեցի՞ր նրա վորդու զլուխը
ջարդելու...

Նաղոն լոեց: Քոլողը դմիից իջեցրեց ու
նրա տակը տալով իր սև մազերը՝ նորից գր-
լուխը դրեց: Նրա թուխ ճակատը փայլում եր-
դեմքի վրա մռայլություն չկար: Այնպես,
վոր սպասելի չեր այդպիսի բարեկազմ ու մեղմ
արտաքին ունեցող մարդուց այդորինակ գա-
ղանային գործ:

Նախագահը՝ յերբորդ անդամ խնդրեց
Զմշիդի մորը վոր լոի, կամ դուրս գա գրա-
սենյակից, վորպեսզի հարցաքննություն կա-
տարեն: Յերբ մայրը դուրս յեկավ ու Խաջեցին
տեսավ իր աղջկա մոտ կանդնած թեքվեց մի
կողմ, նրան չնայելու համար: Իսկ Խաջեն
Հասմիկի հետ մտավ գրասենյակ հարցաքըն-
նությանը ներկա լինելու:

Յերբ պարզվեց, վոր Նաղոն Զմշիդին
ծեծել եւ հովվական վարձի համար, Խաջեն
վճռականությամբ դիմեց նախագահին.

— Էնկեր Լեռն, ինձ վկա գրիր, յես տեղ-
յակ եմ թե գարնանը վարձն ինչպես են խոսել:
Այդ ժամանակ յես ել սարումն եյի:

Նաղոն ու Զմշիդը նրան նայեցին: Մեկն
ամաչելով, մյուսն ել վախի զգացմունքով:

Հասմիկի ու Զմշիդի հայացքները հան-
դիպեցին իրար: Զմշիդը դլուխը կախեց. Նը-

բան թվում եր, վոր Հասմիկն իրեն ուզում է
ասել. «Այ, Զմշիդ, այդպես կլինի, աղային
լսում եյիր ու ինձ մեղաղըում, տեսնո՞ւմ ես
վերջն ինչպես յեղավ, իսկ հիմա յես ելի պաշտ-
պան կկանգնեմ քեզ, իսկ աղան քեզ մի՛շտ,
միշտ թշնամի կմնա...»

Գյուղխորհրդի նախագահը հարցաքըն-
նեց կողմերին ու վկաներին, Նաղոն կալանա-
վորվեց ու գործը տրվեց դատարան:

Գրասենյակից դուքս յեկան այնտեղ յե-
ղողները: Զմշիդի մայրն ելի սկսեց բարձրա-
ծայն հայհոյել: Զմշիդն առաջ—առաջ քայ-
լում եր, իսկ մայրը Զինեյի ձեռքը բռնած,
հայհոյում եր, ու նրանք տուն եյին դնում:

Զինեն հետ եր դառնում մեկ—մեկ ու նտ-
յում, Հասմիկին ու Խաջեյին տեսնելու, ու
ամաչելով թեքվում, դեպի մայրը, յերբ նը-
րանց հայացքն եր հանդիպում:

— Գուեք ջնո՛ւ¹... Սայե ջնո՞ւ... լսվում
եր Զմշիդենց տան կողմից նրա մոր ձայնը:

13

Հասմիկն եր ժողովի նախագահը: Այդ-
որվա ժողովը տարբերվում եր մյուս ժողով-
ներից: Արտակարդ մի հետաքրքրություն եր
նկատվում բոլորի դեմքերի վրա: Հասմիկը
հերթով ձայն եր տալիս բոլորին. յեթե լինում

¹ Կատաղած գայլ:

² Կատաղած շուն:

Եյին սխալներ, նա ժպտալով ուղղում եր ու-
րացառըություններ եր տալիս:

Յերբ բոլորը խոսեցին, հերթն իրեն հա-
սով: Նա սանրով հետ տարավ մաղերը և ժըլ-
տալով սկսեց:

— Ընկերներ, վո՛չ մի որ մենք չենք ու-
րախացել այնպես, ինչպես այսոր: Այսոր, մեր
կողքին, մեզ հետ ժողովում նստել են մեր յեղ-
դի ընկերուհիները: Նրանք, վորոնց այսքան
շատ ժողով գալը մեր մտքով չեր անցնում:
Բայց մենք աշխատում եյինք, մենք հավա-
տում եյինք մեր դործին ու մեր աշխատանքն
իզուր չանցավ, ուրեմն ինչպես չուրախա-
նանք...

Նրա խոսելու ու շարժումների հետ Սայ-
րեն շարժում եր իր դլուխը, նրա սիրտը լըիկ
ուրախությամբ եր լցված: Իսկ Զմշիդի մայրը
լուր լսում եր միայն, չհասկանալով, թե ի՞նչ
են առաւմ: Ու Զինեն, վոր նստած եր Խաջեյի
հետեւում, ամաչում եր անդամ դլուխը բարձ-
րացնել վերև նայելու: Զեր կարողանում նա
ձեռքերը մի հարմար տեղ դնել. փորձում եր
ծնկների վրա դնել, իրեն անհարմար եր թվում,
դնում եր նստարանի վրա, կարծում եր վոր
կծիծաղեն: Պլիկներն ու զնդլիկները կախ-
ված եյին նրա պարանոցից. նա այնքան եր
ամաչում, վոր ճակատից քրտինքի կաթիլնե-
րը, ճակատի կլոր ու փոքրիկ մետաղների նը-
ման սպիտակ, ցած եյին դլգլում: Զարեն սա-
ռըն հայացքով նայում եր ամեն խոսողի շր-

թունքների շարժումներին, աչքերին, ձեռքերի
թափահարումներին ու անմիտ հայացքը դա-
մում եր մի կետի, աչքերը յերկար ժամանակ
նրանցից չհեռացնելով։ Զարեն այնպես եր շըշ-
մել ու ինքնամոռացության մեջ թաղվել, վոր
չեր զգում, թե ի՞նչ ե կատարվում իր շուրջը։

Բոլորը խոսեցին։ Վողջունեցին նոր կյանքի
շեմքը մտած յեղղուհիներին։ Բոլորից հետո
խոսեց նաև Խաջեն։ Ամբողջ ժողովը ծափա-
հարեց նրան. «Ռոռառ'...ռոռառ'...մեր քույ-
րերին», ծափահարելով կանչեց կոմյերիա-
կան Արամը և բոլորն արձադանքեցին նրան։
Յերբ քիչ լրում եյին, Խաջեն փորձում եր շա-
րունակել, բայց ելի ծափահարում ու նա ընդ-
հատում եր։ Գլուխը կախած, հայացքը դետ-
նին հառելով, դեմքը կարմրած, մատներն ի-
րար եր քսում նա ու սպասում ծափերի վեր-
ջանալուն։ Այս անդամ եր միայն Զինեն դլու-
խը բարձր պահած նայում։ Ժողովի ծափահա-
րությունները նրա ներքին աշխարհը լցնում
եյին հրճվանքով ու համակում նրան անձայն
ուրախությամբ։

Ծափահարությունները մեղմացան, Խաջեն,
սկսեց։ Նա խոսում եր քուրդ կանանց մասին,
նրանց ել կին պատգամավորական խմբակի մեջ
ընդունելու մասին։

— Քուրդ աշխատավոր կինը, շատ, շատ
ե ճնշվել ու հայհոյվել խանումների կողմից,
ինչպես և նրանց ամուսիններն են ծեծվել, վոր-
պես անասուններ։ Այդ ճնշումներից ազատվե-

լու ժամանակն և և մենք ազատվում ենք, մենք
ազատվում ենք և անհաշտ պայքարի յենք դի-
մում հնի դեմ,— այսպես վերջացրեց Խաջեն
ու ծափերի, ուրախ բացականչությունների
տակ ժողովը փակվեց:

Այդ որը պատղամավորական խմբակի ան-
դում դարձան ժողով յեկած յեղուհիները...

14

Յերբ նրանց ճանապարհ դնելուց հետո
Հասմիկն ու Խաջեն վերադարձան, Հասմիկն
ներքին անհուն մի ուրախությամբ հարցրեց.

—Դե՛, շուտ պատմի՛ր, Խաջե ջան, այդ
ի՞նչպես, ի՞նչպես հաջողվեց: Յես հենց այսոր
քաղաքից վերադարձա ու շատ անակնկալ կեր-
պով նրանց ժողովում տեսա:

Ու Խաջեն, ինքնարավականությամբ, իր
հաղթանակով հրճված, սկսեց պատմել:



«Ինձ համար ել յերազ և թվում, Հասմիկ,
և դեռ անհավատալի: Ո՞վ կկարծեր, ո՞վ կհա-
վատար, վոր վրանի ներսից բացի աշխարհ
չտեսած, աշխարհի մասին չիմացած յեղդի
կինը ժողով դար: Նրանց համար ժողով դան
այնպես եր ծանր, ինչպես յեղդի չեյխերի,
դավալների, փիրերի¹ և աղաների համար մահն
և ծանր: Դու տեսա՞ր, ինչպես շփոթվել ու
կարմրել եյին նրանք: Գիտեմ, վոր նրանք
կարծես վախենում եյին: Բայց ներքին մի մը-

¹ Յեղդի հոգեվորականներ

զում ստիպում եր նրանց անսպայման ժողով
դալ։ Այդ մզումի մասին կասեմ քեզ, այդ
դրդապատճռոր յեթե չլիներ, դուցե շատ ու
հաջողվեր նրանց հասկացնել այն, ինչ վոր
հայ աշխատավոր կինն արդեն հասկացել
ե։ Մանավանդ Զինեն։ Հասմիկ, զգում
եյի, վոր այդ աղջիկը վերջերո շատ
անկեղծ և սիրում ինձ, աղբյուրի նման
պարզ այդ աղջիկը։ Ինչքան ասում եմ Զայնե-
յին, նույնքան համակրանք կա իմ մեջ Զի-
նեյի, վերջին որերի Զինեյի նկատմամբ։ Վեր-
ջապես՝ հաջողվեց նրանց ժողով բերել, վորն
սկիզբն և այն աշխատանքների, վոր մենք հետո
պետք և կատարենք նրանց մեջ, իսկ այդ սկզբ-
նական քայլի հաջողությունն սկսվել եր դեռ
շուտ, սրանից մի քանի շաբաթ տուած։

Յեվ Կայդ բոլորն այսպես յեղավ։

Յերբ Զմշիդն արյունը վա դյուլիսոր-
հուրդ մտալ, զու հիշում ես չե՞մ, թե ինչքա՞ն
վատ յեղա յես։ Հենց այդ որվանից սիրտու ե՛լ
ավելի ցավել սկսեց նրանց համար։ Վոր Զըմ-
շիդի դործին վկա դրվեցի, յեղդիներն ելի
իրենց բամբասանքի ճամբան սկսել եյին սկզ-
բից, իսկ Զմշիդի մայրն ու քույրը, նրանց
հետ և Զարեն (դու նրա ամուսնուն ճանաչում
ես չե՞մ, Զմշիդի հովիվ ընկերն ե, անունը Համ-
զո)։ — Հասմիկն հավանության նշան արեց։ —
Զմշիդի մայրը, քույրը և Զարեն իմ արածի
մասին հիացմունքով եյին խօսել մի քանի հայ

կանանց մոտ։ Արդեն զգացվում եր, վոր աղա-
յից յերես և յին թեքել ու կընլով մեր պայման-
ների աղջեցությունն եղ, ատելությամբ եյին
լցվել դեպի նա և սպասում եյին դատին, իսկ
այդ դատը, վերջապես յեղավ։ Դու դատարա-
նում լինեցիր, Հասմիկ, վորքա՞ն, վորքա՞ն
կուրախանայիր։ Արտմն այնտեղ եր։ Նա ուրա-
խությունից իր տեղում հանդիսաւ նստել չեր կա
բողանում։ Յերք գատարանն ինձ կանչեց վոր-
պես վկայի, այսպես սկսեցի։ «Առաջին անգա-
մը չե, ասացի, վոր Նաղոն դրան ծեծում ե։
Ծեծել ե միշտ, ինչպես վոր միշտ իր վարձկան
յեղներին ե ծեծել։ Այո՛, ասացի, — յեղդի ժո-
ղովուրդը նրա աչքին դեռևս հոտի յե հավա-
սար, լուղ ու անապատամբ։ Մեր դատարանը
պետք ե ցույց տա նրան, վոր բատրակների
հովիվննըի գալքանն՝ և հիմա։ Իսկ այս ան-
դամ ծեծել ե գրեթե առանց պատճառի։ Յես
ներկա յեմ յեղել, և ըոլոր յեղդիներն ել գի-
տեն, վոր գարնանը քաղաքացի Նաղոն խոս-
տացավ վեց դառ տալ Զմշիդին հովվության
վարձ, բայց չորս դառ ե տվել, իսկ յերք Զըմ-
շիդը պահանջել ե իր լրիվ վարձը, նա, ըստ
իրեն հին սովորության, վորին դնու կառչած
ե, այդպես ծեծել ե Զմշիդին։ Վորպես տեղ-
յակ այդ գործին, ասացի, խնդրում եմ խիստ
լինել։ Յես հավատում եմ, ասացի, վոր խոր-
չըրբային դատարանը խիստ կլինի»։ Խոսելուց
հետո, յերք Զմշիդի դեմքին նայեցի, նա ճնշ-

վեց իմ առաջ ու դեմքի զղջումի արտահայտությամբ գլուխը կախեց։ Սրտումս առաջացավ մի վառ զգացմունք, յես սիրեցի այնպես, ինչ ոլես սիրել եյի մի տարի սրանից առաջ, յերբ նշանվեցինք... Յերբ դուրս յեկանք դատարանից, նա ամանչում եր յերեսիս նայել։ Խուսափելով մեր մոտիկությունից, նա առաջ անցավ մեր շարքից ու առաջ-առաջ գյուղ յեկավ։ Անդուսակ խինդն եր յեռում նրա սրտում։ Յես այդ նկատեցի այն ժամանակ, յերբ դատավորն հայտարարեց, վոր Նաղոն տուգանվում և յերեքհարյուր ոռուրլով։ Զմշեղն այդ խոսքերը լսելիս՝ հրճվանքից անհանգիստ շարժումներ եր անում։ Նա ուրախ եր, բայց նրա դեմքի վրա կարելի յեր կարդալ նրա հոգում անսահման հուզմունք։ Յեկ ուրախ եր նա, և հարկադրված մտածելու ինչ վոր բանի մասին... .

Հետեյալ որը, յերբ յերեկոյան տուն դընացի, զարմանքս շատ յեղավ, վոր Զմշեղի մորը՝ Փարիշանին, Զինեյին ու Զարեյին մեր տանը, մորո կողքին նստած տեսա։ Յերբ ներս մտա, նրանք կարծես քաշվեցին ինձանից ու բոլորով միասին վոտքի կանգնեցին։ Զիմացա, թե մենք ինչպես խոսեցինք իրար հետ։ Հենց խոսելու առաջին ըստեյին զգացի, վոր նրանց վերաբերմունքը վոտխվել եր։ Անկեղծ, մտերմական զգացմունքներ եյին արտահայտում նրանք ինձ հետ խոսելիս։

«Նստի՛ր լսո, դուրբան քեզ», — այս խոս-

քերով գիմեց ինձ Փարիշանն առաջին անգամ։
Զինեն ելի ամաչկոտ դլուխը չեր բարձրաց-
նում, իսկ Զարեն միշտ նայում եր ինձ ու
ժպառում։ Յես ել չափեց շատ ուրախ եյի...

Յերբ նրանք զնացին, մայրս պատմեց ինձ,
վոր Զմշիդն եր նրանց ուղարկել մեր տունը։
Դատարանից յերբ վերադարձն եր նա, հուզ-
մունքից լաց եր յեղել ու հետո ստիպել մորն ու
քրոջը, վոր զան մեղ մոտ։

— Զմշիդը շատ և տանջվում քեզ համար,
բորբոտ ջան¹, ափսոս և նա, լառ, չթողնենք,
վոր մեր նամուսը շանը նետիի, — համոզում եր
մայրս գլուխս շոյելով։

— Նա յե իմ փեսան, ասում ե, Խաջե,
ի՞նչ ել ուզում և լինի, դու պետք և մեր պատ-
վին դեմ չգնաս։ Յես ամաչեցի մորս պատաս-
խանել, ծիծաղեցի ու կախեցի գլուխս։

Այդ յերեկո մայրս ինձ զոռովիլ Զմշիդենց
տունը տարավ։ Յես ճնշվում եյի, Զմշիդի
մոտ գնալ չեյի ուզում ու շատ ել կարմրեցի
յերբ նրանց տունը մտանք։ Բայց Զմշիդն ա-
վելի շատ շփոթվեց։ Նրա կարմիր, սարեցի
հոգվի այտերը հալիքած մետաղի գույն ստա-
ցան։ Նու խուսափում եր մորս ու իմ հայացք-
ներից։ Ամենից առաջ յես զրույց սկսեցի Զի-
նեյի հետ մեր մասին, մեր ժողովների մասին,
կոմորմոլի մասին։ Զինեն խելոք դառան նման
լսում եր ինձ, յերբեմն ել միտքն ուրիշ բա-
նով զրաղված։ Իսկ Զմշիդը լուր եր, նա գերի

1 Գառնուկ ջան — փաղաքական խռոք եւ

յեր դարձել իր մտածմունքներին ու ամփոփվել եր իր մեջ։ Ամեն անդամ, յերբ սպատահարար մեր հայացքներն իրար եյին հանդիպում, ինձ թշվում եր, վոր նա ուզում եր ասել. «կոչման եմ», բայց չի վստահում։ Պարզ ասած, հասմիկ, շատ ել գեղեցիկ և Զմշխդն ու խելոք։ Դեհ ի՞նչ արած, տղային պետք և լսեր, վորովհետեւ դեռ դասակարգային դիտակցություն ու թշնամանք չուներ։ Այն եյի ասում ուրեմն, վոր նա վոչ վոքի հետ չեր խոսում, ըուռ եր, նա մտքում յերմի նոր եր չափում՝ թե ո՞վ և բարում՝ գոմերում Զայնեյի ու իր հովիվ ընկերնվագի, գուցե մտաբերում եր բոլորը, սարում՝ գոմերում Զայնեյի ու իր հովիվ ընկերների թավալումները...

Կամ հիշում եր գուցե, վոր աղալում, վոչ խարների մեջ, լուսնյակ գիշերին տեսել եր Զայնեյին իր հովիվ ընկերոջ թեերի վրա, կամ գուցե հիշում եր ձորից հանած ընկեցիկի փոքրիկ դանդը շան բերնում... և համոզվում եր, վոր ինքը սխալ և յեղել աղաների ընտանիքների այլանդակություններն ու բարոյական անկումը տեսնելով հանդերձ, պահել իր մեջ նրանց նկատմամբ յեղած համակրանքը։

Եկրկար խոսեցինք։

Բայց ելի չեմ հիշում, թե ինչպես յեղավ, վոր յես ու Զմշխդը խոսեցինք իրար հետ։ Նո ինչքա՞ն եր փոխվել... Աղայի մասին զզվանքով եր խոսում։ Մենք խոսում եյինք իրար

Հետ առանց իրար դեմքի նայելու, յերբ նայում եյի նրա աչքերին, նրա դեմքը վայրկյանալես շիկանում եր:

Մենք առաջվա նման մտերմացանք:

Իսկ այսոր դնացի, խնդրեցի վոր ժողով պան: Փարիշանն անախորժություն զգաց, բայց վորովհետեւ շատ խնդրեցի, խաթրս չկուրեղու համար անվատահ ու ամաչկոտ հետս ժողով յեկավ, յերբ մորս ել բերեցի: Յեթե իմանաս ինչքան և ուրախացել սիրտս, Հասմիկ, թվում և ինձ, թե ամբողջ աշխարհն և խորհրդային դարձել և վոչ թե մի յերկու յեղդի կին են ժողով յեկել, վոչ թե մի յերկու կին են կանանց կաղմակերպության մեջ մտել... Մի քանի հոգ յեն, բայց մեծ ե, մեր հաղթանակը մեծ ե: Ուրիշ անդամ յե՞րբ և քուրդ հովվուհին հասարակական կյանք մտել... — Վերջացը Խաջեն: Բարձր վոգեորսությունից թեավորվել եր նա:

— Այս բոլորն անհավատալի յե թվում ինձ, յերազ, — ելի կրկնեց նա:

— Կեցցես, Խաջե, կեցցես. տեսնում ես ինչպես անվհատ աշխատանքի արդյունքն լինում և հաղթությունը: Հիշում ես մեծ մարդկանց ասած խոսքերը, վոր յես կրկնում եյի միշտ. «Չարունակիր քո նանապարհը և քող մարդիկ խոսեն, ինչ կուզեն», իսկ դու յերբեմբն հուսալքովում եյիր, յերբեմն վատատես եյիր հաղթանակի նկատմամբ. — Հասմիկը հացել եր Խաջեյի վոգեվորված աշխատանքով: Խաջեն տարվեց մտածմունքով ու լուռ քայլում եյին նրանք:

— Ուրեմն դու Զմշկողի հետ ամուսնանալու յես, չե՞՞ , քանի վոր վերակենդանացել և ձեր սերը...

Խաջեն ծիծաղելով Հասմիկի ուսին խփեց ու անպատասխան թողեց նրա հարցը:

— Իսկ Մուշեղին ի՞նչ պատասխանեցիր, ելի հարցրեց Հասմիկը:— Խաջեն լուռ եր:

— Իսկապես Խաջեն, հետաքրքիր ե, կըրկենեց Հասմիկը: Այս անգամ մի քանի վայրկյանի մոտահոգ լուռթյունից հետո Խաջեն պատասխանեց:

— Հասմիկ, չե՞՞ վոր յես միշտ նրան ել, քեզ ել ասել եմ, վոր դեն նետի իր այդ մոքերը, մոռանա, յես այնքան ել սերի-մերի գերի չեմ, վոր նպատակս, աշխատանքս մոռանամ, ինձ այսպես եր հարկավոր վարվել...:

— Բայց Մուշեղը, կարծես հուսով ե, Խաջեն:

— Դու ասա՛ նրան, Հասմիկ ջա՛ն, համողիր, վոր աշխատի, գործ անի անհարկավոր թեթևությունը թողնի, ինչ անհպատակ ջահելություն ե անում, ի՞նչ ե հարկավոր, ախարնա դիտի, վոր յես ուրիշի յեմ սիր...

— Լա՛վ, Խաջեն ջան, կխոսեմ:

— Դեռ առաջին անգամ, յերբ նա այդ մասին ասաց ինձ, յես խնդրեցի, վոր ել չկըրկենի, բայց մոտիկ ընկերներ եյինք, հանդիպում, խոսում եյինք և նա չուզեց մոռանալ, բայց հիմա պետք ե վոր թողնի, թողնի իր գուն-

բը—մերը», — յես դեռ ինչքա՞ն, դեռ ինչքա՞ն
ունեմ կատարելու...

— Անհող յեղի՛ր Խաջե, կտսեմ յես նրան
այդ բոլորը:

Բայժանվելիս կարծես նոր եյին նրանք ի-
րաք տեսնում, իրաք ձեռք բռնած լուռ կանգ-
նած եյին յերկար: Վերջին անդամ մեկ ել ի-
րաք աչքերի մեջ նայելով ժպտացին ու հեռա-
ցան իրարից:

Մի անդամ ել Հասմիկը թեքվեց Խաջեյին
նայելու. նա գլուխը կախ՝ արագ—արագ գնում
եր:

15

Արեւ դեռ չեր մտել: Նրա շողերը խաղում
եյին դպրոցի քարե գորշ պատերի վրա: Մեղմ
քամին սվավում եր, գարնան մոտալուս լինելն
զգացվում եր:

Զինեն ու Խաջեն դուրս յեկան խրճիթ—ըն-
թերցարանից: Յերկու ժամ եր, ինչ կոմսոմոլի-
ժողովումն եյին նրանք: Մեղմ հողմը շաշ-
յումով խփում եր Զինեյի բաց, անզնգլիկ ճա-
կատին, շարժում նրա մանրահյուս սև գիսակ-
ները: Դալրոցի դուռը հասնելով, մի քանի բո-
պե սպասեցին նրանք, մինչև Զմշիդը դուրս
յեկավ, մի դիրք ու տետրակներ թևի տակը
դրած:

Նա լիկկայան եր գնում:

Յերբ դուրս յեկավ նա, ժպտացին յերե-
քով ել ու սկսեցին քայլել: Այո՛, ժպտում եյին,

միշտ եյին ժպտում նրանք, շատ եյին ու-
րախ.. Գարնանամուտ եր: Մարտ ամիսը:
Գարունն ոկտվել եր նաև քուրդ հովիվների ու
հովվուհիների մեջ և այդ գարնան ծիծեռնակ-
ներից եյին քայլող յեռյակի անդամները՝
Խաջեն, Զմշիդն ու Զինեն: Փողոցում մեղմ
քամին չնկշկում եր, հալված ձյունը չփչփում
նրանց վոտքերի տակ...



Փոխանակ տուն զնալու, թեքեցին նրանք
իրենց ճանապարհը մի այլ փողոցով: Գնում
եյին նրանք դանդաղաքայլ ու զրուցում: Գը-
նում եյին և աննկատելիորեն մոտեցան Նադո-
յի տանը: Առաջինը Խաջեն նկատեց Նադոյին
ու ծերուկ Խուղոյին դռանը կանգնած: Նրանք
զրուցում եյին՝ յերգում հազար ազամ յերգած
յերգը. «Դավրանը վատ դավրան ե, դռւնյան
խըրաբ ե յեղել, մեծամեծ մարդիկ պատիւ-
կունեն»:

Զայնեն կանգնել եր նրանց առաջ հլու-
քերու նման: Պլիկներն ու զնդիկները ծածկել
եյին նրա ճակատը. կարմիր, դեղին, կապույտ
ու գույնդգույն հուլունքները կախվել եյին
պարանոցից, իսկ դարաֆիլը հեռվից յերեւում
եր նրա քթի տակ:

Աղան ու Խուղոն յերբ նկատեցին քայլող
յեռյակին, վոր հեղնական ծիծաղով իրենց եր
նայում, մտան տունը, ինթվինթալով, հայհո-
յելով աշխարհին:

Խաջեն ու Զմշիդը լսելիք ձայնով ծիծառեցին, իսկ Զինեն ժաղիտը յերեսին արագ քայլերով տունը մտնող Զայնեյին եր նայում անձայն ծիծաղով:

Արդեն տուն եյին վերադառնում նրանք, յերբ աղայի կնոջը հանդիպեցին, վոր փողոցով դեմ ու դեմ դեպի նրանց եր գալիս: Խանումը նկատելով Խաջեյին, վոր ուղիղ իրեն եր նայում, արագացրեց իր քայլերը, նրանցից ավելի շուտ խուսափելու համար:

— Բարո՞վ յեկար, խանը՝ մ, — զիմեց նրան Խաջեն այն կծու հեգնությամբ, վորով նա յեր Սայրեյի՝ Խաջեյի մոր հետ խոսում Արագածի բարձրունքներում յեղած ժամանակ, յերբ դուրս եր անում նրան որայից:

Խանումը խեթ-խեթ նայեց Խաջեյին, վինթփնթաց, ու «կյավրե խուլի բա» — բառերը մեքենայորեն արտասանելով՝ արագ հեռացավ: Նրա յետեկոց յերեքով ել բարձրաձայն ծիծաղում եյին ու արհամարանքով նրան նայում, յերբ փախչելու չափ արագ գնում եր նա:



«Յերեք հարյուր ոռոքի տվեց հա՞», տասնուհինդ վոչխա՞ր» — հարցնում եր Խաջեն ինքնիրեն:

Քամին սուլում, շնկչնկում, սարսոեցնում եր կիսահալ բյուրեղ ծյունը:

Յերեկոյանանում եր: Մարտի դարնանամուտ յերեկոներից եր:

Կրկին վերհիշելով իր անցած ամբողջ ճա-
նապարհը, իր զրկանքների, անարդվելու, պայ-
քարի և հաղթելու պատմությունը, Խաջեն
բարձր ճայնով արտասանեց. ՇԱՐՈՒԽՆԱԿԻՒՐ
ՔՈ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՅԵՎ ԹՈՂ ՄԱՐԴԻԿ ԽՈՍԵՆ,
ԽՅՆՉ ԿՈՒԶԵՆ:—Հետաքրքրվող հայացքով նը-
րան նայեցին Զմշխդն ու Զինեն.

Նա մտածում եր:

Տուն վերադարձան նրանք, վորապես մտք-
տից վերադարձող, թշնամուն հաղթած ռազ-
միկներ:

ՅԵՎ նրանք առաջիններն եյին, վոր պաշ-
խարային հնադանդությունից յենելով, մար-
տական հանգղնությամբ եյին համակվել:

Գարնանամուտ անդորր յերեկո յեր, այն-
պես հանգիստ ու խաղաղ, ինչպես Զմշխդի ըզ-
գացմունքներն հանգստացել ու խաղաղել եյին։
Խաղաղել եյին Զմշխդի հոգեմաշ մտածումնե-
րը. բայց նրա սրտում արդեն լափ եր տալիս
թշնամանքի, ատելության առաջին ալիքը։

Գարնանամուտ անդորր յերեկո յեր...

1931 թ.

ՅԵՐԵՎԱՆ



ԳԱԱ Հիմնարար գիլ. Գրադ.



FL0045212

ԳԽԸ 2 ԱՐԿ.

(603)

A 1
8357



Րաչիա Կոչար
ՎԱԳԱՆ ՎԱՐԴՅԱՆ
Գլու ՀՀ Արմենիա, Երևան

